

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3 (45)

2009 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

Դասիչ՝ 77771

Տպագրական 5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

15.11.2009

Հանձնված է տպագրության

15.12.2009

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 3 (45)
2009 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь

Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92

5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 15.11.2009
Подписано к печати 15.12.2009

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆՔ

Գագիկ Գրիգորյան

ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ 8

Владислав Красински

УЧАСТИЕ ОРГАНИЗОВАННЫХ ПРЕСТУПНЫХ ГРУПП В ИЗБИРАТЕЛЬНЫХ КАМПАНИЯХ..... 18

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Սերգեյ Մարաբյան

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑԻ ՀԻՄՔԸ.....23

Միսակ Մարկոսյան

ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ37

Քրիստին Արսենյան

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ43

Давид Тумасян

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСПОЛНЕНИЯ ЛИШЕНИЯ СВОБОДЫ ЖЕНЩИН ПО ДЕЙСТВУЮЩЕМУ УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА49

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նորա Կարապետյան

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԾԱՆՐԱԲԵՌՆԿԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....57

Հեղինե Հախվերդյան

ՎԱՐՑԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.....68

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արման Սարգսյան

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ74

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

Սոնա Թևանյան

ԿՈՆՑԵՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ82

Արսեն Մարտիրոսյան

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀՈԳԵԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԵՑՄԱՆ ՀԻՄՔ92

Գոռ Ենգիբարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՐՏՆԻՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ100

ՄԵՐ ՀՈՐԲԵԼՅԱՐԸ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության վարչությունը, «Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդը ջերմորեն շնորհավորում են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Տարիել Կարապետի Բարսեղյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ և վաստակաշատ մանկավարժին ու առաքինի մարդուն ցանկանում քաջառողջություն, հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:

***ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
ՀՀ իրավաբանների միության վարչություն
«Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդ***

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Միջազգային գիտագործնական կոնֆերանս.
«Քաղաքացիական օրենսդրության զարգացումը
ԱՊՀ անդամ պետություններում»**

(25 սեպտեմբերի, 2009թ., ք. Երևան, ԵՊՀ)

2009 թվականի սեպտեմբերի 25-ին Երևանի պետական համալսարանում կայացավ «Քաղաքացիական օրենսդրության զարգացումը ԱՊՀ անդամ պետություններում» միջազգային գիտագործնական կոնֆերանս: Այն անցկացվում էր Անկախ պետությունների համագործակցության խորհրդարանական վեհաժողովի հովանու ներքո: Կազմակերպիչներն էին Իրավաբանների միջազգային միությունը, Հայաստանի Հանրապետության իրավաբանների միությունը և Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների դատավորները, ինչպես նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ, ասպիրանտներ և մագիստրոսներ: Կոնֆերանսին զեկուցումներով հանդես եկան Ռուսաստանի Ղաշնուքյան նախագահի իրավական հարցերով խորհրդական, ՌԳԱ թղթակից-անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Ֆ. Յակովլևը, Բելառուսի Հանրապե-

տության նախագահի աշխատակազմի պետաիրավական գլխավոր վարչության պետ Վ.Ա. Դորոշկևիչը, Ուկրաինայի Յարոսլավ Մուդրիի անվան Ազգային իրավաբանական ակադեմիայի քաղաքացիական իրավունքի ամբոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Լ. Յարոցկին, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանը, ինչպես նաև ԵՊՀ էկոլոգիական իրավունքի կենտրոնի տնօրեն, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Բ. Իսկոյանը: Չնայած կոնֆերանսի աշխատանքներին անձամբ չէր կարողացել մասնակցել, սակայն «Քաղաքացիական օրենսդրության զարգացման հեռանկարները Ղազախստանի Հանրապետությունում» թեմայով զեկուցում էր ներկայացրել նաև Ղազախստանի Հանրապետության գերագույն դատարանի դատավոր Բ.Ա. Ժակուպովը:

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ իրավաբանների միության նախագահ, իրավաբանների միջազգային միության փոխնախագահ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից-

անդամ, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյանը: Իր ելույթում նա ընդգծեց քաղաքացիական օրենսդրության ընդհանրապես, և ԱՊՀ երկրների մոդելային քաղաքացիական օրենսգրքի հիման վրա ընդունված քաղաքացիական օրենսգրքերի, մասնավորապես, կարևորությունը հետխորհրդային տարածաշրջանում շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման գործում: 1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքը կրել է նշանակալից փոփոխություններ, որոնց մեծ մասը օբյեկտիվորեն թելադրված է եղել երկրում տեղի ունեցած փոփոխություններով: Դրա հետ միասին՝ օրենսգրքի որոշ փոփոխություններ, ինչպես արդարացիորեն նշեց ելույթ ունեցողը, կրել են իրավիճակային բնույթ՝ չարտահայտելով կյանքի օբյեկտիվ պահանջները և, հակառակը, չնայած հրատապ անհրաժեշտությանը չեն ձևավորվել մի շարք կարևորագույն ինստիտուտներ ու նորմեր:

Այս առումով՝ պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյանն ընդգծեց քաղաքացիական օրենսդրության համակարգային վերանայման, նպատակների հստակ սահմանման և համապատասխան հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը:

Ողջույնի խոսքով կոնֆերանսի մասնակիցներին դիմեց ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Յու. Մկրտումյանը, որը քաղաքացիական օրենսդրության կատարելագործման ուղղությունները պայմանականորեն տարանջատեց տեսականից՝ առաջարկելով ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ մշակելու համար ստեղծել ԱՊՀ երկրների տեսաբան և պրակտիկ իրավաբանների առանձին խմբեր, որոնցից առաջինը կզբաղվի առանձին պետությունների քաղաքացիական օրենսգրքերի բարեփոխման խնդրով, իսկ երկրորդը՝ գործնականը, էական դեր կունենա ԱՊՀ երկրների բարձրագույն դատական աստիճանների գործունեությունը և հետևաբար դատական պրակտիկան (դատական նախադեպը) կատարելագործելու ուղղությամբ: Ա.Յու. Մրտումյանը մանրամասն ներկայացրեց ՀՀ վճռաբեկ դատարանի դերը արդա-

րադատության իրականացման, օրենքի միատեսակ կիրառության և միասնական դատական պրակտիկայի ապահովման գործում՝ 2005թ. սահմանադրական բարեփոխումների և Եվրախորհրդում ՀՀ անդամության ու նրա մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական համակագին միանալու համատեքստում:

Կոնֆերանսի հիմնական թեմաների արդիականությունը և ԱՊՀ երկրների քաղաքացիական օրենսդրությունների հետագա ներդաշնակեցման անհրաժեշտությունն իր ելույթում առանձնակի ընդգծեց ՀՀ նախագահի իրավական հարցերով օգնական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ.Ս. Կոստանյանը:

Իր ելույթում ՌԴ նախագահի իրավական հարցերով խորհրդական, պրոֆեսոր Ռ.Ֆ. Յակովլևը ներկայացրեց ՌԴ քաղաքացիական օրենսդրության զարգացման հայեցակարգի հիմնական դրույթները: Նա մասնավորապես նշեց, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքը արդեն փորձություն է անցել ժամանակի առումով, կիրառման լայն պրակտիկայով (նախևառաջ դատարանների կողմից) ու օբյեկտիվ դոկտրինալ գնահատականով և այդ պատճառով դրա նոր խմբագրության պատրաստման կարիքը չկա. անհրաժեշտ է արդիականացնել օրենսգրքը և, նախևառաջ, դրա ընդհանուր մասը: Անհրաժեշտ է քաղաքացիական օրենսգրքում կատարել համակարգային բնույթի երկու սկզբունքային փոփոխություն. դա, առաջին հերթին, կորպորատիվ հարաբերությունների ոլորտն է, մասնավորապես՝ իրավաբանական անձի պատասխանատվության հետ կապված հարցերն են իրավաբանական անձանց միասնական ռեստորում տվյալների ժամանակին ու պատշաճ թարմացման համար և, երկրորդը կապվում է իրային իրավունքի ինստիտուտների հետ: Հայեցակարգի հիմնադրույթները ենթադրում են քաղաքացիաիրավական կարգավորման բարոյական սկզբունքների ամրապնդում, քաղաքացիական օրենսդրության մեջ բարեխղճության սկզբունքի, մինչպայմանագրային պատասխանատվության ինստիտուտի ամրագրում. դրանք ուղղված են քաղաքա-

ցիական օրենսդրության համակարգմանը և, հետևաբար, նախատեսում են հրաժարում քաղաքացիական օրենքների «եռամակարդակ» համակարգից: Հայեցակարգը նախատեսում է այլ դիրքերից դիտարկել քաղաքացիական իրավունքում մասնավոր և հանրային շահերի հարաբերակցությունը, օրինակ՝ հրաժարվել բռնագրավման բնույթի սանկցիաներից: Պրոֆեսոր Ռ.Ֆ. Յակովլևը հատկապես ընդգծեց, որ հայեցակարգի իրացման ընթացքում քաղաքացիական օրենսգրքի և քաղաքացիական օրենսդրության մյուս ակտերի փոփոխությանն ուղղված քայլերը քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար իրենց իրավունքներն ու պարտականություններն իրականացնելիս չպետք է ստեղծեն չարդարացված խոչընդոտներ և բարդություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության վիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ զեկույց ներկայացրեց ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանը: Իր ելույթում նա նույնպես քննադատեց ԱՊՀ երկրների մոդելային քաղաքացիական օրենսգրքի հիման վրա ընդունված ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքը՝ նշելով նրա առավել էական թերությունները: Նա ներկայացրեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այն ինստիտուտների մանրակրկիտ վերլուծությունը, որոնք լրամշակման կարիք ունեն: ՀՀ քաղաքացիական օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկեց հիմնարար փոփոխություններ կատարել ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքում, որը կարգավորում է գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները ՀՀ-ում:

Բելառուսի Հանրապետության նախագահի աշխատակազմի պետաիրավական գլխավոր վարչության պետ Վ.Ա. Դորոշկևիչը հանդես եկավ «Սեփականության իրավունքի և այլ քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանությունը» թեմայով զեկուցումով: Իր ելույթում Վ.Ա. Դորոշկևիչը անդրադարձավ Բելառուսի Հանրապետության գործող քաղաքացիական օրենսդրության վիճակի վերլուծությանը՝ առանձնացնելով քաղաքացիական

օրենսգրքի բարեփոխման հիմնական ուղղությունները և կարևորեց ԱՊՀ երկրների քաղաքացիական օրենսդրության հետագա զարգացման ու ներդաշնակեցման անհրաժեշտությունը:

«Քաղաքացիական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգը Ուկրաինայում. կատարելագործման և միասնականացման ծրագիր» թեմայով զեկուցում ներկայացրեց Ուկրաինայի Ազգային իրավաբանական ակադեմիայի քաղաքացիական իրավունքի ամբոնի վարիչ, Ուկրաինայի իրավական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Վ.Լ. Յարոցկին: Նա մանրամասն ներկայացրեց ԱՊՀ երկրների մոդելային օրենսգրքի հիման վրա ընդունված Ուկրաինայի քաղաքացիական օրենսգրքի կառուցվածքը և, ընդհանուր առմամբ, դրական գնահատելով Ուկրաինայի քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված իրավական կարգավորման կառուցակարգը, նշեց քաղաքացիական օրենսգրքում միայն մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին: Բանավեճի ընթացքում պրոֆեսոր Վ.Լ. Յարոցկին ժխտեց Ուկրաինայի գործող քաղաքացիական օրենսգրքում համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը:

Ամփոփելով կոնֆերանսի արդյունքները՝ մասնակիցները արտահայտվեցին նման միջոցառումներ պարբերաբար անցկացնելու անհրաժեշտության մասին՝ ընդգծելով ԱՊՀ երկրների քաղաքացիական օրենսդրության ներդաշնակեցման և միասնականացման նպատակով քաղաքացիաիրավական կարգավորման ոլորտում բացահայտված հիմնահարցերի ու դրանց լուծման փորձի վերաբերյալ տեղեկատվության մշտական փոխանակման կարևորությունը: Կոնֆերանսի մասնակիցները հավանություն տվեցին ԱՊՀ տարբեր երկրներից գիտնական-տեսաբանների և պրակտիկ իրավաբանների աշխատանքային խմբի ստեղծման գաղափարին, որը պետք է մշակի Մոդելային քաղաքացիական օրենսգրքի անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ և ապահովի առանձին երկրների քաղաքացիական օրենսդրության կատարելագործման աշխատանքների համակարգումը:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

**ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ**

Գագիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ նախկինության ակադեմիայի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Քաղաքականություն (հուն.՝ politike) բառը թարգմանաբար նշանակում է «պետության կառավարման արվեստ»¹: Ժամանակակից քաղաքականագետները քաղաքականությունը սահմանում են որպես հանրային շահերի նկատմամբ սոցիալական խմբերի գործունեություն, ինչպես նաև հասարակական հարաբերությունների կարգավորման վարքագծային մոդելների ու իմաստաստների համակցություն, որը ստեղծում է ինչպես իշխանական հսկողություն, այնպես էլ դրան տիրանալու համար մրցակցություն: Ինչպես նշում է Ա.Պանարինը, քաղաքականությունը ռիսկային գործունեության ձև է, որի ընթացքում մասնակիցները միմյանց հետ վիճարկում են իշխանության բնույթի և վարքագծի սահմանման հնարավորությունը²...: այն սոցիալական տարբեր խմբերի կողմից իշխանությունը բաժանելու ոլորտի սահմանադրաիրավական նորմերին ենթակա գործընթաց է³:

Քաղաքականության համար կարևոր են ստույգ հաշվի առնել հանրության նյութական և հոգևոր զարգացման օբյեկտիվ պահանջներին նրա համապատասխանությունը, պետության իրական տնտեսական հնարավորությունը, ազգային առանձնահատկությունները, քաղաքական և աշխարհագրական պայմանները⁴, պաշտոնատար անձանց գիտականության մակարդակը, ինչպես նաև առկա խնդիրները ժամանակին և ամբողջական լուծելու

նրանց կարողությունը, կարևոր քաղաքական որոշումներ կայացնելիս գիտական ստույգ վերլուծության վրա հիմնված մոդելավորման ժամանակակից մեթոդների օգտագործումը: Են 1996թ. սեպտեմբերի 5-ի «Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը փոփոխվող Եվրոպայում»⁵ R/96/8 ցուցումների 6-րդ կետում նշվում է, որ հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը մշակելիս կառավարությունը պետք է ուշադրություն դարձնի այդ քաղաքականության իրականացմամբ շահագրգիռ մասնագետների և գիտնականների կարծիքներին:

Ներպետական(ազգային)⁶ քաղաքականությունը հասարակությանը վերաբերող կարևոր խնդիրների լուծմանը միտված պետության գործունեության ուղղություն է: Այս կամ այն հարցը քաղաքական է, եթե վերաբերում է հասարակությանը:

Իրավակարգը, հանցավորության վիճակը, անձի անվտանգությունը վերաբերում են ողջ հասարակությանը և պետությանը, հետևաբար պահանջում են պետական և հանրային հատուկ միջոցների ընդունում, այսինքն՝ քրեական քաղաքականության իրականացում⁶:

Որպես սոցիալական քաղաքականության ուղղություններից մեկը՝ քրեական քաղաքականությունը հանցավորության դեմ պայքարի պետական քաղաքականության ոլորտ է: Խոսքը վերաբերում է այդ յուրահատուկ ոլորտի պետական գործունեության ուղղությանը, որում սահմանվում են հանցավորության դեմ պայքարում պետության և նրա մարմինների գործունեության բովանդակությունը, խնդիրները, ձևերը⁷: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում է, որ ՀՀ կարևորում

է իրավապահպանության բնագավառի ռազմավարական բարեփոխումները, որոնք ուղղված են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովմանը, հակաիրավական ոտնձգություններից պետության, հասարակության և անհատի պաշտպանությանը: Քրեական քաղաքականությունը հասարակության հայելին է, որը կոչված է հավասարակշռելու և հանցավոր ոտնձգությունից պաշտպանելու հասարակությանը⁸:

Հանցավորությունը քանակական և որակական փոփոխությունների է ենթարկվում⁹, հետևաբար քրեական քաղաքականության տեսությունը կոչված է ուսումնասիրելու այդ գործընթացը, պարզաբանելու օրինաչափությունները, այդ ոլորտի կառավարման արդյունավետ մեթոդների մշակումը, ինչպես նաև առաջարկել ժամանակակից պայմաններում իրավակարգի ապահովման և հանցավորության հակազդման համարժեք մոդել¹⁰:

Քրեական քաղաքականություն հասկացությունն առաջին անգամ իր՝ «Versuch einer Criminaljurisprudenz des Koran» աշխատության մեջ 1804 թ. օգտագործել է հայտնի գերմանացի քրեագետ Անսելմա Ֆոերբախը¹¹: Քրեական քաղաքականության գիտության ակունքներում են կանգնած XIX դարի հանճարեղ իրավաբաններ է.Ֆերրին, Ֆ. Լիստը, Ա.Պրինսը:

Ռուսաստանում այս ոլորտին անդրադարձել են XIX դարի երկրորդ կեսին: Քրեական քաղաքականության բովանդակության մասին ըստ էության խոսում է Վ. Դուխովսկին իր «Քրեական իրավունքի խնդիրները» (1872) հոդվածում: Ըստ հեղինակի՝ քրեական իրավունքի պարտականությունն է հանցավորության պատճառների ուսումնասիրությունն ու դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցների մշակումը, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցների ապահովումը և սոցիալական ռեֆորմի անհրաժեշտության մասին նշումը:

Ըստ Ի.Ֆոյինիցկու (1889) պետությունը իրավակարգի պաշտպանության և հանցա-

վորության դեմ նպատակամղված պայքարի ցուցումներ պետք է մշակի օրենսդրի համար:

Նմանօրինակ ձևակերպումները, որոնք արտացոլված են Վուլֆերտի, Ն.Տագանցկի, Ն.Սերգենսկու, Մ.Գերնետի, Վ.Եսիպովի, Ա.Պրինտկովսկու, Ն.Պոլյանսկու գիտական աշխատություններում, ընդլայնում են դրա սահմանները՝ գիտական շրջանակներում վեճերի տեղիք տալով:

Քրեական քաղաքականության վերաբերյալ առաջին ինքնուրույն աշխատությունները պատկանում են Ա.Գոգելին և Մ.Չուբինսկուն¹²:

Ա.Գոգելը քրեական քաղաքականությունը սահմանում է հանցավորության դեմ պայքարի ռեպրեսիվ և կանխարգելիչ միջոցների մասին ուսմունք:

Մ.Չուբինսկու սահմանմամբ՝ քրեական քաղաքականությունը քրեական իրավունքի ճյուղային գիտություններից է, որը կոչված է սոցիալական ռեֆորմների և ցուցումների մշակման ճանապարհով՝ ստեղծել քրեական արդյունավետ օրենսդրություն, առավել լավ վիճակում պահել պետությունում քրեական արդարադատությունը¹³:

Տվյալ ժամանակաշրջանում ձևավորվեց այն տեսակետը, համաձայն որի՝ հանցավորության դեմ պայքարի համար, քրեաիրավական դրոգմաներից բացի, անհրաժեշտ են նաև այլ բաղադրիչներ, այդ թվում նաև քրեադատավարական¹⁴:

Ա.Մարցկի ձևակերպմամբ՝ քրեական քաղաքականությունը քրեական օրենսդրությունում և դրա կիրառման պրակտիկայում հանցավորության դեմ պայքարի նպատակները, միջոցները և ուղղություններ են¹⁵:

Ա. Գերցենզոնի ձևակերպմամբ՝ քրեական քաղաքականությունը ներառում է այն ամենը, ինչն ուղղակի կամ անուղղակի ուղղված է հանցավորության դեմ պայքարին: Մեկնաբանելով քրեական քաղաքականություն հասկացությունը՝ նա այդ ոլորտում ներառում էր ինչպես հատուկ միջոց-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ները(քրեաիրավական, քրեադատավարական, կրիմինոլոգիական, ուղղիչ աշխատանքային¹⁶, քրեագիտական), այնպես էլ զուտ սոցիալական բնույթի միջոցները(տնտեսական, գաղափարական, բժշկական և այլն)¹⁷:

Ա.Բորոդինի, Ա.ժալինսկի, Ն.Իսմաիլովի, Ն.Ստրուչկովի¹⁸ ձևակերպմամբ՝ քրեական քաղաքականությունը կազմում են միայն գիտության տվյալների վրա հիմնված հանցավորության դեմ պայքարի հատուկ միջոցները:

Այս համատեքստում առավել ակնառու է Ն.Ջագորոդնիկովի և Ն.Ստրուչկովի կողմից սահմանված հասկացությունը¹⁹, որի հիմնաքարը հանցավորության դեմ պայքարի ելակետային պահանջներն են, այսինքն՝ սկզբունքները: Սահմանման համաձայն՝ որպես խորհրդային քաղաքականության ուղղություն դրանում ձևավորվում են հանցավորության դեմ պայքարի ելակետային պահանջները, այդ թվում նաև նյութական, դատավարական, կատարողական քրեական իրավունքի նորմերի ստեղծումն ու կիրառումը(արաքների քրեականացումը և անհրաժեշտության դեպքում դրանց ապաքրեականացումը), ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի պետական հարկադրանքի թույլատրելի շրջանակի սահմանումը:

Քրեական քաղաքականության համանման սահմանում է տվել Ն.Բեյլաեր: Հեղինակի կարծիքով՝ քրեական քաղաքականությունն իրականացվում է հանցանք կատարած անձանց նկատմամբ պատժի կիրառմամբ կամ դա վարչական կամ հասարակական ներգործության միջոցներով փոխարինելով, ինչպես նաև պատժի կիրառման սպառնալիքով հանցագործությունների կանխման ճանապարհով²⁰:

Իրավաբանական գրականության մեջ առկա են նաև քրեական քաղաքականության այլ սահմանումներ: Այսպես օրինակ,

Ի.Իսմայիլովը քրեական քաղաքականությունը սահմանում է որպես քաղաքական ղեկավարության կողմից իրականացվող պետական գործունեության ուղղություն, որն արտահայտում է կոնկրետ որոշումների կայացումն ու իրականացումը, հանցավորության դեմ պայքարի նպատականշված միջոցները, այդ համակարգի կազմակերպումը, արդյունավետ գործունեության ապահովումը, գաղափարական, իրավական, տեղեկատվական և այլ հենքի վրա դրա զարգացումը և այլ հանրային համակարգերի հետ դրա համագործակցությունը²¹:

Ա.Բոսխոլովի կարծիքով քրեական քաղաքականությունը համապատասխան իրավական ակտերում արտահայտված հանցավորության դեմ պայքարի պետական քաղաքականությունն է, գիտական տեսությունը և քաղաքական, հասարակագիտական, իրավական համապատասխան գիտելիքների սինթեզը, հանցավորությանն ու այլ իրավախախտումներին ակտիվ և անկոտրում հակազդելու սոցիալական գործունեության հատուկ տեսակը²²:

Վ.Ռևինը քրեական քաղաքականությունը սահմանում է որպես հանցավորությունից հասարակության պաշտպանության պետության նպատականշված և ակտիվ գործունեություն, հանցավորության մակարդակի սահմանափակմանը և կայունացմանը ուղղված արդյունավետ ռազմավարության մշակում ու իրականացում²³:

Յա.Ստախովի կարծիքով՝ քրեական քաղաքականությունը պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող հանցավորության դեմ պայքարի պետական ծրագիր է²⁴:

Ի.Ջվեչարովսկու կարծիքով՝ քրեական քաղաքականությունը պետության կողմից մշակված և օբյեկտիվ օրենքների վրա հենված հասարակության զարգացումն է, վերջինիս կողմից հատուկ լիազորված մարմինների և կազմակերպությունների գործունեություն, որը կոչված է հանցավոր ոտձգություն կատարող անձի նկատմամբ

պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառմամբ պաշտպանելու մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հասարակության և պետության շահերը, ինչպես նաև իրավական դաստիարակությունը, պատժի կիրառման սպառնալիքով, անհատական ու սոցիալ-կրիմինոլոգիական բնույթի պրոֆիլակտիկ միջոցների կիրառմամբ՝ հանցավորության կանխարգելումը²⁵:

Ինչ վերաբերում է քրեական քաղաքականության կառուցվածքին, ապա Ս.Վ. Բորոդինը կողմնակից է քրեաիրավական, քրեադատավարական, դատական, ուղղիչ-աշխատանքային քաղաքականություն տերմինի կիրառմանը՝ իհարկե նշելով, որ դրանք քրեական քաղաքականության բաղկացուցիչ մասերն են, քանզի յուրաքանչյուրի առարկան քրեական քաղաքականության առարկայի անքակտելի մասն է²⁶:

Գ.Լեսնիկովը քրեական քաղաքականությունը սահմանում է որպես քաղաքական, քաղաքաիրավական պատվիրանների և սկզբունքների, իրավական և այլ սոցիալական նորմերի համակարգ, գիտական հենքով ստեղծված կրիմինոլոգիական ծրագիր, որը համատեղ իրականացվում է պետության և քաղաքացիական հասարակության սուբյեկտների կողմից՝ ապահովելու իրավակարգը, անձի և, որոշ դեպքերում, ազգային անվտանգությունը²⁷:

Օ.Գրեբցովն այն սահմանում է որպես քաղաքաիրավական հարաբերությունների, իրավաբանական նորմերի, գաղափարների, հայացքների համակարգ, որը հանցավորության կանխման նպատակով իրականացվում է դրա սուբյեկտների գործունեության ուղղություններով, ձևերով և եղանակներով²⁸:

Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Կլաուս Սեսսարը քրեական քաղաքականությունը սահմանում է որպես հանցավորության կանխման նպատակով քրաիրավական միջոցներով հանցավորության

արդյունավետ հսկողություն, որը կոչված է հանցանք կատարած անձին ուղղելու և օրենքների պահպանմանը նպաստելու²⁹:

Ուսումնասիրելով քրեական քաղաքականության վերաբերյալ հայացքների էվոլյուցիան՝ նշենք, որ դրան բնորոշ են հետևյալ գծերը.

1. Գործառույթային ուղղվածություն՝ պայքար քրեական քաղաքականության առարկայի՝ հանցավորության դեմ: «Պայքար» հասկացությունը կիրառվում է հակասոցիալական վարքագծի առավել վտանգավոր դրսևորման՝ հանցավորության դեմ հաղթանակի ձգտման գործընթացը լուսաբանելու համար: «Հաղթանակ» հասկացությունը չպետք է տառացի մեկնաբանության ենթարկել՝ ասոցացնելով այն հանցավորության վերջնական վերացման հետ: Խոսքը դրա աճի **գսպման**, որակական նոր ձևերի ի հայտ գալու, հանցավոր վարքագծի մեթոդների կատարելագործման բացառման մասին է: Պայքարը ենթադրում է հանցավորությունը «սոցիալապես տանելի մակարդակում» պահելը, դրա նկատմամբ սոցիալական (պետական) վերահսկողությունը: Պայքարը ենթադրում է «պատերազմ հանցավորության դեմ» (war on crime) ռազմավարությունից անցում «վնասի նվազման» (harm reduction) ռազմավարությանը: Սրա մասին ասված է քրեական արդարադատության վերաբերյալ ԱՄՆ-ի Ազգային հանձնաժողովի 11-րդ ցուցումներում՝ «քրեական քաղաքականության օրակարգը «պատերազմից» փոխել «խաղաղության»»³⁰: Պայքարը ենթադրում է հակասոցիալական այդ երևույթը պայմանավորող պատճառականության գործընթացների վրա ներգործություն, այդ թվում նաև քրեական օրենքի պատվիրանները խախտող անձի նկատմամբ համապատասխան պետական հարկադրանքի կիրառում³¹: Իրավակիրառ պրակտիկական վաղուց է նման դիրքորոշման, որը ենթադրում է ոչ միայն հանցավորության կանխում, այլև նախականիում³²: Քրեական քաղաքականությունը լուծում է

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

հանցավորության դեմ պայքարի խնդիրը ինչպես պետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Որոշ քրեագետներ քրեական քաղաքականությունը սահմանում են որպես պետության ներքին քաղաքականության որոշակի դրսևորում³³: Քրեական քաղաքականությունը ուղղված է նաև այն հանցանքներին, որոնք տեղի են ունենում պետության սահմաններից դուրս, սակայն սպառնում են ազգային շահերին, քաղաքացիների, մշտապես բնակվող, բայց քաղաքացիություն չունեցող անձանց շահերին, մարդկության անվտանգությանը³⁴: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում է, որ ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են՝ պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երևույթները, գործողություններն ու անգործությունը: Այդպիսի սպառնալիքներ կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) և երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ):

2. Քրեական քաղաքականությունը հենվում է հասարակության զարգացման օբյեկտիվ պայմանների վրա: Ամենից առաջ պետք է իմանալ հասարակության էությունը, որում ապրում է կոնկրետ անձը: Էության պարզաբանումը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչ է նորմը տվյալ հասարակության համար, հետևաբար՝ որն է նորմի խախտումը: Քրեական քաղաքականությունը բացառապես տեսական կատեգորիա չէ, այն առավելապես կապված է հասարակական կյանքի այս ոլորտում տեղի ունեցող գարծընթացներ հետ: Դա հնարավոր է փաստական հանգամանքների բազայի վրա³⁵, որը ներառում է հանցավորության վիճակի և միտումների ուսումնասիրության, քրեածին հանգամանքների համակցության վերլուծության, հանցավորության կանխատեսման արդյունքները: Անհրաժեշտ տեղեկատվության առկայության պարագայում քրեական քաղաքականությունն ունակ է առաջադրելու հանցավորության դեմ պայքարի ոլորտի առաջնայնությունները և ընտրելու դրա մակարդակին, ծավալին և ձևերին համարժեք միջոցներ ու մեթոդներ³⁶:

3. Քրեական քաղաքականության նպատակը հանցավորության հնարավորինս նվազեցումն է: Հանցավորության դեմ պայքարի արդյունավետ քաղաքականությունը պետք է իրատեսական լինի և իր առջև չպետք է անհասանելի նպատակ դնի: ԵՄ 1996 թ. սեպտեմբերի 5-ի «Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը փոփոխվող Եվրոպայում» N R/96/8 ցուցումների 4-րդ կետում նշվում է, որ հանցավորության դեմ պայքարի քաղաքականության հիմնական նպատակը ոչ թե երևույթն արմատախիլ անելն է, այլ հնարավորին նվազ մակարդակում պահելն է: Դա կարող է արտահայտվել հանցավորության (դրա առանձին տեսակների) վիճակի և մակարդակի նվազագույն ցուցանիշով, երևույթի ինտենսիվության աստիճանի նվազեցումով³⁷: Քրեական քաղաքականությունն իրականացվում է ի շահ անձի, հասարակության, պետության՝ նպատակ ունենալով ձևավորելու ազատ ժողովրդավարական քաղաքացիական հասարակություն և արդարացի իրավական պետություն, հանցավոր ոտնձգությունից պաշտպանելու անձին, հասարակությանը, պետությանը, փոխհատուցելու հանցագործությունից տուժողին պատճառված վնասը: ԵՄ 1996 թ. սեպտեմբերի 5-ի «Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը փոփոխվող Եվրոպայում» N R/96/8 ցուցումների 3-րդ կետում նշվում է, որ տուժողի իրավունքների պաշտպանությունը պետք է լինի քրեական արդարադատության արմատական գործառույթը: Քրեական քաղաքականությունը պետք է պաշտպանի հասարակությունում առկա արժեհամակարգը և ապահովի դրա կայուն

գարգացումը: ՀՀ քրեական օրենսդրությունը ընդհանուր առմամբ ուղղորդված է նման արժեքների պաշտպանությանը: Քրեական քաղաքականության գաղափարախոսության հիմքում մեծմասամբ պետք է դրված լինի ՀՀ օրինապահ բնակչության շահը:

4. Քրեական քաղաքականությունն իրականացնող սուբյեկտներն ու կիրառվող միջոցները, մեթոդներն ու ձևերը հատուկ են: Քրեական քաղաքականության իրականացման սուբյեկտներն են օրենսդիր մարմինը, իրավապահպան, տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, հասարակական կազմակերպությունները, օրինապահ քաղաքացիները, որոնք պայքարում են հանցավորության դեմ՝ ՀՀ Սահմանադրության, օրենքների, այլ նորմատիվ-իրավական ակտերի, ծրագրային փաստաթղթերի հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2008 թ. մարտի 27-ի N 1039-Ն որոշման հավելվածում նշված է, որ ծրագրի նպատակը շահագրգիռ պետական մարմինների և հանրության ներգրավվածության ապահովումն է հանցավորության դեմ պայքարի ոլորտում: Առանց հասարակության ակտիվ մասնակցության և բարիդրացիական հարաբերությունների արդյունավետ չի լինի ոչ հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը, ոչ էլ քրեական արդարադատության համակարգը, հետևաբար՝ այդ քաղաքականության իրականացման կարևոր պայմաններից է բնակչության համագործակցությունը իրավապահ մարմինների հետ³⁸: Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորող հանգամանքներից մեկը իրավախախտումների դեմ տարվող պայքարում բնակչության սոցիալական ակտիվության կտրուկ նվազումն է:

Քրեական քաղաքականությունը են-

թադրում է ոչ թե ցանկացած, այլ թույլատրելի միջոցների կիրառումը՝ քրեական պատասխանատվության իրականացումը, հանցավորության կանխումը (նախական-խումը) և հանցանք կատարած անձինք քրեակատարողական, քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված եղանակներով, մեթոդներով ու միջոցներով ուղղելը: Քրեական քաղաքականության իրականացման ձևերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ օրենքները, միջազգային իրավունքի նորմերը: Քրեական քաղաքականությունն իրականացվում է քրեախրավական, քրեադատավարական, քրեակատարողական, կրիմինոլոգիական, կրիմինալիստիկական, ՕԳԳ-ի ուղղություններով: Այս ուղղությունները նյութական արտահայտություններ են ստանում օրենսդրության համապատասխան ճյուղերում: Ճյուղային օրենսդրության յուրաքանչյուր նորմ մի կողմից քրեական քաղաքականությունը կյանքի կոչելու միջոց է, մյուս կողմից՝ համապատասխան մարմնի գործունեության իրավական հիմք: Իրավական միջոցներով հանցավորության դեմ պայքարն ապահովող օրենսդրական ճյուղերը ձևավորում են յուրահատուկ քրեախրավական համալիր, որը հենվում է կրիմինոլոգիայի և քրեագիտության ոլորտի գիտելիքների վրա³⁹: Օրենսդրությունը քրեական քաղաքականության իրականացման եղանակներից մեկն է, բայց ոչ միակը: Այն պետք է իրականացվի գիտականորեն հիմնավորված ծրագրերով ու կոնցեպցիաներով:

5. Քրեական քաղաքականությունը պետության ռազմավարական կուրսն է: Այն իր մեջ պարունակում է պետականավարչական տարր: Այն ներկայացնում է ցանկալին և ցանկալիին հասնելու, գոյություն ունեցողը բարելավելու ճանապարհ⁴⁰, ըստ էության՝ հանցավորության դեմ պայքարի գիտակցաբար ընտրված ռազմավարություն և մարտավարություն⁴¹ (ի՞նչ անել, ինչպե՞ս անել), որը գործուն, զարգացող, էվոլյուցիա ապրող գործընթաց է: ԵՄ 1996 թ. սեպտեմբերի 5-ի «Հանցավորության դեմ

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

պայքարի քաղաքականությունը փոփոխվող եվրոպայում» N R/96/8 ցուցումների 8-րդ կետում նշվում է, որ հանցավորության դեմ պայքարի ստրատեգիան ընդհանուր հասկացություններով կարող է ընդունվել իշխանության կենտրոնական էշելոններում. Ֆրանսիայում առկա է իր արդյունավետությունն ապացուցած կենտրոնացված ստրատեգիա, ԳԴԳ-ում և Անգլիայում իրականացված փորձնական տարբերակը ցույց է տալիս, որ հանցավորության նախականիման կառավարումը պետք է իրականացվի տարածաշրջանային և տեղական մակարդակով, ճապոնիայում կառավարումն իրականացնում են պետությունը և տեղական ինքնակառավարման մարմինները:

6. Քրեական քաղաքականությունը հենվում է գիտական մտքի վրա: Գիտական հիմնավորվածությունը քրեական քաղաքականության անբախտելի մասն է, որա-

կական բնութագիրը, առանց որի քաղաքականությունը չի կարող «մտածել»⁴²: Քրեական քաղաքականությունը պետք է տեսականորեն մտածված լինի, ունենա գիտական բովանդակություն և համապատասխանի հանցավորության դեմ պայքարի ոլորտի որոշումների գիտական զարգացվածության աստիճանին: Քրեաիրավական հիմնախնդիրները չեն կարող արդյունավետ լուծվել, եթե ուշադրություն չդարձվի կրիմինոլոգիայի և քրեական քաղաքականության գիտության զարգացման տվյալների վրա⁴³:

Այսպիսով՝ քրեական քաղաքականությունը պետության՝ հանցավորության դեմ պայքարի ռազմավարական կուրսն է, որը, հենվելով հասարակության զարգացման օբյեկտիվ պայմանների և գիտական մտքի վրա, իրականացվում է հատուկ սուբյեկտների կողմից, հատուկ միջոցների, մեթոդների, ձևերի կիրառմամբ՝ հանցավորության մակարդակը հնարավորինս նվազեցնելու նպատակով:

¹ Մեծ մտածողները քաղաքականությունը սահմանել են տարբեր կերպ. Պլատոնը բնորոշել է որպես «կայսերական արվեստ», Մաքիավելլին՝ «ճիշտ և իմաստուն կառավարման վերաբերյալ գիտելիքներ», Մաքս Վեբերը՝ պետական ապարատի առաջնորդություն կամ առաջնորդության վրա ազդեցություն, Մարքսը՝ դասակարգային շահերի պայքար:

² Տե՛ս Панарин А. С. Политология: Учеб. - М.: Проспект, 1997, էջ 3:

³ Տե՛ս նույն տեղը, էջեր 28-29:

⁴ Տե՛ս Ростов К. Т. Методология регионального анализа преступности в России. Автореферат дис. ... д-ра юрид. наук. СПб., 1998:

⁵ Առանձնացնում են մաս արտաքին և համաշխարհային քաղաքականություն:

⁶ ԳՅ ազգային անվտանգության ռազմավարությունում նշվում է, որ բարեփոխումների իրագործումն ապահովվում է միասնական պետա-

կան քաղաքականության իրականացմամբ: Մաթեմատիկայի ֆորմալիստական դպրոցի ներկայացուցիչ Ռիման նշում է. «Օ~, եթե ես ունենայի թեորեմներ, ապա ես կկարողանայի բավականին հեշտությամբ գտնել նրանց ապացուցումները»:

⁷ Տե՛ս Лакатос И. Доказательства и опровержения. М., Наука, 1967:

⁸ 1999թ. հունվարի 27-ին ընդունված և 2006թ. մայիսի 1-ին ուժի մեջ մտած Ստրասբուրգի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» Կոնվենցիայի ներածության մեջ նշվում է, որ եվրոպայի խորհրդի անդամ պետությունները գտնում են, որ որպես առաջնություն անհրաժեշտ է իրականացնել կոռուպցիայից հասարակության պաշտպանությանն ուղղված ընդհանուր քրեական քաղաքականություն, ներառյալ համապատասխան օրենսդրական և կանխարգելիչ միջոցների ընդունումը:

⁹ Քրեական քաղաքականության արդյունավետությունը որոշող չափանիշը հանցավորության քանակական և որակական ցուցանիշները չեն, այլ դրա պատճառների և վերացման բավականին ստույգ ցուցանիշները: Ինչպես նշում է Դ.Պոյան, մաթեմատիկոսը նախքան մաթեմատիկական թեորեմների ապացուցումը պետք է կռահի դրանց ճշմարտությունը:

¹⁰ Տե՛ս Դ. Սոյա *Математика правдоподобные рассуждения*. М., ИЛ. 1957: Վերածննդի փիլիսոփայությունը, 1789թ. Ֆրանսիական հեղափոխությունն ու բանտային վայրերի և օրենսդրության բարեփոխման վերաբերյալ շարժումը Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում բազում անձանց համար քրեական քաղաքականությունն ուսումնասիրելու խթան հանդիսացան:

¹¹ Տե՛ս Beccaria, Filangieri, Fodera, Nani, Raffaelli, Cannofari, Romagnosi, Carmignani, Poli, Baroli, Honcompagni, Mamiani, Rosmini, Mancini, Ulloa, Niccolini,— Montesquieu, Rousseau, Brissot de Warville, Serrin, Pastoret, Robespierre և Marat (երկուսն էլ դեմ էին մահապատժին), Cousin, Guizot, Lerminier, Lucas, Appert,—Dawes, Will. Roscoe, Bentham, Rassel և բանտագիտության վերաբերյալ բազմաթիվ անգլիացի գրողներ՝ Willand, Globig և Huster, Gmelin, Soden, Tafinger, Kleinschrod, Oersted, Escher, Mittermaier: Քրեական քաղաքականության և ազատագրվման վայրերի պայմանների բարելավման վերաբերյալ ուշագրավ աշխատություններից է Berenger. *De la repression penal*, 2 vol. Paris 1855:

¹² Տե՛ս Гогель С. К. *Курс уголовной политики в связи с уголовной социологией*. - Спб., 1910, Чубинский М. *Очерки уголовной политики*. - Пг., 1916:

¹³ Տե՛ս Чубинский М. *Курс уголовной политики*. - Спб., 1909, էջ 52:

¹⁴ Տե՛ս *Уголовная политика и ее реализация в деятельности ОВД: Тез. лекций по курсу для слушателей фак. N 1*. - М.: Академия управления МВД РФ, 1999, էջեր 35, 36:.

¹⁵ Տե՛ս Марцев А.И. *Законы диалектики и вопросы советской уголовно-правовой политики // Проблемы уголовной политики. Советский и зарубежный опыт: Сб. науч. ст.* - Красноярск: Изд-во Краснояр. ун-та, 1989, էջ 7:

¹⁶ Ժամանակակից անվանումը՝ քրեակատարողական իրավունք:

¹⁷ Տե՛ս Герцензон А.А. *Уголовное право и социология*. М., 1970, էջ 179:

¹⁸ Տե՛ս Стручков Н.А. *Исправительно-трудовая политика и ее роль в борьбе с преступностью*. Саратов, 1970, էջեր 4-5, Загородников Н.И. *Советская уголовная политика*. М., 1979, էջեր 8-10, Жалинский А.Э. *Содержание уголовной политики // Уголовная политика в борьбе с преступностью*. Свердловск, 1986, էջեր 12 – 18, Бородин С.В. *Борьба с преступностью: теоретическая модель комплексной программы*. М.: Наука, 1990 էջ 4, Исмаилов И.А. *Преступность и уголовная политика (актуальные проблемы организации борьбы с преступностью)*. Баку, 1990, էջ101:

¹⁹ Տե՛ս Загородников Н.И., Стручков Н.А. *Направления изучения советского уголовного права // Советское государство и право*. 1981, N 7, էջ 4:

²⁰ Տե՛ս Беляев Н.А. *Уголовно-правовая политика и пути ее реализации*. Л.: Изд-во ЛГУ, 1986, էջ15:

²¹ Տե՛ս Исмаилов И.А. *Преступность и уголовная политика (актуальные проблемы организации борьбы с преступностью)*. Баку, 1990, էջ124:

²² Տե՛ս Босхолов С.С. *Основы уголовной политики: Конституционный, криминологический, уголовно-правовой и информационный аспекты*. М., 1999, էջ 32:

²³ Տե՛ս *Уголовная политика и ее реализация органами внутренних дел: Учебник / Под ред. Л.И. Беляевой*. М.: Академия управления МВД России, 2003, էջ 7:

²⁴ Տե՛ս Стахов Я.Г. *Современная уголовная политика и совершенствование взаимодействия правоохранительных органов субъектов Российской Федерации при ее реализации: Монография /Под науч. ред. докт. юрид. наук, проф. В.П. Ревина*. М.: Академия управления МВД России, 2003, էջ 7:

²⁵ Տե՛ս Звечаровский И.Э. *Современное уголовное право России: понятие, принципы, политика*. СПб.: Юридический центр Пресс 2001, էջ 74:

²⁶ Տե՛ս Бородин С.В. *Теоретические проблемы советской уголовной политики // XXV съезд*

- КПСС и дальнейшее укрепление социалистической законности. М., 1977, էջ 27:
- ²⁷ Տե՛ս Лесников Г.Ю. К вопросу о понятии уголовной политики// Российский следователь, 2005, N 6, էջ 32:
- ²⁸ Տե՛ս Гребцов О.В. Уголовная политика современной России и предупреждение преступности. Автореф. дисс. на соиск. ученой степени к.ю.н.. Санкт-Петербург 2000:
- ²⁹ Գերմանիայի միավորման իրավական հետևանքներին նվիրված զեկույցը պրոֆեսոր Կլաուս Սեսսարը ներկայացրել է 1992թ. գարնանը Սանկտ Պետերբուրգում անցկացվող կրիմինոլոգիական սեմինարում:
- ³⁰ Donziger S. The Real War on Crime: The Report of the National Criminal Justice Commission. Harper Collins Published, Inc, 1996. P.218:
- ³¹ Տե՛ս Побегайло Э.Ф. Кризис современной российской уголовной политики // Преступность и уголовное законодательство: реалии, тенденции, взаимовлияние: Сборник научных трудов / Под ред. проф. Н.А. Лопашенко. –Саратов, Саратовский Центр по исследованию проблем организованной преступности и коррупции: Сателлит, 2004, էջ 88:
- ³² Տե՛ս Гальперин И.М., Курляндский В.И. Предмет уголовной политики и основные направления ее изучения // Основные направления борьбы с преступностью. – М., 1975, էջ 7:
- ³³ Տե՛ս Миньковский Г.М. О понятии уголовной политики и некоторых проблемах ее информационного обеспечения // Проблемы социологии уголовного права: Сборник научных трудов. М., 1982, էջ 67, Молодцов А.С., Благов Е.В. Понятие и основные направления уголовной политики и участие общественности в борьбе с преступностью: Текст лекций. – Ярославль, 1987, էջ 3, Босхолов С.С. Основы уголовной политики: Конституционный, криминологический, уголовно-правовой и информационный аспекты. М., 1999, էջ 31:
- ³⁴ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշվում է ... մասնակցությունը վերազգային հանցագործությունների դեմ միջազգային պայքարին:
- ³⁵ Տե՛ս Вермеш М. Основные проблемы криминологии. – М., 1978, էջ 216, Бабаев М.М. О соотношении уголовной и криминологической политики //Проблемы социологии уголовного права: Сборник научных трудов. – М., 1982, էջ 14.
- ³⁶ Տե՛ս Դաбузян А.А. Проблемы преступности в республике Армения в переходный период. Изд. Ереванского университета. Ереван-2007, էջ 228: Ա.Գաբուզյանի կարծիքով, հանցավորության նկատմամբ վերահսկողության գործում էական դեր կարող է կատարել օրենսդրական ակտերի կրիմինոլոգիական փորձաքննությունը, որպեսզի այդ ակտերում հայտնաբերվեն հանցավոր վարքագծին, հանցագործությունների և իրավախախտումների նոր տեսակների ծագմանը նպաստող նորմերը ու բացերը:
- ³⁷ Տե՛ս Лопашенко Н.А. Основы уголовно-правового воздействия: уголовное право, уголовный закон, уголовно-правовая политика.–СПб.: Издательство Р. Асланова «Юридический центр Пресс», 2004, էջ 269, Львович Е.В. Должностное злоупотребление: проблемы криминализации, квалификации и отграничения от правонарушений: Монография. – Саратов: Изд-во ГОУ ВПО,Саратовская государственная академия права, 2005, էջ 24: Առանձնացնում են նաև այլ նպատակներ. Ն.Ա. Լոպաշենկոն՝ սոցիալական գործընթացների վրա բացասական ազդեցության նվազումը, իսկ Ե.Վ. Լվովիչը՝ հանցավոր ոտնձգությունից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ մեխանիզմի ստեղծումն ու գործնականում կիրառումը:
- ³⁸ ԵՄ 1996 թ. սեպտեմբերի 5-ի «Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը փոփոխվող Եվրոպայում»¹ R/96/8 ցուցումների 11-րդ կետում նշվում է, որ հասարակությունը պետք է տեղեկացված լինի հանցավորության հիմնահարցերի մասին:
- ³⁹ Տե՛ս Стручков Н.А.Курс исправительно-трудового права. Проблемы общей части. М., 1984, էջեր 8-13:

⁴⁰ Ст'и Александров А.И. Уголовная политика и уголовный процесс в российской государственности: история, современность, перспективы, проблемы / Под ред. В.З. Лукашевича. – СПб., 2003, т' 57:

⁴¹ Ст'и Побегайло Э.Ф. Кризис современной российской уголовной политики // Преступность и уголовное законодательство: реалии, тенденции, взаимовлияние: Сборник научных трудов / Под ред. проф. Н.А. Лопашенко. – Саратов, Саратовский Центр по исследованию проблем организованной преступности и коррупции: Сателлит, 2004, т' 88, Дагель П.С. Уголовная политика: управление борьбой с преступностью // Проблемы социологии уголовного права: Сборник научных трудов. – М., 1982, т' 30, Жунусов Б.Ж. Проблемы уголовной поли-

тики (уголовно-правовая и уголовно-исполнительная): Автореф. дисс. ...д.ю.н.–Алматы, 1994, т' 9, Миренский Б.А. Теоретические основы разработки уголовного законодательства (на материалах независимых государств Средней Азии и Казахстана): Автореф. дисс. ...д.ю.н. – М., 1993, т' 11, Панченко П.Н. Советская уголовная политика. Томск, 1988, т' 73:

⁴² Ст'и Трофимов В.В. Научные основы правовой политики // Правовая политика: от концепции к реальности / Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – М., 2004, т' 32:

⁴³ Ст'и Кудрявцев В.Н. Актуальные проблемы уголовной политики // Современные тенденции развития уголовной политики и уголовного законодательства. М., 1994, т' 7-8:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ**УЧАСТИЕ ОРГАНИЗОВАННЫХ ПРЕСТУПНЫХ ГРУПП
В ИЗБИРАТЕЛЬНЫХ КОМПАНИЯХ****Владислав КРАСИНСКИЙ***кандидат юридических наук, эксперт
Российского общественного института
избирательного права (РОИИП)*

Развитие экономических отношений в Российской Федерации, проходившее в период заметного ослабления регулирующей роли государства в экономике, отсутствие необходимой нормативной базы рыночного хозяйствования, широкомасштабный раздел государственной собственности с использованием незаконных методов и средств привели к массовому вовлечению в экономические процессы представителей организованных преступных групп и постепенному установлению криминального контроля над значительным числом хозяйствующих субъектов¹. Заинтересованность преступных групп в постоянном наращивании своих доходов, прямая зависимость официальной и теневой экономической деятельности от политической конъюнктуры в Российской Федерации, желание обеспечить личную безопасность обусловили стремление лидеров криминалитета легализовать свой статус и принимать активное участие в принятии политических решений. Удобным каналом реализации указанных криминальных интересов стало участие организованных преступных групп в избирательных кампаниях, проходящих в Российской Федерации².

Процесс проникновения криминалитета в органы государственной власти и местного самоуправления Российской Федерации складывался из двух основных стадий.

На стадии первичной политизации ор-

ганизованной преступности (1995-1999 гг.) происходило наиболее активное продвижение организованными преступными группами своих кандидатов в органы государственной власти и местного самоуправления в условиях выборов. Данное обстоятельство во многом обусловлено тем, что до 1999 г. в законодательстве о выборах отсутствовали положения, связанные с необходимостью кандидатов сообщать избирательным комиссиям сведения о привлечении их к уголовной ответственности. Ускорение первичной политизации организованный преступности было тесно связано с произошедшим ранее изменением структуры криминального сообщества. Наряду с «ворами в законе» активную роль в уголовной среде стали играть криминальные лидеры «отморозки» («беспредельщики»), игнорирующие и грубо нарушающие воровские традиции (национальная неприязнь, отказ от запрета на участие в политической и общественной жизни, совершение убийств, отказ от «общаков»). Данная часть представителей преступной среды в 90-х гг. проявляла наибольшую активность, связанную с избранием в органы государственной власти и местного самоуправления.

После достижения этой цели представители криминалитета легализовали свой статус в органах государственной власти и местного самоуправления, получили законный доступ к финансовым ресурсам и стали широко использовать возможности государственного аппарата для осуществления и воспроизводства преступной деятельности. На данной стадии проникновения криминалитета в органы власти и произошло окончательное сращивание организованных

преступных групп с элементами государственного механизма и местного самоуправления в ряде субъектов Российской Федерации.

Переход на пропорциональную систему выборов в Государственную Думу Федерального Собрания Российской Федерации, установление правовых ограничений на избрание в органы государственной власти и местного самоуправления лиц, имеющих на день голосования неснятую и непогашенную судимость за совершение тяжких и (или) особо тяжких преступлений, преступлений экстремистской направленности, детализация финансирования участия политических партий в выборах, ужесточение юридической ответственности за нарушение порядка финансирования избирательных кампаний, отзыв лицензий у ряда учреждений кредитно-банковской системы, подозреваемых в причастности к отмыванию денежных средств, высокая эффективность использования властных полномочий коррумпированных руководителей и должностных лиц федеральной и региональной систем государственного аппарата в интересах организованных преступных групп, не требующая личного представительства криминалитета в органах государственной власти и местного самоуправления, повлекли за собой и изменение тактики криминалитета по продвижению своих кандидатов в органы власти³.

Статистика региональных и муниципальных выборов, прошедших в 2006-2007 гг., свидетельствует о **новых тенденциях** участия организованных преступных групп в избирательных кампаниях.

Во-первых, в настоящее время заметно снизилось число представителей организованных преступных групп, непосредственно баллотирующихся в депутаты или на выборные должности. Сейчас лидеры уголовной среды предлагают перспективным кандидатам свое участие в финансировании избирательной кампании либо самостоятельно заблаговременно готовят для внедрения в

органы государственной власти и местного самоуправления своих «незаслуженных» ставленников, не имеющих судимостей, не скомпрометировавших себя выявленными связями с организованными преступными группами.

Во-вторых, несмотря на легализацию статуса и доходов, никто из депутатов или выборных должностных лиц, являющихся лидерами уголовной среды, не распустил свои боевые группировки («боевиков»). Как правило, эти структуры действуют под прикрытием частных охранных предприятий или служб безопасности. Таким образом, в ходе организации и проведения выборов у представителей организованных преступных групп сохраняется возможность использовать силовое воздействие на избирательный процесс для оказания влияния на принятие политических решений, дестабилизации обстановки и устрашения населения. Кроме того, лидеры этнических преступных групп, действующих на территории Российской Федерации, могут использовать свои боевые подразделения в ходе межнациональных столкновений, периодически возникающих в отдельных субъектах Российской Федерации.

В-третьих, с учетом повышения роли политических партий в избирательном процессе важнейшей задачей уголовной разведки и контрразведки стало установление контроля организованных преступных групп над существующими политическими партиями (региональными отделениями политических партий) и продвижение своих представителей в органы государственной власти и местного самоуправления с использованием партийных структур.

В-четвертых, представителями организованных преступных групп практически перестало осуществляться отмывание денежных средств в ходе выборов. Данное обстоятельство обусловлено наличием у организованных преступных групп многообразных законных источников финансирования избирательных кампаний и ужесточением юри-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

дической ответственности за нарушение порядка финансирования выборов.

Указанные тенденции участия организованных преступных групп в избирательных кампаниях затрудняют целенаправленную деятельность правоохранительных органов по недопущению представителей криминалитета в органы государственной власти и местного самоуправления в ходе выборов и усиливают общественную опасность подобных процессов. С учетом этого требуется незамедлительная и планомерная реализация комплекса общегосударственных (политических, правовых, организационно-кадровых, информационно-пропагандистских) и специальных мер противодействия общественности и государственных органов продвижению организованными преступными группами своих кандидатов в органы государственной власти и местного самоуправления в условиях выборов.

К числу общегосударственных политических мер противодействия общественности и государственных органов продвижению организованными преступными группами своих кандидатов в органы государственной власти и местного самоуправления в условиях выборов относятся официальные поручения главы государства, высших должностных лиц субъектов Российской Федерации руководителям избирательных комиссий и правоохранительных органов по недопущению участия в политической жизни и избрания представителей криминалитета, разработка федеральных и региональных программ борьбы с криминализацией органов государственной власти и местного самоуправления, т.н. «антикриминальные пакты» политических партий перед федеральными и региональными выборами⁴.

Правовые меры борьбы с криминализацией органов государственной власти и местного самоуправления предусмат-

ривают совершенствование законодательства путем установления правовых ограничений на избрание в органы государственной власти и местного самоуправления лиц, находящихся в федеральном розыске, имеющих судимость (в том числе снятую и погашенную) за совершение тяжких или особо тяжких преступлений. В федеральных законах о выборах предлагается закрепить обязательность указания кандидатами в депутаты и (или) на выборные должности всех имеющих судимостей (в т.ч. снятых и погашенных), а также информирования политическими партиями и избирательными комиссиями избирателей о всех судимостях кандидатов. В целях пресечения противоправной деятельности и подготовки материалов для привлечения к ответственности представителей криминалитета, избранных в органы государственной власти и местного самоуправления, предлагается использование института приостановления полномочий депутатов и выборных должностных лиц. С учетом этого Федеральный закон (в ред. от 05.07.1999 г. ¹ 133-ФЗ, с изм. от 02.03.2007 г.) «О статусе члена Совета Федерации и статусе депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации» представляется целесообразным дополнить статью 4¹: «Приостановление полномочий члена Совета Федерации, депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации» следующего содержания:

«1. Полномочия члена Совета Федерации, депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации приостанавливаются в случаях:

а) возбуждения уголовного дела в отношении члена Совета Федерации, депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по статьям Уголовного кодекса Российской Федерации, предусматривающим наказание за совершение тяжких и (или) особо тяжких преступлений;

б) возбуждения уголовного дела в отношении члена Совета Федерации, депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по статьям Уголовного кодекса Российской Федерации, предусматривающим наказание за совершение преступлений экстремистской направленности;

в) объявления члена Совета Федерации, депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации в федеральный розыск».

Аналогичные нормы можно было бы воспроизвести и в законодательстве субъектов Российской Федерации, определяющем статус депутатов и выборных должностных лиц.

Организационно-кадровые меры противодействия криминалитету должны охватывать две группы мер. Первая группа мер противодействия касается внутрипартийной кадровой политики: проверки кандидатов в члены партии, выявления фактов партийной коррупции и передачи собранных материалов правоохранительным органам, проверки членов партии, баллотирующихся по партийным спискам, исключения из партии лиц, скомпрометировавших себя связями с экстремистскими организациями и организованными преступными группами. Вторая группа мер связана с совершенствованием кадрового комплектования всей системы государственных органов.

Меры информационно-пропагандистского противодействия общественности и государственных органов продвижению организованными преступными группами своих кандидатов в органы государственной власти и местного самоуправления в условиях выборов должны быть направлены на повышение правовой культуры общества. Особую роль представляет целесообразным уделить профилактической работе избирательных комиссий, правоохранительных органов, органов государственной власти субъектов Федерации в молодежной среде. Чрезвычайно важной яв-

ляется деятельность СМИ по консолидации российского общества и формированию негативного общественного мнения по отношению к деятельности преступных групп, криминальным лидерам, фактам и планам их участия в политической жизни и попыткам избрания в органы государственной власти и местного самоуправления.

Эффективность системы общегосударственных мер дополняется специальными мерами противодействия правоохранительных органов продвижению организованными преступными группами своих кандидатов в органы государственной власти и местного самоуправления в условиях выборов. Специальные меры предусматривают приобретение источников из числа представителей организованных преступных групп среднего и руководящего звена с целью добывания информации о планах, кадровом составе преступных групп, должностных лицах государственных и муниципальных органов, оказывающих преступным группам содействие в осуществлении противоправной деятельности, об источниках и каналах незаконного финансирования выборов и политической деятельности, направленной на нанесение ущерба безопасности Российской Федерации. Важное значение имеет оперативная работа в «околориминальной» среде по добыванию информации о связях кандидатов, представляющих интересы организованных преступных групп, с функционерами политических партий, членами избирательных комиссий, сотрудниками правоохранительных органов, о фактах коррупции в политических партиях, общественных организациях, государственных и муниципальных органах. Данная работа должна осуществляться компетентными правоохранительными органами при координирующей роли органов безопасности.

Неотъемлемой составляющей специальных мер является последовательное документирование организованной

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

преступной деятельности в целях подготовки материалов для привлечения лидеров и участников преступных групп к уголовной ответственности⁵. Необходимым условием оперативного документирования противоправной деятельности является обеспечение безопасности задействованных сотрудников правоохранительных органов и оперативных источников. В качестве конечного результата следует рассматривать ликвидацию организованных преступных групп (задер-

жание с поличным, арест и привлечение к уголовной ответственности организаторов и участников преступных групп).

Отдельным направлением работы является документирование деятельности организованных преступных групп, имеющих международные связи. В целях повышения качества документирования и подготовки принятия адекватных мер противодействия криминалитету важно развивать информационный обмен с Интерполом, Бюро по координации борьбы с организованной преступностью стран СНГ, зарубежными спецслужбами и правоохранительными органами.

¹ Здесь и далее под организованной преступной группой понимается устойчивая и сплоченная преступная организация, имеющая иерархическую структуру и созданная для совершения тяжких или особо тяжких преступлений. Организаторы, руководители, участники и иные представители организованной преступной группы определяются как криминалитет.

² См.: Красинский В.В. Нормативное правовое обеспечение национальной безопасности в процессе организации и проведения выборов в Российской Федерации: Монография. Москва, 2005. С. 123-135.

³ См. Федеральный закон от 18.05.2005 г. N 51-ФЗ «О выборах депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации»; Федеральный закон от 21.07.2005 г. ¹ 93-ФЗ «О внесении изменений в законодательные акты Российской Федерации о выборах и референдумах и иные законодательные акты Российской Федерации»; Федеральный закон от 05.12.2006 г. ¹ 225-ФЗ «О внесении изменений в Федеральный закон «Об основных гарантиях избирательных прав и права на участие в референдуме граждан Российской Федерации» и Гражданский процессуальный кодекс Российской Федерации» и др.

⁴ В качестве примера подобного «антикриминального пакта» можно привести «Соглашение о противодействии проникновению криминала во власть», подписанное 10.07.2006 г. в Екатеринбурге представителями «Единой России», ЛДПР, КПРФ, «Рос-

сийской партии Пенсионеров», «Российской коммунистической рабочей партии, партии «Яблоко», «Патриоты России», «Демократической партии России», «Родина».

⁵ В связи с этим в структуре Генеральной прокуратуры или Совета Безопасности Российской Федерации представляется целесообразным создать единый Аналитический центр, в котором бы накапливалась и систематизировалась информация о противоправной деятельности российских организованных преступных групп во всех субъектах Федерации и за рубежом, о фактах проникновения представителей криминалитета в органы государственной власти и местного самоуправления, об избранных в органы государственной власти и местного самоуправления лидерах и участниках организованных преступных групп, о ходе предварительного расследования и судебном рассмотрении уголовных дел по составам преступлений, предусмотренных ст.ст. 208-210 УК РФ. Руководителя данного Центра предлагается наделить обязанностью регулярного информирования Президента и руководителей высших государственных органов о реальной криминогенной обстановке в Российской Федерации, угрозах безопасности Российской Федерации со стороны организованных преступных групп и принимаемых мерах по борьбе с организованной преступностью.

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑԻ ՀԻՄՔԸ**

Սերգեյ ՍԱՐԱՔՅԱՆ

ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպական վարչության պետ, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

Յուրաքանչյուր հայց, անկախ նրա՝ դատավարական որ ձևում հարուցվելուց, հիմնվում է որոշակի փաստերի վրա, որոնց համակցությունը կազմում է հայցի հիմքը: Վերջինիս հիմքը ընդունված է համարել հայցի կառուցվածքային մասերից մեկը, որը հայցի այլ տարրերի և հատկապես նրա առարկայի համակցությամբ կազմում է հայցի բովանդակությունը, պայմանավորում նրա ինքնուրույնությունն ու որոշակիությունը¹: Եթե հայցի առարկան պատասխանում է այն հարցին, թե ինչ է պահանջում հայցվորը, ապա հայցի հիմքը պատասխանում է, թե հայց հարուցելու իրավունքը ինչպիսի փաստերից է ծնվում, կամ ինչի հիման վրա է հայցվորը ներկայացնում իր նյութաիրավական պահանջները:

Ա.Ի.Ջորիինը նշում է. «Եթե չկա իրավաբանական փաստը, որը պայմանավորում է նյութաիրավական հարաբերությունների ծագումը, ապա քաղաքացիական հայցը քրեական գործում չի կարող հարուցվել, **ապահովվել և լուծվել**»² **(ընդգծումն իմն է – Ս.Ս.)**:

Ելնելով այն հանգամանքից, որ հիմք ասելով հասկացվում է պատճառ, ինչ-որ բան արդարացնող բավարար առիթ, Վ.Ն.Մախուլը և Դ.Բ.Ռազունովսկին գրում են. «Հայցի հիմք են հանդիսանում այն իրավաբանական փաստերը, որոնցից հայցվորը բխեցնում է իր հայցային պահանջները, և որոնց հետ օրենքը կապում է հայցվորի և մեղադրյալի կամ նրա գործողությունների

համար գույքային պատասխանատվություն կրող անձի միջև ծագող իրավահարաբերությունները»³:

Հայցի հիմքում հայցվորը կարող է դնել տարբեր փաստեր և հանգամանքներ, սակայն գործը ճիշտ լուծելու համար նշանակություն ունեն միայն այն փաստերն ու հանգամանքները, որոնք իրավական ուժ ունեն, այսինքն՝ որոնց հետ օրենքը /նյութական իրավունքի նորմը կամ նորմերը/ կապում է կողմերի միջև նյութական իրավահարաբերությունների, հետևաբար և՛ իրավունքների ու պարտականությունների առաջացումը:

Ա.Պ.Ռիժակովի պնդմամբ՝ միայն այն դեպքում, երբ կհավաքվեն ապացույցներ, որոնք կբովանդակեն տեղեկություններ վնասի մասին, որը հնարավոր է հատուցել դրամական արտահայտությամբ, և այն, որ այդ վնասը պատճառվել է հանցագործությամբ, կարելի է հավաստել քաղաքացիական հայցի հիմքի առկայության մասին⁴: Այսինքն, վնասի առկայությունը համարվում է փաստ, որը հնարավորություն է տալիս քրեական դատավարությունում վնաս կրած անձին հայց հարուցելու միայն այն դեպքում, երբ առկա են տվյալներ այն մասին, որ այդ վնասը պատճառվել է հանցագործությամբ: Ինքնին փաստը ձեռք է բերում իրավաբանական նշանակություն միայն հանցագործության հետ կապված որևէ իրավահարաբերության վերաբերելու դեպքում: Հետևաբար, որպեսզի որոշվի այս կամ այն փաստի իրավաբանական նշանակությունը, անհրաժեշտ է այն միշտ դիտարկել կոնկրետ իրավական հարաբերությունների հետ կապված, որոնք ծագում են հանցագործության արդյունքում, և որոնցում արտահայտվում է նրանց իրավաստեղծ էությունը⁵:

Միևնույն ժամանակ, կան հեղինակներ,

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

որոնք որպես քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմք ներկայացնում են հանցագործությունը: Այս տեսակետը հիմնավորում է մասնավորապես Յու.Ռ.Ադոյանը՝ նշելով, որ քրեական գործում հայցի հիմքը համարվում է հանցագործությունը⁶:

Հանցագործությունը միայն որպես հայցի հիմք ներկայացնելը չի ապահովում մի շարք հարցերի լուծումը, որոնք կապված են հայց հարուցելու իրավունքի հետ:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հարուցման հիմք ծառայում եւ ոչ թե միայն հանցագործությունը, այլ հանցագործությունը և քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասը միասին վերցված:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 45-րդ կետի համաձայն՝ վնաս ասելով հասկացվում է դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական և գույքային վնասը, կարող ենք հավաստել, որ քրեական դատավարությունում հայց հարուցելու համար հիմք է ծառայում բարոյական, ֆիզիկական և գույքային վնասի պատճառման հակաիրավական փաստը:

Ըստ Վ.Ն.Մախոպի և Դ.Գ.Ռազունովսկու՝ հայցային իրավահարաբերությունների ծագման հանգեցնող իրավաբանական փաստ է համարվում շահագրգիռ կամ այլ իրավասու անձի քաղաքացիական հայցով հանդես գալը /դիմելը/: Սակայն ոչ բոլոր դիմումներն են, որ հանգեցնում են քաղաքացիական հայցն ապահովելու կամ լուծելու, այլ միայն այն դիմումները, որոնք ունեն որոշակի նյութաիրավական բովանդակություն⁷:

Այսպիսի պատկերացումների օգտին է խոսում նաև քաղաքացիական հայց հարուցած տուժողի իրական կամահայտնության բացահայտումը: Հիմնավորելով իր հայցային պահանջները՝ տուժողը որպես պահանջի բովանդակություն հիմնավորում է ոչ միայն հանցագործությամբ իրեն, օրի-

նակ, մարմնական վնաս հասցնելը, այլ և կորուստներ պատճառելը:

Դատարանը բավարար տվյալների առկայության դեպքում քաղաքացիական հայցը ճանաչում է հիմնավոր, այսինքն՝ հիմք ունեցող, կամ մերժում է այն: Սակայն, ոչ թե այն բանի պատճառով, որ առկա է այս կամ այն իրավաբանական փաստը, այլ վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության դեպքում:

Այսպիսով, որպես քաղաքացիական հայցի հիմք պետք է դիտարկել ոչ թե ինքնին փաստերը, այլ իրական իրավահարաբերությունները իրենց ծնող փաստերի հանակցությամբ⁸:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքացիական դատավարության տեսության մեջ հայցի հիմքի փաստերը բաժանվում են երկու մասի՝ օրինականացնող կամ իրավաստեղծ (օրինականացնող փաստերն իրենց հերթին լինում են հայցի ակտիվ հիմքի /ակտիվ լեգիտիմացիայի/ և հայցի պասիվ հիմքի /պասիվ լեգիտիմացիայի/ փաստեր) և հայցի առիթ հանդիսացող⁹, Վ.Վ.Բատուկը քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմքը կազմող փաստերը դասակարգում է երեք խմբի¹⁰:

Առաջին և հիմնական իրավաստեղծ փաստը համարվում է ինքնին հակաիրավական արարքը, այսինքն՝ հանցագործությունը: Այս խմբին են դասվում գործողության փաստերը, վնաս հասցնելու փաստերը և դրանց փոխադարձ կապը:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմք համարվող փաստերի երկրորդ խմբին, ըստ հեղինակի, վերաբերում են այն փաստերը, որոնք բացահայտում են հայցվորի և նրա ներկայացրած պահանջի միջև կապը /ակտիվ լեգիտիմացիան/: Այդպիսի փաստեր են այն հանգամանքները, որոնք ցույց են տալիս սուբյեկտիվ իրավունքի պատկանելությունը, որից բխեցվում է հայցային պահանջը կոնկրետ անձին պատկանելու հանգամանքը:

Ակտիվ լեգիտիմացիայի հարցի որոշման չափանիշ է հանցագործությունից

վնաս կրած անձի ճիշտ որոշումը, որն իրականացվում է քննիչի կողմից քաղաքացիական հայցվորի քաղաքացիաիրավական պահանջների ճանաչման գործընթացում և դատարանի կողմից տուժողի քաղաքացիական հայցը ըստ էության քննելիս:

Պասիվ լեզուի մասնագիտի փաստերին վերաբերում են այն հանգամանքները, որոնք հնարավորություն են տալիս ճիշտ որոշելու այն անձին, ում վրա դրված է վնասը հատուցելու պարտականությունը:

Քաղաքացիական հայցի հիմքի մեջ մտնող փաստերի երրորդ խմբին վերաբերում են, այսպես կոչված, հայցի առիթ հանդիսացող փաստերը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցի առիթ հանդիսացող փաստերից է՝ պարտապանի կողմից պարտականությունները կամավոր չկատարելու հանգամանքը և այլն: Ընդ որում, այդ փաստերի գնահատումը կարող է իրականացվել միայն դատարանի կողմից քաղաքացիական հայցը ըստ էության քննելիս¹¹:

Համաձայնվելով Վ.Վ.Բատուևի՝ հայցի հիմքի փաստերի դասակարգմանը՝ նկատենք, որ դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ քրեական դատավարությունում քաղաքացիական հիմք համարվող վերոնշյալ փաստերը ճիշտ չեն գնահատվում:

Այսպես, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 13-ի դատավճռով որոշվել է տուժողի ներկայացուցիչ Է.Հարությունյանի քաղաքացիական հայցը բավարարել մասնակիորեն և հոգուտ ՊԲ թիվ 34153 զորամասի Ալեքսանդր Գասպարյանից բռնագանձել 40.000 ՀՀ դրամ:

Թիվ 34153 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 1-ին վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի շարքային զինծառայող, նմանաձիգ Ա.Գասպարյանը մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ 2006 թվականի նոյեմբերի 8-ի ժամը 19.00-ից մինչև նոյեմբերի 9-ը ժամը 19.00-ն ընդգրկված լինելով զորամասի պահակային ծառայության վերակարգում որպես 3-րդ պահակակետի 1-

ին հերթափոխի պահակ, նոյեմբերի 9-ին՝ ժամը 17.00-ին, ընդունել է պահակային ծառայությունը 3-րդ պահակակետում՝ զորամասի հավաքակայանում և, խախտելով պահակային ծառայություն տանելու կանոնները, չի կանխել զորամասի հավաքակայանի տարածք մուտք գործելը, ինչի հետևանքով անհայտ անձը ժամը 07.00-ից մինչև 09.00-ն ընկած ժամանակահատվածում զորամասի հավաքակայանի տարածքում կանգնեցրած «ԳԱԶ-33081» մակնիշի «ՊԲ 44 163» զինհամարանիշի ավտոմեքենայի վառելիքային բաքից գողացել է 105 լիտր դիզելային վառելանյութ՝ 31.500 ՀՀ դրամ արժողությամբ, իսկ «ԳԱԶ-3308» մակնիշի «ՊԲ 44 113» և «ՊԲ 44 117» զինհամարանիշի ավտոմեքենաների վառելիքային բաքերից գողացել է ընդհանուր քանակով 335 լիտր ավտոբենզին՝ 110.550 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ՝ զորամասին պատճառելով 142.100 ՀՀ դրամի նյութական վնաս:

Վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայելով այս դատական ակտը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-180/07 որոշմամբ նշում է.

«Սույն գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 13.04.2007 թվականի դատավճռով հաստատվել է, որ Ա.Գասպարյանը, ընդգրկված լինելով զորամասի պահակային ծառայության վերակարգում, խախտել է պահակային ծառայություն տանելու կանոնները, չի կանխել զորամասի հավաքակայանի տարածք անհայտ անձի կողմից մուտք գործելը, որի հետևանքով զորամասի տարածքում կանգնեցրած ավտոմեքենաներից գողացվել է 105 լիտր դիզելային վառելանյութ և 335 լիտր բենզին՝ զորամասին պատճառելով 142.000 ՀՀ դրամի նյութական վնաս»:

Ասվածի հիման վրա դատարանը հետևություն է արել, որ Ա.Գասպարյանի կողմից պահակային ծառայություն տանելու կանոնները խախտելու հետևանքով իրավաբանական անձի գույքին պատճառվել է վնաս: Ըստ դատարանի՝ կատարված արարքի և պատճառված վնասի միջև առկա է պատճառական կապ, ուստի հիմնվե-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

լով վերոշարադրյալի վրա՝ դատարանը գտել է, որ վնասը պետք է հատուցվեր ոչ թե մասնակի, այլ լրիվ ծավալով:

Ուշադրության է արժանի նաև դատարանի այն դիրքորոշումը, որ. «Ինչ վերաբերում է քրեական գործով գույքի հափշտակություն կատարած անձի կամ անձանց շրջանակը պարզված չլինելու հանգամանքին, ապա դատարանը գտնում է, որ այդ անձի կամ անձանց շրջանակը պարզվելու դեպքում վնասը հատուցած անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կարող է քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հետադարձ պահանջ /ռեզորես/ ներկայացնել նրանց»:

Կարծում ենք, բերված օրինակում թե առաջին ատյանի դատարանը, թե վճռաբեկ դատարանը ճիշտ չեն գնահատել քաղաքացիական հայցի հիմք համարվող փաստերը, ինչի պատճառով հայցը սխալ լուծում է ստացել, և վնասի հատուցման պարտականությունը դրվել է Ա.Գասպարյանի վրա:

Վճռաբեկ դատարանի որոշման վերլուծությունից հետևում է, որ Ա.Գասպարյանի կատարած հանցագործությունը՝ ծառայության կանոնները խախտելը, անմիջապես չի համարվում իրավաստեղծ փաստ վնասի առաջացման համար: Վնասի առաջացման համար իրավաստեղծ փաստ է հափշտակություն կատարելու հակաիրավական գործողությունը: Ծառայության կանոնները խախտելը ընդամենը պայման է հանդիսացել հափշտակություն կատարելու և զորամասին վնաս հասցնելու համար: Այլ կերպ ասած՝ զորամասին պատճառված վնասը առաջացել է ոչ թե անմիջապես ծառայության կանոնները խախտելու պատճառով, այլ հափշտակություն կատարելու հետևանքով, այսինքն՝ Ա.Գասպարյանի արարքի /ծառայության կանոնները խախտելը/ և առաջացած վնասի միջև անմիջական պատճառական կապը բացակայում է:

Ա.Գասպարյանի կողմից ծառայության

կանոնները խախտելը ընդամենը պայման է հանդիսացել հափշտակություն կատարելու և վնաս հասցնելու համար, այլ ոչ թե պատճառ: Մինչդեռ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի լուծման համար պարտադիր է հանցագործության և վնասի միջև անմիջական /ուղղակի/ պատճառական կապի առկայությունը: Եթե բացակայում է անմիջական պատճառական կապը, ապա հայցը քրեական դատավարությունում չի կարող լուծվել¹²:

Այս տեսակետը հիմնավորելով՝ Ա.Գ.Սազալովը գրում է. «Վրա հասած հետևանքների համար պատասխանատվությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այդ հետևանքները համարվել են անձի կատարած արարքի օրինաչափ արդյունք: Եթե գործողությունը կամ անգործությունը համարվում է ընդամենը վնասակար հետևանքների առաջացման պայմաններից մեկը, սակայն նրա հետ կապված չէ ներքին, անհրաժեշտ կապով, համարվում է վնասակար հետևանքների առաջացման միայն առիթը և ոչ պատճառը, **ուստիև այն բացառում է պատասխանատվությունը**»¹³ /ընդգծումը մերն է– Ա.Ս.Մ.:

Այս առումով ուշադրության արժանի է նաև Վ.Պ.Բոժկի այն իրավագի պնդումը, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել ոչ թե այն պատճառով, որ մի անձ վնաս է պատճառել մյուսին, այլ այն, որ այդ անձը /վնաս հասցնողը/ մեղադրվում է հենց այն հանցագործության մեջ, որով այդ վնասը պատճառվել է անմիջականորեն, և որը համարվում է քննության առարկան¹⁴:

Նկատենք, որ անմիջական պատճառական կապի հայեցակարգը հիմնավորում է նաև վճռաբեկ դատարանը, ընդ որում՝ քննարկվող գործով: Վճռաբեկ դատարանի որոշման մեջ մասնավորապես նշված է. **«Դատարանը, ապացուցված համարելով մեղադրյալի մեղքը կատարված հանցագործության մեջ, ինչպես նաև պատճառական կապը հանցավոր արարքի և հասցված վնասի միջև, քաղաքացիական հայցի հարցը լուծում է՝ գնահատելով պատշաճ կերպով ներկայացրած հայցադիմումի**

հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքը»¹⁵: Սակայն, հակասելով ինքն իրեն, դատարանը հետևություն է անում, որ Ա.Գասպարյանը համարվում է գործանասին պատճառված վնասի համար նյութական պատասխանատու անձ, և նրա վրա է դրել պատճառված վնասի հատուցման պարտականությունը:

Դատարանի որոշումը կարող էր համարվել հիմնավորված, եթե օրենքը նախատեսեր գույքային պատասխանատվություն ոչ միայն անմիջապես վնաս հասցնելու, այլև վնասի պատճառմանը նպաստող պայմաններ ստեղծելու համար: Քանի դեռ օրենքը չի սահմանում պատասխանատվություն վնասի առաջացման համար պայմաններ ստեղծելու համար, ուստի անկասկած է, որ պատճառված վնասի համար պատասխանատու է այն անձը, ով պատճառել է այն:

Ինչպես իրավագիտորեն նշում է Ա.Գ.Մազալովը, անձը կամ մասնակցել է վնասի պատճառմանը, ուստիև ամբողջական պատասխանատվություն է կրում դրա համար, կամ նրա արարքները չեն հանդիսացել վնասի առաջացման պատճառ, ուստիև վնասի համար այդ անձի նյութական պատասխանատվությունը բացառվում է¹⁶:

Այս առումով ուշագրավ է նաև Վ.Ն.Մախովի և Դ.Գ.Ռազունովսկու այն կարծիքը, որ եթե վնասը հասցվել է այնպիսի հանգամանքներում, երբ մի անձի արարքը օբյեկտիվորեն նպաստել է կամ հեշտացրել է այլ անձի կողմից հանցանքի կատարմանը (օրինակ, մի անձ կատարել է գողություն, մյուսը՝ անփութություն, որն էլ նպաստել է գողության կատարմանը), ապա այս դեպքում համապարտ պատասխանատվությունը բացառվում է, քանի որ վնասը չի հասցվել համատեղ գործողությունների հետևանքով: Այս դեպքում վնասի առաջացման անմիջական պատճառը գողություն կատարող անձի գործողություններն է, հետևաբար գողություն կատարող անձն էլ կրում է ոչ միայն քրեական պատասխանատվություն, այլև գույքային պատասխանատվություն¹⁷:

Այս տեսանկյունից անհիմն է թվում նաև

վճռաբեկ դատարանի այն պատճառաբանությունը, որի համաձայն. «...**հափշտակություն կատարող անձի կամ անձանց շրջանակը պարզվելու դեպքում վնասը հատուցած անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կարող է քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հետադարձ պահանջ /ռեգրես/ ներկայացնել նրանց**»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածի համաձայն՝ ռեգրես հայցի հարուցման իրավունք ունի այն անձը, որը վնաս պատճառողի հետ գտնվում է օրենքով սահմանված որոշակի հարաբերությունների մեջ /պայմանագրային հարաբերություններ, ծառայողական հարաբերություններ, համատեղ պատճառած վնաս և այլն/ և նրա փոխարեն հատուցել է պատճառած վնասը:

Այստեղ աչքի է ընկնում երկու կարևոր հանգամանք. նախ՝ վնասը հատուցած անձը հենց ինքը կարող է պատճառած լինել այդ վնասը, սակայն մեկ այլ անձի հետ համատեղ և նրա փոխարեն հատուցել է պատճառված վնասը:

Երկրորդ՝ անձն ինքն անմիջապես որևէ վնաս չի պատճառել, սակայն օրենքի ուժով կրում է վնասի հատուցման պարտականություն:

Դատարանը, նշելով, որ Ա.Գասպարյանը պետք է հատուցի վնասը ամբողջությամբ՝ հետագայում ռեգրեսային պահանջով հանդես գալու պայմանով, հաշվի չի առել վերոնշյալ հանգամանքերը: Քանի որ ապացուցված չէ Ա.Գասպարյանի առնչությունը հափշտակությանը, ինչպես նաև հափշտակություն կատարող անձանց հետ որոշակի հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը, որոնց ուժով նրանց փոխարեն նա պարտավոր է հատուցել վնասը, նման որոշումն անհիմն է:

Սակայն, դատարանի նման դիրքորոշումը ևս վկայում է, որ վերջինս ընդունում է, որ իրականում Ա.Գասպարյանի արարքի և առաջացած վնասի մեջ անմիջական պատճառական կապ չկա:

Ինչ վերաբերում է «Ձինծառայողների

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

նյութական պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում սահմանված այն դրույթին, որ զինծառայողները պատճառված վնասի լրիվ չափով նյութական պատասխանատվություն են կրում, եթե դա պատճառվել է այն զինծառայողի կողմից, որին գույքը տրվել է պահպանելու, տեղափոխելու, օգտագործելու համար կամ այլ նպատակներով, ապա, մեր կարծիքով, վճարեկ դատարանը սխալ է մեկնաբանել այն:

Օրենքում նշված. **«Պատճառվել է այն զինծառայողի կողմից, որին գույքը տրվել է պահպանելու, տեղափոխելու, օգտագործելու կամ այլ նպատակներով»** ձևակերպումը նշանակում է, որ զինծառայողն անմիջական գործողությամբ պետք է պատճառած լինի այդ վնասը. այլ մեկնաբանությունը կլինի տարածական:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Քննարկվող օրինակում, փաստորեն, դատարանը օրենքը չի մեկնաբանել դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը համապատասխան, այլ դուրս է եկել օրենքի տառացի նշանակության սահմաններից, հակառակ պարագայում Ա.Գասպարյանի վրա չէր դնի վնասի հատուցման պահանջը:

Հայցային պահանջների նկատմամբ իրավաստեղծ փաստերի, ինչպես նաև ակտիվ և պասիվ լեգիտիմացիաների սխալ գնահատելու օրինակ են նաև այն դեպքերը, երբ դատարանները բավարարում և լուծում են տալիս ռեգրեսային պահանջներին:

Այսպես, ԱՐԱԳ /0002/01/09 քրեական գործով Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մար-

տի 13-ի դատավճռով բավարարվել է «Ինգո-Վրմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության հայցը 1.732.000 ՀՀ դրամ գումարի չափով, որին էր անցել ապահովադրին պատճառված վնասից բխող նրա պահանջի իրավունքը վնաս պատճառած անձի նկատմամբ¹⁸:

Քրեական դատավարության կարգով ռեգրես հայցերի քննությանը և լուծմանը խոչընդոտում է նախևառաջ այն հանգամանքը, որ դրանք չեն համարվում հանցագործությամբ պատճառված «մաքուր» հայցեր¹⁹, քանի որ հայցի իրավունքը ծագում է ոչ թե հանցագործությամբ ռեգրեդիենտին անմիջապես վնաս հասցնելու արդյունքում, այլ երրորդ անձին վնաս պատճառելու «միջոցով»: Այսինքն, ռեգրեսային հայցերի դեպքում անհրաժեշտ է պարզել պատճառված վնասի հատուցման հիմքերի ոչ թե մեկ, այլ երկու փաստական և իրավական համակարգեր՝ անմիջական և միջնորդավորված, այն է՝ տուժողների և երրորդ անձանց միջև առաջացող հարաբերությունները, ովքեր լրիվ կամ մասնակի հատուցել են հանցագործությամբ պատճառված վնասը:

Փաստորեն, ռեգրես հայցերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ քաղաքացիական հայցվորի կարգավիճակով հանդես է գալիս ոչ թե հանցագործության արդյունքում անմիջական վնաս կրած անձը, այլ այն անձը, ով պայմանագրի կամ օրենքով նախատեսված այլ հիմքով հատուցել է տուժողին պատճառված վնասը և դրանով իսկ իրավունք ստացել տուժողի փոխարեն հանդես գալ հայցով: Այդպես է եղել քննարկվող գործով: Որպես հայցվոր հանդես էր եկել ապահովագրական ընկերությունը, որը նյութական կորուստներ կամ վնաս կրել էր իր ապահովագրական գործունեությունն իրականացնելիս /այլ ոչ թե հանցագործության հետևանքով/ և տուժողի փոխարեն հայց հարուցելու իրավունք էր ստացել: Մինչդեռ, ինչպես նշեցինք, քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հարուցման համար պարտադիր է հանցագործության և վնասի միջև անմիջական /ուղղակի/ պատճառա-

կան կապի առկայությունը: Եթե բացակայում է անմիջական պատճառական կապը, ապա քրեական դատավարությունում հայցը չի կարող բավարարվել: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ այնտեղ խոսքը ոչ միայն հանցագործության արդյունքում անմիջապես պատճառված վնասի հատուցման համար հայց հարուցելու իրավունքի, այլև այն մասին է, որ քրեական դատավարությունում որպես հայցվոր կարող է հանդես գալ միայն այն անձը, որը գույքային վնասները կրել է անմիջապես քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի արդյունքում²⁰:

Եիշտ է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածում չի նշվում, որ հատուցման ենթակա վնասը պետք է հասցված լինի «անմիջապես» քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի արդյունքում, սակայն որևէ կասկած չի հարուցում, որ խոսքը պետք է հենց **անմիջապես պատճառված վնասի մասին** լինի, ինչպես նաև այն մասին, որ **հայցվորը** քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով **անմիջապես վնաս կրած անձն է**:

Ասվածից որևէ շեղում հանգեցնում է ոչ միայն հայցի առարկայի անհիմն ընդարձակման, այլև հանգեցնում է քրեադատավարական իրավահարաբերությունների ուլորտ լայն շրջանակի անձանց ներգրավելուն:

Վճռաբեկ դատարանն իր 2007 թվականի նոյեմբերի 2-ի թիվ ՎԲ-150/07 որոշման մեջ, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ, 60-րդ, 154-րդ և 158-րդ հոդվածների պահանջները, նշում է. «... **քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան է կազմում հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասը, որի հատուցման մասին պահանջը հայցվորը ներկայացնում է մեղադրյալին կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձին: Քաղաքացիական հայցի առարկայի որոշման համար անհրաժեշտ է, որպեսզի վնասն անմիջականորեն հանցագործությամբ**

պատճառված լինի»:

Ասվածից հետևում է, որ եթե վնասը հանցագործության անմիջական հետևանք չէ, ապա դատարանը չի կարող քրեական դատավարությունում հայցին լուծում տալ:

Այս տեսանկյունից որոշ դժվարություններ են առաջանում անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում առաջացած նյութական կորուստների հատուցման հարցում: Հիմնական խնդիրն այն է, թե առողջությունը վերականգնելու կամ տուժողի մահվան դեպքում հուղարկավորության ծախսերը արդյոք համարվո՞ւմ են հանցագործության հետևանքով պատճառված վնաս, թե՞ ոչ: Այս հարցադրման կարևորությունն այն է, որ այս հարցի հետ կապված իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են տարբեր և իրարամերժ մեկնաբանություններ:

Այսպես, ԿԴ 03/0004/01/08 քրեական գործով ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008 թվականի փետրվարի 2-ի դատավճռով քաղաքացիական հայցը դատարանի կողմից թողնվել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ տուժողի իրավահաջորդի կողմից թաղման արարողության վրա ծախսված 510.000 դրամի չափով պահանջի քաղաքացիական հայցը չի կարող համարվել հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնասի հատուցմանը վերաբերող պահանջ: Հակառակ սրան՝ Վճռաբեկ դատարանը, իր 2007 թվականի նոյեմբերի 2-ի թիվ ՎԲ-150/07 որոշմամբ անդրադառնալով հուղարկավորության ծախսերի հարցին, նշում է. «հուղարկավորության հետ կապված 643.000 ՀՀ դրամ անհրաժեշտ ծախսերի մասով քաղաքացիական հայցի բավարարումը առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից հիմնավորված և պատճառաբանված է, քանի որ բխում է 2006 թվականի փետրվարի 27-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքից և լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ, 60-րդ, 158-րդ հոդվածների և ՀՀ քաղաքացիա-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

կան օրենսգրքի 1058-րդ, 1087-րդ հոդվածների պահանջներին: Ինչ վերաբերում է յոթերորդ, քառասուներորդ օրվա արարողությունների, գերեզմանի կառուցապատման և գերեզմանաքարի տեղադրման հետ կապված ծախսերին, ապա դրանք հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային վնաս չեն, դուրս են 2006 թվականի փետրվարի 27-ի «Յուրաքանչյուրի կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածով սահմանված հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերից»:

ՀՀՔՐԴ 2/0119/1/08 քրեական գործով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 18-ի դատավճռով դատարանը բավարարել է Հ.Իզմատյանի կողմից ներկայացված հայցը բուժման ծախսերի հետ կապված, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դատարանը առողջությունը վերականգնելու հետ կապված ծախսերը դիտել է որպես հանցագործությամբ անմիջապես պատճառված վնաս:

Կարծում ենք՝ առողջությունը վերականգնելու և տուժողի մահվան դեպքում հուղարկավորության հետ կապված ծախսերը նույնպես համարվում են հանցագործությամբ անմիջապես պատճառված նյութական վնաս և մտնում են քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկայի բովանդակության մեջ:

Ճիշտ է, ինչպես առողջությունը վերականգնելու համար կատարված ծախսերը, այնպես էլ հուղարկավորության հետ կապված ծախսերը հանցագործության հետ ներքին, ուղղակի կապով կապված չեն, քանի որ հանցագործության ուղղակի հետևանքը առողջությունը քայքայելն է կամ մահ պատճառելը: Սակայն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում սահմանված վնաս հասկացությունը նույնպես ըմբռնվում է ոչ թե ան-

միջապես գույքային վնասի, այլ դրամական միավորով չափման ենթակա վնասի իմաստով: Դրա համար սահմանված է, որ վնաս ասելով պետք է հասկանալ դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական և գույքային վնասը: Այսինքն, վնաս հասկացության էությունը բացահայտելիս չափանիշ է վերցված դրամական միավորը, ինչը. մեր կարծիքով, ճիշտ է: Հակառակ տրամաբանության պարագայում կստացվի, որ քրեական դատավարությունում կարող է հարուցվել և լուծվել միայն սեփականության դեմ ունեցվող հանցագործություններով պատճառված վնասը, ընդ որում ոչ բոլոր:

Ինչպես նշեցինք, նյութական վնասը կարող է լինել ինչպես տուժողի գույքի վրա ներգործելու հետևանք /հափշտակության, գույքը վնասելու և ոչնչացնելու դեպքերում և այլն/, այնպես էլ ոչ գույքային բարիքների վրա ներգործելու հետևանք /առողջության, կյանքի և այլն/:

Այսինքն, քրեական դատավարության օրենսգրքում իրավաբանական տեսանկյունից վնաս ասելով հասկացվում է բարոյական, ֆիզիկական և գույքային վնասը, որը համարվում է անմիջապես հանցագործության հետևանք և հիմք հանդիսանում քրեական դատավարությունում տուժող սուբյեկտի ի հայտ գալու համար, իսկ տնտեսագիտական տեսանկյունից հանցագործությամբ անմիջապես պատճառված բարոյական, ֆիզիկական և գույքային վնասը ենթարկվում է դրամական չափման, որն էլ համարվում է քաղաքացիական հայցվոր սուբյեկտի քրեադատավարական հարաբերությունների ոլորտում հանդես գալու հիմքը:

Այսպիսով, այն պահանջը, որ վնասը պետք է անմիջապես հանցագործության արդյունքում պատճառված լինի, ենթադրում է, որ

1. վնասը կարող է լինել հանցագործության անմիջական հետևանք, օրինակ՝ գույքը ոչնչացնելու կամ վնասելու, հափշտակությունների դեպքում և այլն.

2. վնասը կարող է հանցագործության անմիջական հետևանք չլինի, սակայն այդ

վնասը կրած լինի հանցագործությունից անմիջապես տուժողը, օրինակ՝ առողջությունը վերականգնելու հետ կապված ծախսերը, կամ այն ծախսերը, որոնք անձը կատարել է հանցագործությանը խախտված իր իրավունքները վերականգնելու համար, հուղարկավորության հետ կապված և այլն:

Ա.Ի.Զորինի կարծիքով՝ գույքային վնասը **/ավելի ճիշտ՝ նյութական վնասը/** ծագում է ոչ միայն սեփականության հարաբերություններին անմիջական ոտնձգության հետևանքով, այլև անձի նկատմամբ ոտնձգության պատճառով ևս: Անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները հանգեցնում են ֆիզիկական վնասի, որն անմիջապես հնարավոր չէ հատուցել, սակայն այդ վնասը, որպես կանոն, ուղեկցվում է գույքային վնասով, այսինքն՝ նյութական ծախսերով և կորուստներով, որոնք տուժողին հասցվել էր կերակրողին կորցնելու, աշխատավարձը չստանալու, առողջությունը վերականգնելու հետ կապված²¹: Ի.Գ.Կոժինը նշում է՝ գույքային վնասը, որը պատճառվել է հանցագործությանը, հանգում է անձին պատկանող նյութական բարիքներից, գույքից, արժեքներից և դրանից զրկելուն: Այն ֆիզիկական և բարոյական վնասից տարբերվում է ճիշտ պարզելու և դրանական համարժեքով արտահայտելու հնարավորությանը: Գույքային վնասը ծագում է ոչ միայն սեփականության հարաբերություններին վնաս հասցնելու հետևանքով, այլև անձի նկատմամբ ոտնձգելիս: Գույքային վնասը կարող է արտահայտվել անմիջապես նյութական բարիքների կորուստով /գույքի վնասումով կամ ոչնչացումով/, տուժողի անաշխատունակության արդյունքում աշխատավարձի կորուստով կամ դրա նվազումով. առողջությունը վնասվելու դեպքում՝ առողջությունը վերականգնելու համար կատարված ծախսերով, լրացուցիչ սննդի, կողմնակի խնամքի և այլն. ծախսեր կապված թաղման հետ՝ այն դեպքում, երբ հանցագործության արդյունքում առաջանում է մահ, և նրա իրավունքները անցնում են իր հարազատներից մեկին. խնամարկյալների կողմից մահացած կերակրողի աշխատավար-

ձի կորստի տեսքով²²:

Այսպիսով, տուժողի առողջությունը վերականգնելու և հուղարկավորության հետ կապված ծախսերը նույնպես համարվում են հանցագործությանը անմիջապես պատճառված վնաս և քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա:

Այսպիսով, քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմք ստելով հասկացվում են այն փաստերը, որոնք անմիջապես ծնուն են հայց հարուցելու իրավունքը: Եթե այն հայցի իրավունքը ծնող ուղղակի փաստ չէ, ապա քրեական դատավարությունում չի կարող հայցի հիմք հանդիսանալ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հարուցման և լուծման համար հիմք են հանդիսանում՝

1. հանցանքի կատարումը,

2. հանցանքի կատարման արդյունքում անմիջապես պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի առկայությունը,

3. հանցանքի և վնասի միջև անմիջական պատճառական կապի առկայությունը²³:

Այսպիսով, քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել միայն վերոնշյալ փաստական հիմքերի առկայության դեպքում, հակառակ պարագայում հայցը քրեական դատավարությունում բավարարման ենթակա չէ:

Հայցի փաստական հիմքից պետք է տարբերել հայցի իրավական հիմքը՝ այն իրավական նորմը /նորմերը/, որը կարգավորում է վիճելի իրավահարաբերությունը:

Ռ.Գ.Պետրոսյանի իրավագի պնդմամբ՝ կարելի է պաշտպանել միայն այն պահանջը, որը բխում է օրենքից, հենվում է օրենքի վրա: Դատարան դիմողը հույս ունի, որ իր սուբյեկտիվ իրավունքը կպաշտպանվի: Եվ որպեսզի դա տեղի ունենա, նա իր պահանջները հիմնավորում է ոչ միայն փաստերով, այլ նաև իրավունքի նորմով /նորմերով/, որն էլ հենց կազմում է հայցի իրա-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

վական հիմքը²⁴:

Այսպիսով, հայցի իրավական հիմքը կազմում են նյութական իրավունքի նորմերը, որոնք կարգավորում են հայցվորի և պատասխանողի միջև առաջացող վիճելի իրավահարաբերությունները, և որոնց հիման վրա դատարանը պետք է որոշում կայացնի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում որպես քաղաքացիական հայցի նյութաիրավական հիմք հանդես է գալիս **քաղաքացիական օրենսդրությունը**, որի տակ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի, հասկացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները, որոնք պետք է համապատասխանեն քաղաքացիական օրենսգրքին:

Այստեղ է, որ հարց է ծագում. **արդյոք միայն քաղաքացիական օրենսդրությունը որպես հայցի իրավական հիմք դիտելը չի՞ սահմանափակում հայցի շրջանակները քրեական դատավարությունում**: Այս հարցադրման էությունն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասում սահմանված է, որ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

Ստացվում է, որ հարկային, ֆինանսական բնույթի և այլ հանցագործությունների դեպքում (որոնցով պատճառված վնասի հատուցման համար հարուցվող հայցի հիմքում դրվում է քաղաքացիական օրենսդրության շրջանակներից դուրս գտվող այլ օրենսդրություն) պատճառված

վնասը հատուցելու համար քրեական դատավարությունում հայց չի կարող հարուցվել:

Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են այն դեպքերը, երբ հարկային, ֆինանսական բնույթի և այլ հանցագործությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման համար քրեական դատավարությունում հարուցվում և դատարանների կողմից լուծվում են քաղաքացիական հայցեր: Ընդ որում՝ հարկային մարմինների ներկայացրած հայցերը, որոնք էլ ճանաչվում են քաղաքացիական հայցվոր այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ այդպիսի հայց կարող է հարուցել միայն դատախազը²⁵:

Այսպես, Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 23-ի դատավճռով Ա.Ս.Թ-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել պատժի ազատազրկում 3 տարի 6 ամիս ժամկետով: Դատարանը բավարարել է հարկային տեսչության ներկայացրած քաղաքացիական հայցը և որոշել է Ա.Ս.Թ-ից որպես հանցագործությամբ պատճառված վնաս հօգուտ Հայաստանի Հանրապետության, բռնագանձել 83560007 ՀՀ դրամ:

Դատավճռի վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարությունում հայցի հարուցման և լուծման համար իրավական հիմք են հանդիսացել քաղաքացիական օրենսդրության շրջանակներից դուրս գտնվող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի և «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի պահանջները, քանի որ դրանց հիման վրա է հաշվարկվել հայցի առարկա համարվող վնասի չափը:

Այսպես, դատավճռի պատճառաբանական մասում կարդում ենք.

«Ա.Ս.Թ-ն մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա 2002 թվականի հոկտեմբերի 21-ից հանդիսանալով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի

հարկային տեսչությունում հաշվառված «ՀՀ քիմիայի և նավթամթերքի բնագավառում համագործակցության միջկառավարական խորհրդի ներկայացուցչություն» օտարերկրյա կապիտալի համատեղ ներդրմամբ ձեռնարկություն ոչ առևտրային ընկերության տնօրենը, ... անմիջական պատասխանատվություն կրելով իրականացրած գործունեությունից առաջացած հարկային պարտավորությունների կատարման համար, Ա.Ս.Թ-ն՝ հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու դիտավորությամբ, սկսած 2006 թվականից խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 1-ին կետի, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի և «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջները, իր գործունեության վերաբերյալ հաշվապահական հաշվառում չի տարել ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմիններին չի ներկայացրել հարկման համար հիմք հանդիսացող 2006-2007 թվականների շահութահարկի և 2006-2008 թվականների ԱԱՀ-ի հաշվարկներն ու հաշվետվությունները, իսկ 2005 թվականի 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկները և տեղեկանքները ներկայացրել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներով և այդ եղանակով չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 83560007 դրամի հարկերի վճարումից, այդ թվում՝ շահութահարկ՝ 17803458 դրամ, ԱԱՀ՝ 65756549 դրամ»:

Պետք է նկատել, որ ընդհանրապես հարկային իրավախախտումների վերաբերյալ գործերով պետությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ հարկային օրենսդրությամբ:

Այսպես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում սահմանված է, որ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման /հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով նախա-

տեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և/կամ գրանցումների վերաբերող/ սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային տեսչություն ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային տեսչությունը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, մասնավորապես՝ հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, հասույթի հաշվարկային 25 տոկոս վերադիրի, օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա: Իսկ ըստ 30-րդ հոդվածի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային տեսչությունն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնելու հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար:

Մեկ այլ դեպքով **Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը 05.12.2008 թվականի թիվ ՏԴ-0028/01/08 դատավճռով ներկայացված քաղաքացիական հայցի հարցը լուծել է՝ ղեկավարվելով «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի պահանջներով:**

Այսպես, դատավճռի պատճառաբանական մասում կարդում ենք.

««Բնապահպանական իրավախախ-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

տումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 10-րդ, 11-րդ կետերում համապատասխանաբար սահմանված է հաշվարկման այն կանոնը, որ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը հաշվարկվում է՝ էլնելով բուսական աշխարհի վնասված օբյեկտների քանակից կամ ծավալից և սահմանված սակագնից, վնասի հատուցման չափը ներառում է վնասված գույքի արժեքը ու այդ գույքի կամ կենսապաշարի օգտագործման համար վճարման ենթակա գումարը, և որ վնասի հատուցման չափը հաշվարկվում է ծառի համապատասխան տեսակի ապօրինի ծառահատման համար սահմանված սակագնի եռապատիկ չափով, երբ ապօրինի ծառահատման փաստը հայտնաբերվում է ծառերի /կոճղերի/ տեսքով: Մինչդեռ սույն գործով ամբաստանյալների կողմից կատարված ապօրինի ծառահատման փաստը հայտնաբերվել է ոչ միայն կոճղերի, այլև հատված ծառերի առկայության տեսքով և ծառերը կամ ապօրինի ծառահատումից գոյացած կենսապաշարը հանձնվել է պետության տնօրինմանը: Ուստի, ծառերի ապօրինի օգտագործման համար օրենքով սահմանված վճարման ենթակա գումարը, այն է՝ ծառի սակագնի եռապատիկ չափը ամբաստանյալներից բռնագանձելու վերաբերյալ պահանջը օրինական է: Ինչ վերաբերում է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2004թ. մայիսի 3-ի թիվ 97 հրամանին, որը վերաբերում է ՀՀ անտառային պետական ֆոնդի հատումներից փայտանյութի բացթողման նվազագույն գների, ապա այն չի կարող դիտվել 2005 թվ մայիսի 3-ին ընդունված հիշյալ օրենքի կատարումն ապահովող իրավական ակտ... »:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ մասում սահմանված է, որ, որպես կա-

նոն, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, սակայն պայմանով, եթե այլ բան նախատեսված չէ բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

Իսկ քանի որ էկոլոգիական հանցագործությունների դեպքում պատճառված վնասի հատուցման հետ կապված առաջացող իրավահարաբերությունները կանոնակարգված են «**Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին**» ՀՀ օրենքով, ուստի ստացվում է, որ էկոլոգիական հանցագործությունների դեպքում հայց հարուցվելու դեպքում դատարանը չի կարող բավարարել և լուծում տալ հայցին, քանի որ այն նույնպես զուրկ է իրավական հիմքից:

Փաստորեն, առանց համապատասխան իրավական հիմքի քրեական դատավարությունում հարուցվում և լուծում են ստանում հայցեր, որոնց քննությունը և լուծումը գործող քրեական դատավարության օրենսդրության իրավակարգավորումների պայմաններում անթույլատրելի են՝ հիշյալ հանցագործությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման հետ կապված առաջացող նյութաիրավական հարաբերությունները քաղաքացիական օրենսդրության շրջանակներից դուրս լինելու պատճառով:

Քաղաքացիական եզրույթը կիրառելի է այն հայցերի նկատմամբ, որոնց նյութաիրավական հիմքը քաղաքացիական օրենսդրությունն է: Քանի որ հարկային և էկոլոգիական հանցագործությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման հարցը լուծելիս դատարանը դեկավարվում է ոչ թե քաղաքացիական օրենսդրությամբ, այլ հարկային, էկոլոգիական իրավահարաբերությունների վերաբերող օրենսդրությամբ, ապա քաղաքացիական եզրույթը չի կարող կիրառելի լինել:

ման հանցագործությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման համար հարուցվող հայցերի նկատմամբ:

Այսինքն, կարելի է հավաստել, որ քրեական դատավարության օրենսգրքում հայցի իրավական հիմքի տեսանկյունից առկա է օրենսդրական բաց:

Այս հարցի առնչությամբ ուշադրության արժանի է Մ.Ռ.Սամիտովի այն պնդումը, որ քրեական և քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերի միասնությունը, ապացուցողական զանգվածի ընդհանրությունը, սուբյեկտների միևնույն շրջանակը, որոնք մասնակցում են այդ իրավահարաբերությունների բացահայտմանը, հնարավորություն են տալիս քրեական դատավարության օրենսդրության բացերի դեպքում կիրառել քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, ընտանեկան, աշխատանքային և իրավունքի այլ ճյուղերի նորմերը, եթե դա չի հակասում քրեական դատավարության սկզբունքներին²⁶: Ելնելով վերոնշյալից հեղինակը հետևություն է անում, որ նպատակահարմար է քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել հատուկ նորմեր, որոնք կոչված կլինեն կարգավորելու քրեական գործում քաղաքացիական հայցի քննության առանձնահատկությունները, քանի որ այդ կանոնների ամրագրումը, ըստ հեղինակի, մեծամասամբ հանում է քրեական դատավարությունում քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, ընտանեկան, աշխատանքային և իրավունքի այլ ճյուղերի նորմերի կիրառման թույլատրելիության վերաբերյալ վեճերը²⁷:

Ա.Գ.Դիկի կարծիքով, նյութական իրավունքի տեսանկյունից քաղաքացիական հայցը կարող է հիմնվել քաղաքացիական, հարկային, բյուջետային, աշխատանքային և այլ նյութական օրենսդրության վրա, որի խախտումն էլ հանցագործության միջոցով անձին պատճառել է վնաս²⁸:

Այս տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ուզբեկստանի

Չանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածը, որի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով վարույթի ընթացքում պատճառված վնասի հատուցման հիմքը, պայմանները, ծավալը և միջոցները որոշվում են քաղաքացիական, աշխատանքային և այլ օրենսդրության ճյուղերի կանոններին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ կարծում ենք՝ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել մի շարք փոփոխություններ և լրացումներ:

1. անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել, որ հայցով որոշումը կայացվում է ոչ միայն քաղաքացիական, այլև հարկային, ֆինանսական, բյուջետային, աշխատանքային, ընտանեկան, էկոլոգիական և օրենսդրության այլ ճյուղերի նորմերին համապատասխան:

2. նկատի ունենալով, որ քաղաքացիական եզրույթը չի կարող կիրառելի լինել այն հայցերի նկատմամբ, որոնց նյութաիրավական կողմը դուրս է քաղաքացիական օրենսդրության շրջանակներից, կարծում ենք, քրեական դատավարությունում հարուցվող հայցը պետք է անվանել ոչ թե «քաղաքացիական», այլ փոխարինել դրան համարժեք այլ եզրույթով:

Մեր կարծիքով, նպատակահարմար է քրեական դատավարությունում հարուցվող հայցը անվանել՝ **«վնասների հատուցման հայցը քրեական դատավարությունում»**:

Այս դեպքում կլուծվի ինչպես ձևի և բովանդակության հարաբերակցության հարցը, այլև մեկ շատ կարևոր հարց ևս՝ հստակ սահմանվում է հայցի տեսակը, որը կարող է հարուցվել քրեական դատավարության կարգով: Սրա պրակտիկ արժեքը այն է, որ կբացառվի հանցագործության հետ կապված տարատեսակ հայցերի քննության պրակտիկան քրեական դատավարությունում, ինչի մասին նշեցինք վերևում:

Ելնելով վերոնշյալից՝ քրեական

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է հայցը բնորոշելիս օգտագործվող

«քաղաքացիական» եզրույթը փոխարինել «վնասների հատուցման» բառերով, իսկ քաղաքացիական հայցվորին և պատասխանողին անվանել ուղղակի հայցվոր և պատասխանող:

- ¹ Տե՛ս Добровольский А.А. Некоторые вопросы исковой формы защиты права. М., 1957, с.39.
- ² Зорин А.И. Гражданский иск в уголовном процессе. Автореф. дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2005.
- ³ Տե՛ս Махов В.Н. Разумовский Д.Б. Гражданский иск в уголовном деле. М., 2009, с.36.
- ⁴ Տե՛ս Рыжаков А.П. Возмещение вреда, причиненного преступлением. М., 1999, с.26
- ⁵ Տե՛ս Махов В.Н. Разумовский Д.Б. նույն տեղում, էջ 48.
- ⁶ Տե՛ս Адоян Ю.Р. К вопросу о гражданском ответчике в советском уголовном процессе // Правоведение. 1966. И 1. С. 67-86. Гуреев П.П. Гражданский иск в уголовном процессе. М., 1977. С. 6.
- ⁷ Տե՛ս Махов В.Н. Разумовский Д.Б. նույն տեղում, էջ 47.
- ⁸ Տե՛ս Добровольский А.А., Некоторые вопросы исковой формы защиты права. М., 1957. С.127-128.
- ⁹ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան 2007, էջ 309:
- ¹⁰ Տե՛ս Батуев В.В. Обеспечение при расследовании преступления гражданского иска потерпевшего. М., 1999. С. 92-95.
- ¹¹ Տե՛ս Батуев В.В. նշվ. աշխ.:
- ¹² Տե՛ս Махов В.Н. Разумовский Д.Б. Гражданский иск в уголовном деле. М., 2009, с. 33. Мазалов А.Г. Гражданский иск в уголовном процессе. Изд. 2-е, исправленное и дополненное. М.: Юридическая литература, 1977,с.30-58,
- ¹³ Мазалов А.Г. Гражданский иск в уголовном процессе. Изд. 2-е, исправленное и дополненное. М.: Юридическая литература, 1977,с.45.
- ¹⁴ Տե՛ս Божьев В.П. Гражданский иск в уголовном процессе // Законность, 2004/7.
- ¹⁵ Այստեղ պետք է նշվի ոչ թե հայցադիմումի հիմքի և չափի ապացուցված լինելու մասին, այլ հայցի հիմքի և չափի:
- ¹⁶ Տե՛ս Мазалов А.Г. նշվ. աշխ., էջ 48:
- ¹⁷ Տե՛ս Махов В.Н. Разумовский Д.Б. նշվ. աշխ., էջ 40:
- ¹⁸ Նկատենք, որ տեսության մեջ նույնպես տարբեր հեղինակների կողմից հիմնավորվում է, որ քրեական դատավարությունում կարող է և պետք է հարուցվեն և լուծվեն ռեգրեսային պահանջները: Այդ մասին մանրամասն տե՛ս Даев В.Г. Современные проблемы гражданского иска в уголовном процессе. Л., 1972. С.58-67. Багаутдинов Ф.Н. Пределы действия гражданского иска в уголовном деле стоит расширить //Российская юстиция. 2003/3. С.36.
- ¹⁹ Мазалов А.Г. նշվ. աշխ., էջ 73:
- ²⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Божьев В.П. Гражданский иск в уголовном деле или применение гражданского процессуального права //Сов. Гос. и право. 1986/8, с.72-79.
- ²¹ Տե՛ս Зорин А.И. Гражданский иск в уголовном процессе. Автореф. дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2005.
- ²² Տե՛ս Кожин И.Г. Уголовно-процессуальный механизм обеспечения воыещения вреда физическому лицу. Автореф. дисс. канд. юрид. наук. Тюмень, 2006.
- ²³ Տե՛ս օրինակ Махов В.Н. Разумовский Д.Б. Гражданский иск в уголовном деле. М., 2009, с.53-54.
- ²⁴ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007, էջ 309:
- ²⁵ Այս հարցին կանդիդատները սուբյեկտները քննարկելիս:
- ²⁶ Տե՛ս Самитов М.Р. Производство по рассмотрению и разрешению гражданского иска в российском уголовном процессе // Дисс. на соискание ученой степени к.ю.н. Ижевск, 2006. с. 35.
- ²⁷ Տե՛ս նույն տեղում:
- ²⁸ Տե՛ս Дык А.Г. Актуальные вопросы гражданского иска в уголовном процессе: Автореф. дисс. на соискание ученой степени к.ю.н. М., 2007.

ՔՐԵԱԿԱՆՅԱՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Միսակ ՍԱՐԿՈՍՅԱՆ

*ՀՀ ռատիկանության ակադեմիայի
քրեական իրավունքի և քրեական
դատավարության ամբիոնի ուսումնական
սահիտենտ, ռատիկանության ավագ լեյտենանտ*

Միջազգային և ներպետական զարգացումները, հանցավորության դեմ բոլոր մակարդակներում պայքարի միտումները մեկ անգամ ևս փաստում են, որ պայքարի շարունակական կատարելագործման անհրաժեշտություն է զգացնում:

Հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրականացվող միասնական պետական քաղաքականությունը կոչվում է քրեական քաղաքականություն: Մասնագետները քրեական քաղաքականության ուղղությունների մեջ առանձնացնում են քրեաիրավական, քրեադատավարական, քրեակատարողական, քրեաբանական, վարչաիրավական, օպերատիվ-հետախուզական տարատեսակները¹: Քրեաիրավական քաղաքականությունն իրենից ներկայացնում է քրեական օրենսդրության հիմնավորման, ձևակերպման և իրացման փուլերում պետական իշխանության մարմինների կողմից իրականացվող գործունեություն, որն ուղղված է հանցավոր ոտնձգություններից հասարակության պաշտպանությանն ու հանցագործությունների կանխմանը²: Պետության քրեաիրավական քաղաքականության իրացման կարևոր ձևեր են քրեականացումը և ապաքրեականացումը, որոնք, արտացոլելով քրեաիրավական կարգավորման ոլորտում առկա հասարակական պահանջումները, իրականացնում են որոշակի գործառույթներ:

«Գործառույթ» (լատիներեն՝ *functio*) բառը նշանակում է կատարում³: Իրավունքի տեսության մեջ իրավունքի գործառույթները բնորոշվում են որպես «իրավական ներգործության ուղղություններ, որոնք արտահայտում են հասարակական

հարաբերությունների կազմակերպման /կանոնակարգման/ գործընթացում իրավունքի դերը»⁴: Սոցիոլոգիական հետազոտություններում «գործառույթ» հասկացությունն ունի մի քանի նշանակություն՝ երկու կամ ավելի ժամանակավոր գործունեների փոխազդեցության պայմաններում դրանց կախվածության արտահայտություն, հետազոտության օբյեկտի ներսում տեղի ունեցող գործընթացների համակցություն, որևէ սոցիալական գործողության, գործընթացի, երևույթի ցանկալի արդյունք, այդ գործողության, գործընթացի, երևույթի բոլոր /ինչպես սպասելի, այնպես էլ կողմնակի/ հետևանքների համակցություն⁵:

Քրեականացման և ապաքրեականացման գործառույթները կարելի է բնորոշել որպես հասարակական կյանքի, մարդկանց գիտակցության ու վարքագծի և պետության իրավական համակարգի վրա այդ գործընթացների ազդեցության ուղղություններ:

Հասարակական անհրաժեշտությամբ պայմանավորված լինելու և մարդկանց վարքագծի նորմատիվ կարգավորման շնորհիվ քրեականացումն ու ապաքրեականացումը հանդես են գալիս որպես սոցիալական վերահսկողության⁶ համակարգի տարրեր: Սոցիալական վերահսկողության համակարգում քրեականացման և ապաքրեականացման գործառույթների պարզումը թույլ է տալիս բացահայտել քրեաիրավական արգելքի սահմանման և վերացման տեղն ու նշանակությունը սոցիալական վերահսկողության գործընթացների ու մեխանիզմների համակարգում, ինչը խիստ կարևոր է, օրենսդրի՝ հակահասարակական վարքագծին արձագանքելու միջոցների զինանոցում ընտրություն կատարելիս քրեականացման և ապաքրեականացման կարգավորիչ հնարավորությունները չզերազնահատելու համար:

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

Այլ խոսքով՝ քրեականացման և ապաքրեականացման գործընթացների դիտարկումը սոցիալական վերահսկողության համակարգում թույլ կտա ի հայտ բերելու սոցիալական նորմերը խախտող վարքագծին արձագանքելու քրեաիրավական արգելքի այլընտրանքային տարբերակները և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում լուծելու դրանց կիրառման նպատակահարմարության հարցը:

Գրականության մեջ ներկայացված է սոցիալական վերահսկողության իրականացման եղանակների և միջոցների հետևյալ համակարգը. նախ՝ հասարակությունը սահմանում է արժեքներն ու նորմերը, երկրորդ՝ ապահովում է դրանց փոխանցումը օրենքների, ավանդույթների, սովորույթների միջոցով, երրորդ՝ ապահովում է անհատների կողմից այդ նորմերի և արժեքների յուրացումն ու ինտերիորիզացիան դրանց պահպանման համար խրախուսելու կամ խախտման համար պատժելու միջոցով, չորրորդ՝ միջոցներ է ձեռնարկում վարքագծի անցանկալի ձևերի կանխման ուղղությամբ⁷:

Որպես սոցիալական վերահսկողության համակարգի տարրեր՝ քրեականացման և ապաքրեականացման գործընթացներն իրականացնում են տեղեկատվական և արժեքային գործառույթներ, իսկ քրեականացումը՝ նաև հանցագործությունների կանխման գործառույթ:

Իսկ որպես պետության քրեաիրավական քաղաքականության իրացման ձևեր՝ քրեականացումն ու ապաքրեականացումը կատարում են հանցավորության մակարդակի կարգավորման, պետական իշխանության հեղինակության պահպանման ու ամրապնդման և համակարգային-իրավական գործառույթներ:

Քրեականացման և ապաքրեականացման համակարգային-իրավական գործառույթի էությունը հանգում է հետևյալին:

Ինչպես նշում է Ա.Ն.Իզնատովը, քրեական քաղաքականությունը պետության սոցիալ-իրավական քաղաքականության մասն է⁸: Դրանից բխում է, որ քրեական քաղաքականությունը մի կողմից պետք է համապատասխանի ողջ պետական քաղաքականության նպատակներին ու սկզբունքներին, իսկ մյուս կողմից՝ բնութագրվի ներքին միասնականությամբ և համաձայնեցվածությամբ: Հանցավորության դեմ պայքարի համաձայնեցված քաղաքականության հայեցակարգի մշակման և իրականացման կարևորությունն ընդգծվել է Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների նախարարների խորհրդի 1996թ. սեպտեմբերի 5-ի «Փոփոխվող Եվրոպայում հանցավորության դեմ պայքարի քաղաքականության մասին» N 8/R/96/8 հանձնարարականում: Քրեական քաղաքականության իրավաստեղծ գործունեության արդյունքում ընդունված օրենսդրական և այլ իրավական ակտերը պետք է միասնական համակարգ կազմեն մյուս բոլոր իրավական ակտերի հետ: Իրավունքի տեսության մեջ որպես իրավունքի համակարգին բնորոշ գծեր են համարվում դրա կառուցվածքային տարրերի /ճյուղերի, ինստիտուտների, նորմերի/ միասնությունը, փոխգործողությունը, համաձայնեցվածությունը⁹: Ս.Ս.Ալեքսեևը նշում է, որ իրավական դրույթներն իրենց բնույթով այնպիսին են, որ դրանց գոյությունն ու գործառնությունը հնարավոր են միայն համաձայնեցված և միասնականացված լինելու դեպքում¹⁰: Բացառություն չէ նաև ՀՀ քրեական իրավունքը, որը՝ որպես իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, մի կողմից միասնական, փոխգործող և համաձայնեցված իրավանորմերի ու ինստիտուտների ամբողջություն է, իսկ մյուս կողմից՝ որոշակի փոխգործակցության և համաձայնեցվածության մեջ է իրավունքի այլ ճյուղերի հետ: Այդ պատճառով գրականության մեջ առանձնացվել է քրեական իրավունքի համակարգային-իրավական գործառույթը¹¹:

Այդ գործառույթը բնութագրական է նաև

քրեականացմանը և ապաքրեականացմանը, քանի որ քրեաիրավական նորմերն էական նշանակություն ունեն իրավական համակարգի միասնականության և փոխգործակցության ապահովման համար: Ընդ որում՝ քրեականացման և ապաքրեականացման համակարգային-իրավական գործառույթն իրականացվում է ոչ միայն ներծյուղային /քրեաիրավական/, այլև միջծյուղային մակարդակում:

Այսպես, կոնկրետ արարքների քրեականացումն ու ապաքրեականացումը պայմանավորում են քրեական իրավունքի ընդհանուր մասի որոշ նորմերի իրացումը: Օրինակ, արարքի հանցավորության վերացումը հանգեցնում է քրեական օրենքի հետադարձ ուժը նախատեսող /ՀՀ քրեական օրենսգրքի /այսուհետ՝ քր.օր./ հոդված 13, առաջին մաս/ նորմի կիրառմանը, իսկ արարքի հանցավորության սահմանման փաստը քրեական օրենքին հետադարձ ուժ տալու արգելք է / քր.օր.-ի հոդված 13, երկրորդ մաս/: Արարքի հանցավորության վերացումը նաև այդ արարքի կատարման համար պատիժ կրած անձի իրավական կարգավիճակի փոփոխման հիմք է: Այսպես, քր.օր.-ի հոդված 84-ի երրորդ մասի համաձայն՝ դատվածություն չունեցող է համարվում այն անձը, որը պատիժ է կրել այնպիսի արարքի համար, որի հանցավորությունը վերացված է օրենքով:

Քրեադատավարական որոշ նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ քրեականացումն ու ապաքրեականացումը համակարգային-իրավական գործառույթ են իրականացնում նաև միջծյուղային մակարդակում: Այսպես, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի /այսուհետև՝ քր.դատ.օր./ հոդված 52-ի երկրորդ մասի երկրորդ պարբերության՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, եթե դատապարտյալը եռամսյա ժամկետում չի դիմում դատարան դատական ակտի վերա-

մայման նպատակով, ապա դատախազը եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան»: Տվյալ դեպքում, փաստորեն, արարքի հանցավորության վերացումը հանդես է գալիս որպես իրավաբանական փաստ, որի հիման վրա ծագում է քրեադատավարական իրավահարաբերություն: Քր.դատ.օր.-ի՝ հանցանք կատարած անձանց հանձնումը կարգավորող հոդված 487-ի երկրորդ մասը սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի...»: Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ «Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի...»¹²: Այս դեպքերում էլ որպես քրեադատավարական իրավանորմերի կիրառման պայման հանդես է գալիս արարքի հանցավորության սահմանված լինելու փաստը:

Ամիրաժեշտ ենք համարում կանգ առնել գործնական կարևոր նշանակություն ունեցող մի հարցի վրա, որը վերաբերում է միջծյուղային մակարդակում ապաքրեականացման համակարգային-իրավական գործառույթին: Եթե կատարման պահին արարքը համարվել է հանցագործություն, սակայն քրեական գործի վարույթի ընթացքում քրեական օրենքով այդ արարքի հանցավորությունը վերացվել է, ապա տվյալ օրենքին հետադարձ ուժ տալու կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում կիրառել համապատասխան քրեադատավարական նորմը: Այնինչ քր.դատ.օր.-ի հոդված 35-ում նշված չէ արարքի հանցավորության վերացումը որպես քրեական գործի վարույթը և քրեական հե-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

տապնդունը բացառող հանգամանք : Ինչպես ցույց է տալիս պրակտիկայի ուսումնասիրությունը, նման դեպքերում քրեական գործի վարույթը կարճվում է քր. դատ.օր.-ի հոդված 35-ի առաջին մասի երկրորդ կետի հիման վրա /արարքի մեջ հանցակազմ չկա/: Գտնում ենք, որ արարքի հանցավորության վերացման դեպքում նշված հիմքով քրեական գործի վարույթը կարճելը ճիշտ չէ: Ասվածը հիմնավորելու համար բերենք հետևյալ օրինակը: Արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի վարույթի կարճման դեպքում անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ /քր.դատ.օր.-ի հոդված 66-ի առաջին մաս/: Ստացվում է, որ քննարկվող դեպքում արդարացված կհամարվի և համապատասխան իրավունքներով կօժտվի նաև այն անձը, ում նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է նրա կողմից կատարված արարքի ապաքրեականացման հիմքով: Համաձայն քր. դատ.օր.-ի հոդված 66-ի երրորդ մասի՝ արդարացվածն իրավունք ունի պահանջել իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու հետևանքով պատճառված գույքային հատուցում ամբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները: Մինչդեռ, եթե համապատասխանաբար անձի ձերբակալման, կալանավորման կամ որպես մեղադրյալ ներգրավելու պահին նրա կատարած արարքը համարվել է հանցագործություն, ապա ստացվում է, որ նշված գործողությունների կատարման հիմքեր եղել են: Հետևաբար, նման իրավիճակում քրեական գործի վարույթի կարճումը չպետք է ենթադրի ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման իրավունք: Բացի այդ, քր.դատ.օր.-ի հոդված 66-ի իններորդ և տասներորդ մասերը

նախատեսում են նաև արդարացվածի՝ բարոյական վնասը հատուցելու իրավունքը: Մասնավորապես, արդարացվածի պահանջով դատարանը կամ քննություն իրականացնող մարմինները պարտավոր են այդ մասին երկշաբաթյա ժամկետում տեղյակ պահել անձի նախկին և ներկա աշխատանքի, ուսման և բնակության վայր, լրատվության միջոցը, որը հրապարակել է քրեական գործի վարույթով կասկածյալին կամ մեղադրյալին նշավակող տեղեկություններ, պարտավոր է մեկ ամսվա ընթացքում հայտնել գործով կայացված վերջնական որոշման մասին, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է գրավոր ներողություն հայցել արդարացվածից: Բարոյական վնասի հատուցումը, փաստորեն, ենթադրում է անձի պատվի, արժանապատվության և բարի համբավի վերականգնում, մինչդեռ քննարկվող իրավիճակում արարքի կատարման պահին անձը գիտակցում է, որ կատարում է իրավաբանորեն և բարոյապես դատապարտելի արարք, որով արատավորում է իր բարի համբավը: Հետևաբար, ապաքրեականացման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում անձին չպետք է վերապահվի բարոյական վնասի հատուցման իրավունք: Իսկապես, անիմաստ կլիներ քրեական հետապնդման մարմնի վրա պարտականություն դնել գրավոր ներողություն հայցել անձից ընդամենը այն բանի համար, որ վերջինիս կատարած արարքը օրենսդրորեն դադարել է հանցավոր լինելուց: Եվ քանի որ ապաքրեականացման տեղեկատվական գործառույթն իրականացվում է ընդհանուր կարգով և վերաբերում է ապաքրեականացված բոլոր արարքներին, ապա այլևս չի առաջանում ապաքրեականացված կոնկրետ, եզակի արարքի կապակցությամբ քրեական գործի վարույթի կարճման վերաբերյալ անձի աշխատանքի, ուսման և բնակության վայր հայտնելու անհրաժեշտություն: Այսպիսով, արարքի ապաքրեականացման դեպքում քրեական գործի վարույթը չպետք է կարճ-

վի որևէ արդարացնող հիմքով ընդհանրապես և արարքում հանցակազմի բացակայության հիմքով մասնավորապես:

Քր.դատ.օր.-ի հոդված 35-ում նշված է, որ քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող, այսպես կոչված՝ ոչ արդարացնող հիմքերից ապաքրեականացմանը որոշակիորեն վերաբերում է նշված հոդվածի առաջին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքը՝ անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից: Ապաքրեականացման դեպքում որպես քր.օր.-ի Ընդհանուր մասի այդպիսի դրույթ հանդես է գալիս հոդված 13-ում ամրագրված՝ քրեական օրենքի հետադարձ ուժը նախատեսող նորմը: Սակայն պետք է նշել, որ քր.օր.-ի՝ արարքի հանցավորությունը վերացնող քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ դրույթը չի կարող քրեական գործի վարույթը կարճելու ինքնուրույն նյութական հիմք դառնալ, քանի որ կոնկրետ արարքի հանցավորության վերացումը կատարվում է քր.օր.-ի ոչ թե Ընդհանուր, այլ Հատուկ մասում:

Ուստի գտնում ենք, որ ապաքրեականացման համակարգային-իրավական գործառույթի լիարժեք և միատեսակ իրականացումն ապահովելու համար արարքի հանցավորության վերացումն անհրաժեշտ է նախատեսել որպես քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող ինքնուրույն, ոչ արդարացնող դատավարական հիմք: Ընդ որում, այդ հիմքը պետք է տարածվի միայն այն դեպքերի վրա, երբ արարքի հանցավորության վերացումը տեղի է ունեցել այդ արարքը կատարելուց հետո և մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Բանն այն է, որ եթե արարքն ապաքրեականացվել է մինչև դրա կատարումը, ապա արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելը և քրեական գործի վարույթը կարճելն իրա-

վաչափ են, քանի որ անձի արարքում հանցակազմը բացակայում է ի սկզբանե: Իսկ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո արարքի ապաքրեականացումը վերաբերում է ոչ թե քրեադատավարական, այլ քրեակատարողական իրավունքի կարգավորման ոլորտին: Այս առումով պետք է նշել, որ թեև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 112-ի առաջին մասում որպես պատժից ազատելու ինքնուրույն հիմք նշված չէ արարքի ապաքրեականացումը, սակայն այդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է. «Օրենքով կարող են նախատեսվել պատժից ազատելու այլ հիմքեր»: Այսպես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի /18.04.2003թ./ հոդված 3-ի առաջին մասը սահմանում է. «2003 թվականի օգոստոսի մեկից հիմնական կամ լրացուցիչ պատժից ազատել 1961 թվականի մարտի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն այն արարքների համար դատապարտված անձանց, որոնք, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն, հանցագործություն չեն համարվում»:

Ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկում ենք արարքը կատարելուց հետո, բայց նախքան դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, դրա ապաքրեականացման դեպքում քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու համապատասխան դատավարական հիմք ստեղծելու և այդ հարցում իրավակիրառ պրակտիկայի միասնականությունն ապահովելու նպատակով քր.դատ.օր.-ի հոդված 35-ի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1 կետով՝ «արարքը կատարելուց հետո, սակայն նախքան դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը, արարքի հանցավորությունը վերացվել է»:

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

- ¹ Տե՛ս Алексеев А.И., Овчинский В.С., Побегайло Э.Ф. Российская уголовная политика: преодоление кризиса. М., 2006, էջեր 14-15:
- ² Տե՛ս В.В.Мальцев, Уголовно-правовая политика и принципы уголовного права//Современные проблемы уголовной политики, уголовного права, криминологии и уголовно-исполнительного права. Академия управления МВД России. Сборник научных статей. М., 2007, էջեր 15-16:
- ³ Տե՛ս Первый толковый БЭС. СПб., 2006, էջ 1937:
- ⁴ Տե՛ս Алексеев С.С. Общая теория права. Том 1, М., 1981, էջ 191:
- ⁵ Տե՛ս Кудрявцев В.Н., Казимирчук В.П. Современная социология права. М., 1995, էջ 65:
- ⁶ Սոցիալական վերահսկողությունը սոցիալական համակարգի ինքնակարգավորման եղանակն է, որը նորմատիվ /այդ թվում՝ իրավական/ կարգավորման միջոցով ապահովում է այդ համակարգի բաղկացուցիչ տարրերի կարգավորված փոխգործողությունը: Տե՛ս Кудрявцев В.Н., Дагель П.С. и др., Основания уголовно-правового запрета /Криминализация и декриминализация/, М., 1982, էջ 121:
- ⁷ Տե՛ս Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период, Ереван, 2007, էջ 184:
- ⁸ Տե՛ս Игнатов А.Н. Уголовное право: понятие, предмет и система//Уголовное право России: в 2 т. /Под. ред. А.Н.Игнатова, Ю.А.Красикова, Т.1, Общая часть, М.,1999, էջեր 3-4:
- ⁹ Տե՛ս Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права, М., 1997, էջ 349:
- ¹⁰ Տե՛ս Алексеев С.С. Աշվ. աշխ., էջ 242:
- ¹¹ Տե՛ս Злобин Г.А. О необходимости концептуального подхода к совершенствованию законодательства //Конституция СССР и дальнейшее укрепление законности и правопорядка, М., 1979, էջ 76:
- ¹² Այս դրույթներն ամրագրված են նաև Քիչնկի «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2002թ. կոնվենցիայի /Յայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 19.02.2005թ./ հոդված 66-ի /«Հանձնան պարտավորությունը»/ երկրորդ և երրորդ մասերում:

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՍՈՒՔՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Քրիստինե ԱՐՍԵՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվ. ԵՊՄՀ իրավագիտության
և նրա մեթոդիկայի դասավանդման
ամբիոնի դասախոս*

Հանցավորի անձը միշտ եղել և մնում է կրիմինոլոգիայի կենտրոնական հիմնախնդիրներից մեկը: Բանն այն է, որ եզակի հանցագործությունը վարքագծի հոգեբանական ակտ է, որը պայմանավորված է այն կատարողի անձնային առանձնահատկություններով: Ուստի հանցանք կատարող անձանց հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը անչափ կարևոր է հանցագործության պատճառական մեխանիզմը բացահայտելու համար:

Ներկայումս առկա են հանցագործի անձի և նրա վարքագծի ուսումնասիրության բազմաթիվ մոտեցումներ ու տեսություններ: Վերջին ժամանակներս հետազոտողները մեծ ուշադրություն են դարձնում անձի մոտիվացիոն ոլորտի, նրա մեջ հանցավոր մտադրությունների ծագման մեխանիզմի հարցերին: Հիմնական խնդիրը հանցավոր վարքագծի պատճառահետևանքային կապի և արարքի դրդապատճառների բացահայտումն է:

Դրդապատճառի ձևավորումը մարդու վարքագծի հիմնական օղակն է: Դրդապատճառը այն հոգեբանական երևույթն է, որը մղում է մարդուն որոշակի արարքի¹: Հանցավոր վարքագծի դրդապատճառ են հանդիսանում այն հոգեբանական երևույթները, որոնք խթանում, ուղղորդում են մարդու հակաիրավական գործողությունը կամ անգործությունը²: Գոյություն ունեն դրդապատճառների բազմաթիվ դասակարգումներ: Իրավաբանական հոգեբանության մեջ (նաև կրիմինոլոգիայում) առանձնացվում են հակասոցիալական վարքագծի հոգեբանական, խորքային դրդապատճառները, որոնց թվին դասվում են ինքնահաստատման, պաշտպանական, տեղակալ-

ման, խաղային, ինքնաարդարացման դրդապատճառները: Որոշ հեղինակներ առանձնացնում են ավելի խորքային ու ֆունդամենտալ դրդապատճառներ՝ կենսաբանական կամ սոցիալական գոյությունը պաշտպանելու³, բացասական հույզեր առաջացնող օբյեկտը չեզոքացնելու և այլն:

Հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմը բացահայտելու հոգեբանական մոտեցումը անհրաժեշտ է վարքագծի սուբյեկտիվ պատճառները ճիշտ հասկանալու, շատ դեպքերում նաև քրեաիրավական հարցեր լուծելու, մասնավորապես քրեական պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող որոշ հանցամանքներ ձևակերպելու ու ճիշտ օրենսդրական բնորոշում տալու, դրանց շրջանակը ընդլայնելու համար: Պետք է իմանալ, սակայն, որ հոգեբանությունը չի կարող գնահատական տալ արարքի դրդապատճառներին: Այն կարող է միայն բովանդակային գնահատական տալ, ասենք, պահանջմունքին, որն ընկած է դրդապատճառի հիմքում, բացահայտել կոնկրետ արարքին մղող իրական, իմաստային դրդապատճառը, բայց ոչ բարոյականության տեսանկյունից գնահատել այն⁴:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ճիշտ չէ նաև այն դրույթը, թե հանցավոր դրդապատճառներ չկան, և որ մարդը պատասխանատվության է ենթարկվում կատարած հանրորեն վտանգավոր արարքի, այլ ոչ թե դրա իմաստի համար: Յու.Մ. Անտոնյանը այս կապակցությամբ նշում է, որ հակասոցիալական դրդապատճառներ չկան. հանցավոր կարող է լինել միայն արարքը, իսկ դա կախված է այն բանից, թե դրդապատճառի իրագործման համար ինչ միջոցներ են ընտրվում, ինչպես նաև՝ անձի ուղղվածությունից⁵:

Նշված հայեցակարգում դրդապատճառը, մեր կարծիքով, հանգեցվում է բացառապես պահանջմունքին, որն իրոք չի կա-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

րող հանցավոր լինել, որովհետև սննդի, քնի, սեռական և մյուս պահանջմունքները բացառապես կենսական բնույթ ունեն: Հոգեբանության մեջ և կրիմինալոգիայում առանձնացվող վերը նշված դրդապատճառներն էլ ըստ էության չեն կարող գնահատվել որպես հանցավոր, որովհետև ինքնահաստատման, պաշտպանական և մյուս դրդապատճառները, այդ թվում սեփական կենսաբանական կամ սոցիալական գոյությունը պաշտպանելու ցանկությունը, կարող են ընկած լինել ինչպես հանցավոր, այնպես էլ ոչ հանցավոր վարքագծի հիմքում: Բացի դա, ինքնահաստատումը, պաշտպանությունը ոչ թե դրդապատճառ են, այլ իրականում պահանջմունք: Այլ հարց է, որ այդ պահանջմունքների հիման վրա ձևավորվում են ինքնահաստատման, պաշտպանական և այլ բնույթի դրդապատճառներ: Ուստի կարծում ենք, որ ճիշտ են այն հեղինակները, որոնք գտնում են, որ դրդապատճառը բարդ համակարգային երևույթ է, որի կառուցվածքի մեջ մտնում է նաև պահանջմունքի բավարարման միջոցը⁶: Ընդ որում, այդ միջոցը նույնպես մոտիվացիոն, իմաստային նշանակություն ունի: Հենց վերջինս է, որ կարող է հակասոցիալական, հանցավոր բնույթ ու բովանդակություն ունենալ և թույլ տալ բարոյական կամ իրավական տեսանկյունից գնահատական տալու արարքի կատարման դրդապատճառին:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ հանցավոր վարքագծի դրդապատճառները բացահայտելու գործընթացում հոգեբանական մոտեցումը չխաթարելու և միաժամանակ քրեաիրավական պրակտիկայի պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ է անձի վարքագծի ուսումնասիրության այլ մոտեցում, որը ժամանակին առաջ էր քաշվել խորհրդային ուրոշ հոգեբանների (Պլատոնով, Լեոնտև, Ռուբինշտեյն) կողմից: Խոսքը անձի հիմ-

նական, սոցիալապես պայմանավորված ենթակառուցվածքների մասին է, որոնցից գլխավորը անձի ուղղվածությունն է՝ որպես նրա մեջ առկա հիմնական մղիչ ուժերի համակարգ:

Իրավաբանական հոգեբանության մեջ անձի ուղղվածությունը բնորոշվում է որպես նրա կայուն մղումների համակարգ, որը որոշում է անձի սոցիալական ակտիվությունը, տարբեր երևույթների, այդ թվում՝ սոցիալապես օգտակար, կամ հակառակը՝ հակահասարակական գործունեության նկատմամբ ընտրողական վերաբերմունքը:

Անձի ուղղվածություն հասկացությունը հոգեբանության մեջ առաջին անգամ ներմուծեց Ս.Լ. Ռուբինշտեյնը⁷, բնութագրելով այն որպես այնպիսի դինամիկական միտումների համակարգ, որոնք որպես դրդապատճառ որոշում են մարդկային գործունեությունը, և որոնք, իրենց հերթին, որոշվում են մարդու խնդիրներով ու նպատակներով: Դինամիկական միտում ասելով Ռուբինշտեյնը հասկանում էր պահանջմունքների (ցանկությունների) հետևանքով ծագող ներքին լարվածությունը:

Ներկայումս անձի ուղղվածությունը բնորոշվում է որպես բարդ երևույթ, որն ունի իր տարրերը: Այդպիսի տարրեր են պահանջմունքները, համոզմունքները, հայացքները, դիրքորոշումները, արժեքային կողմնորոշումները, հետաքրքրությունները, աշխարհայացքը: Ընդ որում, նշված տարրերից մեկը գերակայում է, իսկ մյուսները հենքային դեր են կատարում: Անձի ուղղվածության այս ներքին տարրերն էլ հանդիսանում են դրդապատճառի ձևավորման գործուն ուժ⁸:

Անձի հոգեբանության մեջ ուղղվածությունը առաջնային, համակարգաստեղծ դեր է կատարում: Այն որոշում է անձի ակտիվության և երևույթների նկատմամբ վերաբերմունքի ընտրողական բնույթը, այդ թվում՝ իրավական համակարգի նկատմամբ վերաբերմունքը: Անձի ուղղվածության տարրերը այս գործընթացի մեջ են

ներքաշում նաև հոգեբանական մյուս ենթակառուցների տարրերին՝ ազդելով դրանց աստիճանի, բնույթի և գործողության եղանակների վրա և ուղղորդելով դրանց: Դրա համար էլ հոգեբանական այլ ենթակառուցներում առկա հանցածին նախադրյալները չեն կարող արտահայտվել, քանի դեռ չեն «սանկցավորվել» ուղղվածության կողմից, դրանում առկա խեղաթյուրումների կողմից: Նույնիսկ պսիխոպաթիկ անձանց կողմից կատարվող հանցագործությունները պայմանավորված են ոչ թե ինքնին պսիխոպաթիայով, այլ այդ հիվանդության և անձի ուղղվածության մեջ առկա խեղաթյուրումների համադրմամբ⁹:

Ընդհանուր առմամբ ուղղվածության բոլոր տարրերը կարելի է դասակարգել չորս խմբի.

1. պահանջմունքները և դրանց արտահայտման ձևերը (տենչանք, ցանկություն)
2. հետաքրքրությունները
3. աշխարհայացքը, որը դրսևորվում է համոզմունքների, հայացքների, իդեալների մեջ
4. դիրքորոշումները և դրանց տեսակները՝ կարծրատիպերն ու արժեքային կողմնորոշումները:

Այս տարրերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ մղումներ (պահանջմունքներ, տենչանք, ցանկություն) և մտադրություններ (արժեքային կողմնորոշումներ): Յուրաքանչյուր խմբում խեղաթյուրման չափանիշները յուրահատուկ են:

Դրդապատճառի ձևավորման մեջ գլխավոր դերը պատկանում է խեղաթյուրված պահանջմունքներին: Մարդկանց բոլոր պահանջմունքները կարելի է դասակարգել կենսական (սննդի, քնի, սերունդներ ունենալու և այլն), նյութական (հագուստի, բնակարանի, նյութական բարիքների և այլն), սոցիալական (անվտանգության, հարգանքի, ինքնահաստատման և այլն) և հոգևոր (արդարության, զեղեցկության և այլն) պահանջմունքների:

Ամեն մի պահանջմունք չէ, որ կարող է հանցավոր վարքագծի աղբյուր հանդիսա-

նալ: Կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ հիմնականում հանցավոր վարքագծի մոտիվացիայի աղբյուր են հանդիսանում նյութական, սեռական և ինքնահաստատման պահանջմունքները¹⁰: Իհարկե չի կարելի պնդել, թե օրինապահ քաղաքացիների համար այս պահանջմունքները պակաս նշանակալից են: Եական տարբերությունը օրինապահ քաղաքացիների և հանցանք կատարող անձանց միջև այն է, որ վերջիններիս մեջ նյութական և հոգևոր պահանջմունքները աններդաշնակ են զարգացած, գերակայում են առաջինները, իսկ շատ պահանջմունքներ էլ զերաճած են, ուռճացված: Նման դեպքերում պահանջմունքների բավարարումը դժվարանում է, շատ դեպքերում՝ դառնում անհնար: Անձի համար նշանակալից պահանջմունքի արգելափակման դեպքում նրա մեջ ծագում է հոգեբանական լարվածության, ֆրուստրացիայի վիճակ և ամեն գնով, այդ թվում՝ հակաիրավական միջոցներով այդ վիճակից դուրս գալու, պահանջմունքը բավարարելու ձգտում:

Հաջորդ տարրը, որը դեր է կատարում դրդապատճառի ձևավորման մեջ, հետաքրքրությունն է: Հետաքրքրությունը անձի կենտրոնացումն է որոշակի օբյեկտի վրա, որը պայմանավորված է անձի համար այդ օբյեկտի նշանակալիությամբ և գայթակղիչ լինելով: Որևէ բանի նկատմամբ կայուն և խոր հետաքրքրությունը կարող է մղել անձին որոշակի գործունեության, այդ թվում՝ հակաիրավական: Հետաքրքրությունը սուբյեկտի գիտակցական-հոգեբանական ձգտումն է դեպի այն առարկաները, որոնք նրա համար բարիք են: Այդ բարիքներից կախված՝ առանձնացնում են նյութական, տնտեսական, քաղաքական, բարոյական, կրոնական, զեղազիտական հետաքրքրություններ: Ընդ որում, հետաքրքրությունները ընդգրկում են՝ 1) գործունեության նպատակը, 2) այդ նպատակին հասնելու արարքների ծրագիրը, 3) հետաքրքրության առարկայի նկատմամբ

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

հուզական-կամային ձգտումը:

Եթե պահանջումները կարող են լինել նորմալ և խեղաթյուրված, ընդ որում, վերջիններիս բավարարումը կարող է հանգեցնել անձի և հասարակության միջև կոնֆլիկտի, ապա հետաքրքրություններն ինքնին հանդիսանում են կոնֆլիկտի պատճառ: Դրան հանգեցնում են անձի հետաքրքրությունների և հասարակության մեջ ընդունված վարքագծի նորմերի միջև եղած հակասությունները: Օրինակ՝ նորմը պահանջում է ուրիշների մասին հոգ տանել, իսկ տնտեսական հետաքրքրությունը մղում է նյութական բարիքների կուտակման: Կարող է հակասություն առաջանալ նաև տարբեր սուբյեկտների միևնույն հետաքրքրությունների միջև, որոնք ուղղված են նույն օբյեկտին:

Հետաքրքրությունը շատ մոտ է պահանջումներին և տարբերվում է նրանից միայն այն բանով, որ ընգրկում է ինչպես պահանջումների, այնպես այն միջոցների ու եղանակների գիտակցումը, որոնց միջոցով անձը կարող է բավարարել պահանջումները: Մարդու տարբեր հետաքրքրությունների հավասարակշռումը որոշակի կարգավորում է անձի վերաբերմունքը կյանքի նպատակների և դրանց հասնելու միջոցների նկատմամբ, անձի արժեքային համակարգի միջուկի դեր է կատարում և ծառայում է որպես նրա կենսական դիրքորոշման առաջնային բնութագրիչ¹¹:

Նախքան պահանջումները և հետաքրքրությունը կդառնան հանցագործության դրդապատճառ, անձը պետք է ևս մեկ ներքին արգելք հաղթահարի: Խոսքն արժեքային կողմնորոշումների մասին է: Արժեքները արտահայտում են անձի սուբյեկտիվ վերաբերմունքը սոցիալական իրականության նկատմամբ, որոշում են անձի ուղղվածության բովանդակային կողմը, կազմում են այլ մարդկանց, ինքն իր նկատմամբ անձի սուբյեկտիվ վերաբերմունքի հիմքը, էա-

կան ազդեցություն են ունենում սուբյեկտի գործունեության բոլոր կողմերի վրա: Արժեքային կողմնորոշումները խթանում են վարքագծի դրդապատճառների կազմավորումը, անրապնդում են վարքագծի սոցիալական կամ հակասոցիալական ուղղվածությունը: Որոշ դեպքերում արժեքային կողմնորոշումները կարող են արգելափակել վարքագծի հակասոցիալական դրդապատճառների ձևավորումը: Բացի դա՝ արժեքային կողմնորոշումները կարող են դառնալ վարքագծի ինքնուրույն դրդապատճառ, օրինակ՝ բարոյական կամ գաղափարախոսական պատճառներով¹²:

Արժեքների գնահատման խնդիրը մարդու առաջ առավել հստակ համնում է իր համար նշանակալից պահանջումների իրագործման գործընթացի ընթացքում: Արժեքային վերաբերմունքը անրապնդում է գործունեության այն առաջատար տեսակը, որի միջոցով բավարարվում են նշանակալից պահանջումները: Արժեքային կերպարը ընկալող սուբյեկտը համեմատում է այն իր ցանկությունների ու պահանջումների հետ, մտովի ծրագրավորում է իր արարքները, այնուհետև կոնկրետ արարքներ է կատարում արժեքային կերպարին համապատասխան: Դրանից հետո այդ արարքները դառնում են սովորական և վերածվում են անձի նյութական գոյության նորմալ միջոցի:

Ինչ վերաբերում է հանցանք կատարող անձանց, ապա վերջիններիս արժեքային կողմնորոշումները խեղաթյուրված են, որը դրսևորվում է գերաճած անհատապաշտության, անձնական շահադիտական ձգտումների և ուրիշներին ճնշելու ցանկության մեջ:

Անձի հակասոցիալական վարքագծի վերլուծության ժամանակ հաճախ օգտագործվում է հակահասարակական դիրքորոշում հասկացությունը: Դիրքորոշում ասելով հասկանում են որոշակի վարքագծային արձագանքի հոգեբանական պատրաստվածության վիճակ, որի մասին մարդը կարող է և չինմանալ, մինչև տվյալ դիր-

քորոշման գործողությունը խթանող որոշակի իրադրության ծագումը: Անհրաժեշտ է իմանալ, որ դիրքորոշումը գործում է որպես անգիտակցական մեխանիզմ, և նրա ձևավորումն էլ ունի անգիտակցական գործընթաց: Մեկ անգամ ձևավորված դիրքորոշումը կարող է «ննջել», քանի դեռ համապատասխան իրադրությունը չի խթանել նրա գործողությունը: Դիրքորոշումը վարքագծի այն անգիտակցական ներքին կարգավորիչներից է, որոնք անձի սոցիալիզացիայի անգիտակցական մեխանիզմների (նույնացում, ներշնչում և այլն) շնորհիվ ձևավորվում են մանկության ժամանակ և հետագայում դրսևորվում են արդեն չափահաս մարդու վարքագծում: Հակասոցիալական դիրքորոշումների ձևավորման ընթացքում, բազմաթիվ կրկնությունների շնորհիվ, նախ տեղի է ունենում պահաջմունքների ձևափոխում և առաջանում են խեղաթյուրված պահանջմունքներ, երկրորդ՝ հակասոցիալական արարքը ամրապնդվում է և գիտակցության կողմից չկառավարվող ավտոմատիզմի բնույթ է ստանում:

Հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում առանձնահատուկ դեր է կատարում անձի աշխարհայացքային դիրքորոշումը, առանց որի հնարավոր չէ «նորմատիվ միջավայրում» և ընդհանրապես սոցիալական միջավայրում ճիշտ կողմնորոշվել¹³:

Աշխարհայացքն իրենից ներկայացնում է անձի հանգումունքների, հայացքների համակարգ, որը որոշում է նրա բարոյական, գաղափարախոսական կերպարը: Անձի աշխարհայացքային համակարգի մեջ մտնում են նրա փիլիսոփայական, սոցիալ-տնտեսական, բարոյական, իրավական, գեղագիտական և մյուս հայացքները: Ընդ որում, աշխարհայացքը ոչ միայն կյանքի, հասարակության մեջ իր տեղի, ընթացող իրադարձությունների վերաբերյալ անձի հայացքների համակարգն է, այլև արժեքային համակարգի իմաստավորումը: Աշխարհայացքային դիրքորոշումը, ինչպես և ար-

ժեքային համակարգը, անձի կողմից յուրացվում է տարբեր սոցիալական խմբերում և մեծ չափով կախված է այդ խմբերի կենսակերպից, սովորություններին և պահանջներին անձի հարմարվողականությունից: Խեղաթյուրված աշխարհընկալումը, որը էականորեն տարբերվում է հասարակության աշխարհայացքից ու բարոյականությունից, հանգեցնում է անձի մեջ այնպիսի «պատճառների» կազմավորման, որոնց ազդեցության տակ նա ընտրում է իր պահանջմունքների բավարարման հակաիրավական միջոց¹⁴:

Անձի աշխարհայացքը դրսևորվում է նրա հանգումունքների միջոցով: Հանգումունքը հանդես է գալիս երկու նշանակությամբ՝ 1) որպես կոնկրետ փաստի ճշմարտացիության մեջ հանգվածության հոմանիշ, 2) որպես անձի ուղղվածության ամենաբարձր մակարդակ, որի կառուցվածքի մեջ մտնում է ոչ միայն աշխարհայացքը, այլև դրա համար պայքարելու կամքը: Այս դեպքում հանգումունքը անձի գաղափարախոսական դաստիարակության բարձրագույն արդյունքն է հանդիսանում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ դրդապատճառի ձևավորման մեջ գլխավոր ստեղծարար դերը պատկանում է անձի ուղղվածությանը: Իսկ դա, իր հերթին, նշանակում է, որ կարելի է խոսել կրիմինալ դրդապատճառի մասին: Վերջինս հանդես է գալիս որպես մոտիվացիայի արդյունք, այսինքն՝ այնպիսի հոգեբանական գործունեության արդյունք, որի վերջնական նպատակը մարդու հակասոցիալական ակտիվության հիմնավորման ձևավորումն է¹⁵: Այսպիսի մոտեցման հիմքում ընկած է Ե.Պ. Իլյինի կողմից մշակված դրդապատճառի որպես բարդ համակարգային երևույթի վերաբերյալ հայեցակարգը: Հիմնվելով այս հայեցակարգի վրա և զարգացնելով այն՝ որոշ հոգեբաններ առանձնացնում են դրդապատճառի ձևավորման հետևյալ փուլերը՝ 1) մարդու կողմից խթանի ընդունումը, պահաջմունքի և առաջնային, վերացական դրդապատճառի ձևավորումը, 2) փնտրո-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ղական ակտիվությունը՝ կապված տվյալ իրադրության մեջ պահանջմունքի բավարարման միջոցների ընտրության հետ, ինչը կախված է մարդու հետաքրքրություններից, հակումներից, հավակնությունների մակարդակից, հանդուժմունքներից, դիրքորոշումներից և արժեքային կողմնորոշումներից, 3) կոնկրետ նպատակի ընտրությունը և դրան հասնելու մտադրության ձևավորումը¹⁶:

Ուղղվածության խեղաթյուրումը կարող է դրսևորվել արարքի ընտրության մեջ դրա նախաձեռնման փուլում՝ հանցավորի կողմից որոշման կայացման ժամանակ: Դատելի է ունենում արարքին մղող ուժերի չափազանց գերակայության դեպքում, ինչը հանգեցնում է հնարավոր նպատակների ընտրության սահմանափակման: Նման իրավիճակում ընտրված արարքը (նպատակը) հանցավորի կողմից գնահատվում է որպես միակ հնարավոր¹⁷:

Այսպիսով, դրդապատճառի ձևավորմանը համապատասխանում են դրդապատճառի հետևյալ ենթահամակարգերը՝ 1) պահանջմունքային ենթահամակարգ, 2) «ներքին գտնան» ենթահամակարգ, 3) նպատակային ենթահամակարգ: Դրդապատճառի կառուցվածքը կազմող ենթահամակարգերի մեջ մտնում են ուղղվածության բոլոր տարրերը, որոնք հանդիսանում են հանցավորի անձի մոտիվացիոն ուղորտի դետերմինանտներ և որոշում են նրա հանցավոր վարքագիծը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հավաստել, որ հանցագործությունների կանխման տեսանկյունից անչափ կարևոր է անձի ուղղվածության բոլոր տարրերի, դրդապատճառի բոլոր ենթահամակարգերի խեղաթյուրումը բացառող կամ արդեն խեղաթյուրված տարրերի շտկմանը ուղղված միջոցառումների իրականացումը, որովհետև միայն մեկ ենթահամակարգում կամ տարրի մեջ առկա խեղաթյուրումները կարող են հանգեցնել վարքագծի հանցավոր ձևի ընտրության:

¹ Տե՛ս Словарь-справочник по криминологии и юридической психологии / авт.-сост. В.А. Ананич, О.П. Колчеганова. М., 2003, էջ 101:

² Տե՛ս Նույն տեղը, էջ 102:

³ Տե՛ս Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 5:

⁴ Տե՛ս Ситковская О.Д. Психология уголовной ответственности. М., 1998 էջ 243:

⁵ Տե՛ս Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. նշված աշխ., էջ 147:

⁶ Տե՛ս Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб., 2000, էջեր 116-120, Габузян А.А. Проблемы преступности в Армении в переходный период. Ереван, 2007, էջեր 33-35:

⁷ Տե՛ս Рубинштейн С.Л. Основы общей психологии. СПб., 2004, էջեր 511-531:

⁸ Տե՛ս Прикладная юридическая психология: учеб. пособие для вузов / под ред. С.М. Столяренко. М., 2001, էջ 67:

⁹ Նույն տեղը, էջ 67:

¹⁰ Տե՛ս Лунеев В.В. Мотивация преступного

поведения. М., 1991, Кудрявцев В.Н. Генезис преступления: опыт криминологического моделирования. М., 1998, և այլն:

¹¹ Տե՛ս Саморегуляция и прогнозирование социального поведения личности / под ред. В.А. Ядова. Л., 1979, էջ 189:

¹² Տե՛ս Криминология. М., 2000, էջ 164:

¹³ Տե՛ս Рыбальская В.Я. Генезис преступления. Иркутск, 1998, էջ 79:

¹⁴ Տե՛ս Склярков С.В. Мотивы индивидуального преступного поведения и их уголовно-правовое значение. М., 2000, էջ 79:

¹⁵ Տե՛ս Ситникова А.Е., Ермолин А.В. Представленность в сознании мотива как предмет судебно-психологической экспертизы. СПб., 2002, էջ 24:

¹⁶ Տե՛ս Горьковая И.А. Основы судебно-психологической экспертизы: учеб. пособие. СПб., 2003., էջ 49:

¹⁷ Տե՛ս Сафуанов Ф.С. Психология криминальной агрессии. М., 2003, էջ 169-170:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСПОЛНЕНИЯ ЛИШЕНИЯ СВОБОДЫ ЖЕНЩИН ПО ДЕЙСТВУЮЩЕМУ УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

Давид ТУМАСЯН

*Преподаватель Академии полиции РА,
Ереванского университета “Манц”*

Уголовно-исполнительный кодекс РА¹, принятый 24 декабря 2004г. и Постановление Правительства РА от 3 августа 2006г. «Об утверждении Правил внутреннего распорядка исправительных учреждений и мест содержания арестованных уголовно-исполнительной службы Министерства юстиции РА» внесли координальные коррективы в такую ветвь права, которая ранее была под грифом “секретно”. Режим и условия содержания заключенных в бывшем СССР определялись не только и не столько действующим кодексом (Исправительно-трудовой кодекс Арм. ССР), но и так называемыми подзаконными нормативными актами (Правилами внутреннего распорядка и более чем тремя сотнями актов и инструкций Министерства внутренних дел). На данный момент подзаконных актов, регулирующих уголовно-исполнительные правоотношения в Армении около двадцати, но они регулируют те сферы данных правоотношений, которые изменчивы, не в ходят в рамки регулирования закона или являются результатом симбиоза смежных отраслей науки, дисциплин и норм права.

Среди средств, применяемых государством в борьбе с преступностью, лишение свободы остается самым суровым видом уголовного наказания в подавляющем большинстве цивилизованных стран и, наверное, самым распространенным, если иметь в виду его удельный вес среди других видов наказания. Поэтому вопросы правового регулирования применения и исполнения данного

наказания относятся к приоритетным в науке уголовно-исполнительного права².

Само лишение свободы и его правовая база объемны и многогранны, поэтому изучение лишения свободы осуществляется как в комплексе, так и по отдельным составным частям. Лишение свободы женщин является неотъемлемой частью данного наказания, которое имеет некоторые особенности отбывания (исполнения). УИК РА отдельно не предусмотрел статьи, в которой раскрыл бы нормы, обуславливающие особенности лишения свободы женщин, хотя таковые в действительности существуют. Есть лишь нормы обуславливающие особенности лишения свободы беременных женщин и лиц, имеющих детей в возрасте до трех лет (данные нормы указаны как в УИК РА, так и в вышеназванном Постановлении).

Как справедливо отмечал Ю.М. Антонян, “закон содержит ряд положений, согласно которым условия содержания женщин (например, беременных) отличается от условий отбывания таких же наказаний мужчинами. Но отличий мало, намного больше сходства, если иметь в виду пищу, лечение, жилищные условия, труд, возможность проведения досуга и т.д.”³ Кончено, различия должны быть, другой вопрос – их целесообразность и необходимость.

В РА с целью улучшения положения женщин и увеличения их роли в обществе Правительством РА была составлена программа (утвержденная Постановлением Правительства РА от 8 апреля 2004г. “Об утверждении Национальной программы и графика осуществления ее мероприятий по улучшению положения женщин в РА и по повышению их роли в обществе на 2004-2010гг”), которая

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

охватывала принципы, предложения и основные направления государственной политики, направленных на решения задач женщин. Данная программа основывается на Конституции РА и целенаправлена на осуществление обязанностей, предусмотренных Конвенцией ООН о ликвидации всех форм дискриминации в отношении женщин, поручениями 4-ого всемирного Пекинского конгресса (1995г.), документами Евросоюза о равноправии женщин и мужчин, Декларацией тысячелетия ООН и другими международно-правовыми актами. В данном Постановлении Правительства РА указано, что хотя Армения в рейтинге человеческого развития на 76 месте, а по гендерному развитию на 62, что свидетельствует о существующем некотором неравенстве между мужчинами и женщинами, все же, основываясь на исторических фактах, можно утверждать, что дискриминация в отношении женщин в Армении психологически и ментально не укоренившееся явление. Существующее неравенство лишь результат социально-экономического состояния и низкого культурного уровня некоторых слоев населения.

Сохраняя за осужденными женщинами права, предоставленные всем осужденным, закон предусматривает ряд норм, которые отражают определенные привилегии, предоставленные им по сравнению с осужденными мужчинами. В частности, предусмотрены некоторые дополнительные права и привилегии женщин, связанные с физиологическими и социальными различиями лиц того и другого пола. Это касается, прежде всего, такой важнейшей физиологической функции как рождение ребенка. Следует иметь в виду, что эта физиологически функция тесно связана с социальной - с уходом за ребенком, его

вскармливанием и воспитанием.

Как и любое законодательство, так и уголовно-исполнительное руководствуется определенными принципами, в т.ч. и принципом гуманизма, согласно которому исполнение наказания, а также применение принудительных мер медицинского характера, соединенных с исполнением наказания, не должны сопрягаться физическим насилием над личностью, а также такими действиями, которые могут повлечь социально-психологическую деградацию личности. Ни один человек, лишенный свободы по приговору суда, не должен быть подвергнут пыткам или иному жестокому, бесчеловечному либо унижающему его достоинство обращению или наказанию. Никакое обстоятельство не может служить основанием для оправдания пыток или иного жестокого, бесчеловечного либо унижающего достоинство обращения или наказания. Осознавая факт того, что женщины более подвержены насилию, чем мужчины, ООН в Резолюции 48/104 Декларации об искоренении насилия в отношении женщин указывает свою обеспокоенность тем, что некоторые группы женщин, в том числе женщины, находящиеся в исправительных учреждениях или в заключении, особенно подвержены насилию. Кроме того данная резолюция комплексно подходит к понятию насилия, где ст. 1 указывает, что «насилие в отношении женщин» означает любой акт насилия, совершенный на основании полового признака, который причиняет или может причинить физический, половой или психологический ущерб или страдания женщинам, включая угрозы совершения таких актов, принуждение или произвольное лишение свободы, будь то в общественной или в личной жизни.

Необходимо отметить, что кроме половой дискриминации в литературе встречаются случаи, когда заключенные упоминают дискриминацию по болезни,

особенно заразной; указывают и на расовую, и на религиозную, но чаще всего — на дискриминацию по имущественному принципу. Богатым – т.е. женщинам, которые получают с воли посылки и имеют другие дополнительные возможности - везде лучше остальных. Если же посылок с воли нет, и женщина-заключенная во всем нуждается, зависит от милости других - ее будут оскорблять и унижать сами заключенные. Так считают опрошенные заключенные. Это чрезвычайно важное отличие от мужских мест лишения свободы, где неформальный статус заключенного зависит, прежде всего, от его криминальной биографии и его собственного поведения и где материальное положение заключенного определяется этим статусом, а не наоборот⁴.

Кроме того на социально-психологическую деградацию может повлиять и период социальной адаптации и интеграции осужденной в новый для нее коллектив. Именно “реакция” сокамерниц и их отношение к новоприбывшей имеет огромное значение и влияет на проявление ее психолого-социальных качеств в местах лишения свободы. Как было отмечено в литературе период адаптации занимает 1/3 срока лишения свободы⁵. Поэтому данный период отбывания наказания требует особенного правового регулирования и контроля.

Европейская конвенция по защите прав человека и основных свобод во главу угла уголовно-исполнительной политики также ставит принцип гуманизма. Но на сегодняшний день проблемой номер один является не гуманизация наказания, а нормализация условий содержания осужденных (в том числе и женского пола).

Европейские пенитенциарные правила, которые считаются европейским аналогом Минимальных стандартных правил обращения с заключенными не допускают дискриминации, основанной на

признаках расы, цвета кожи, пола, языка, религии, политических или иных убеждениях, национальном или социальном происхождении, рождении, экономическом или ином статусе. Данная норма содержится также и в национальном законодательстве РА (ст. 8 УИК РА), а также в других международных актах и законах. Хотя дискриминация по признаку пола запрещена, все же есть определенные нормы, которые все-таки должны быть различны и должны предоставлять возможность индивидуального и дифференцированного подхода к данному вопросу. Но, все равно, данный дифференцированный подход ни в коем случае не нарушает принципа равенства граждан перед законом.

Вопросы дискриминации в целом рассмотрены также в Конвенции о ликвидации всех форм дискриминации в отношении женщин от 18 декабря 1979г., которая напоминая, что дискриминация женщин нарушает принципы равноправия и уважения человеческого достоинства, препятствует участию женщины наравне с мужчиной в политической, социальной, экономической и культурной жизни своей страны, мешает росту благосостояния общества и семьи и еще больше затрудняет полное раскрытие возможностей женщин на благо своих стран и человечества, в ст. 1 дает определение дискриминации, согласно которой “дискриминация в отношении женщин” означает любое различие, исключение или ограничение по признаку пола, которое направлено на ослабление или сводит на нет признание, пользование или осуществление женщинами, независимо от их семейного положения, на основе равноправия мужчин и женщин, прав человека и основных свобод в политической, экономической, социальной, культурной, гражданской или любой другой области. Кроме того, любое государство, являющееся участником данной конвенции и Факультативного прото-

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

կոլա կ данной конвенции от 6 октября 1999г. ссылаясь также на Конвенцию, в которой ее государства - участники осуждают дискриминацию в отношении женщин во всех ее формах и соглашаются безотлагательно всеми соответствующими способами проводить политику ликвидации дискриминации в отношении женщин⁶. Т.е. международное законодательство допускает различия и исключения, но только улучшающие положения женщин, но ни в коем случае не ухудшающие, что в данном случае опять приводит к дискриминации, но уже по отношению к осужденным мужчинам.

Кроме того международные нормы особо подчеркивают особенности содержания лишения свободы молодых женщин-правонарушительниц. Согласно ст. 26.4 Минимальных стандартных правил ООН, касающиеся отправления правосудия в отношении несовершеннолетних ("Пекинские правила"), принятых резолюцией Генеральной Ассамблеи ООН 40/33 от 10 декабря 1985г., молодым женщинам-правонарушителям, помещенным в исправительное учреждение, должно уделяться особое внимание с учетом их личных нужд и проблем. Но уже следующее предложение данной нормы опять стремиться к «уравниловке» указывая, что «им должен обеспечиваться такой же уход, защита, помощь, обращение и профессиональная подготовка, как и молодым мужчинам-правонарушителям», а третье предложение указывает: «следует обеспечить справедливое обращение с ними». Поэтому данная норма Пекинских правил не решает вопроса нужно ли относиться особенно к молодым женщинам-правонарушителям или им должен обеспечиваться такой же уход, защита, помощь, обращение и профессиональная подготовка,

как и молодым мужчинам-правонарушителям.

Правило 26.4 связано с тем обстоятельством, что женщинам-правонарушителям, как отмечалось на шестом Конгрессе, уделяется обычно меньше внимания, чем мужчинам. В частности, в резолюции 9 шестого Конгресса содержится призыв к справедливому обращению с женщинами-правонарушителями на каждом этапе процесса уголовного правосудия, а также к рассмотрению с особым вниманием их конкретных проблем и нужд в период лишения свободы.

Согласно ст.11.2 Европейских пенитенциарных правил мужчины и женщины, как правило, содержатся отдельно, хотя они и могут совместно участвовать в организованной деятельности, включенной в утвержденную для них программу исправительного воздействия.

Опыт последних лет несколько изменил существовавшие ранее взгляды в отношении необходимости раздельного содержания определенных категорий заключенных. Современная теория, лежащая в основе исполнения уголовного наказания, больше не требует строго раздельного содержания молодых и людей старшего возраста, мужчин и женщин, осужденных и подсудимых. Поэтому в определенных условиях молодым заключенным, например, может пойти на пользу та стабильность, которая иногда возникает вследствие их участия в деятельности, предусмотренной режимом, совместно с заключенными старшего возраста. То же относится и к совместному участию мужчин и женщин в одной и той же программе исправительного воздействия. Это также предоставляет возможность заключенным, находящимся под следствием, на которых не распространяются в полной мере условия режима, в том числе возможность трудиться или заниматься иной подобной деятельностью,

иметь доступ ко всему тому, что предусмотрено для категорий осужденных заключенных⁷.

Согласно ч.1 ст.68 УИК РА женщины и мужчины содержатся отдельно, но согласно ч.2 той же статьи требования отдельного содержания осужденных, установленные данной статьей, распространяются по мере возможности на содержание в лечебном исправительном учреждении, лечебных подразделениях исправительных учреждений, а также в исправительном учреждении, при котором имеется дом ребенка. Кроме того, согласно ч.3 данной статьи требования отдельного содержания осужденных, установленные настоящей статьей, могут не соблюдаться, если они участвуют в социальной, психологической, правовой работе, трудовых, образовательных, культурных, спортивных и иных подобных мероприятиях, организованных для них в том же учреждении, а также в других случаях, предусмотренных УИК РА.

На практике в уголовно-исполнительные учреждения⁸ «Абовян» в открытом исправительном учреждении содержатся и мужчины, и женщины.

Следует подчеркнуть, что хотя правила отдельного содержания осужденных закреплены законодательно, они, сами по себе, не определяют различий в правовом положении выделяемых категорий осужденных, т.е. представляют собой дифференциацию исполнения наказания. Однако в рамках каждой категории правовое положение у всех одинаковое⁹.

Особого внимания заслуживает проблема сохранения физического и психического здоровья женщин в условиях лишения свободы в тесной взаимосвязи с улучшением санитарно-гигиенических и бытовых условий. В национальном законодательстве проблема сохранения физического и психического здоровья жен-

щин в условиях лишения свободы рассматривается лишь по отношению к беременным женщинам, что, не в последнюю очередь, продиктовано международным законодательством. Согласно ст. 12 Конвенции о ликвидации всех форм дискриминации в отношении женщин наряду с положениями пункта 1 этой статьи государства - участники обеспечивают женщинам соответствующее обслуживание в период беременности, родов и послеродового периода, предоставляя, когда это необходимо, бесплатные услуги, а также соответствующее питание в период беременности и кормления.

Согласно ст. 28.1 Европейских пенитенциарных правил принимаются меры, насколько это возможно, чтобы роды происходили в больнице за пределами мест лишения свободы. Однако при отсутствии такой возможности пенитенциарные учреждения должны располагать необходимым персоналом, специальным помещением и оборудованием, необходимыми для принятия родов и послеродового ухода. Если ребенок рождается в тюрьме, в свидетельстве о рождении не делается никакой отметки об этом (в РА данная формулировка отсутствует, хотя на практике данная запись не делается, т.к. осужденные женщины рожают за пределами УИУ, в специализированных отделах учреждений Мининстерства здравоохранения).

Вопрос беременности женщины решается при проведении медицинского осмотра при поступлении женщины в УИУ. Тест на беременность как медицинская процедура обычно не проводится, но врач проводит гинекологический осмотр, при котором он может определить беременность сроком более четырех недель. По нашему мнению, необходимо урегулировать данный вопрос и ввести обязательную процедуру освидетельствования беременности женщины при поступлении в УИУ даже на ранних

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

стадиях беременности.

Согласно ст.53.1. Минимальных стандартных правил обращения с осужденными женские заведения должны располагать особыми помещениями для ухода за беременными женщинами и роженицами. Там, где это возможно, следует заботиться о том, чтобы роды происходили не в тюремном, а в гражданском госпитале. Если же ребенок рождается в тюрьме, то об этом обстоятельстве не следует упоминать в метрическом свидетельстве, а согласно ст.53 2 - там, где заключенным матерям разрешается оставлять младенцев при себе, нужно предусматривать создание ясель, располагающих квалифицированным персоналом, куда детей следует помещать в периоды, когда они не пользуются заботой матери, т.е. международные нормы дают определенные рекомендации по вопросам содержания беременных женщин и женщин, имеющих при себе ребенка. Именно на основе данных норм национальное законодательство детально рассмотрело данные правоотношения.

Если разрешается оставлять новорожденных вместе с матерями в пенитенциарном учреждении, принимаются специальные меры для устройства яслей, располагающих квалифицированным персоналом, где будут находиться грудные дети в течение того времени, когда они не предоставлены заботам их матерей.

Согласно ст. 82 УИК РА в исправительном учреждении при необходимости может быть создан дом ребенка с надлежащими условиями для проживания и развития детей. Осужденная может поместить в дом ребенка исправительного учреждения своего ребенка в возрасте до трех лет и общаться с ним в свободное от работы время, без ограничения.

Осужденной может быть разрешено совместное с ребенком проживание. С согласия осужденной ее ребенок в возрасте до трех лет может быть передан на содержание родственника, а также по решению органа опеки и попечительства – на содержание других лиц, а по достижении трехлетнего возраста по выбору осужденной может быть направлен в детский дом или иное соответствующее заведение. По достижении трехлетнего возраста ребенка, содержащегося в доме ребенка при исправительном учреждении, начальник исправительного учреждения может продлить срок содержания ребенка в доме ребенка до окончания срока наказания матери, если до отбытия наказания осталось не больше двух лет. Данная норма детально и более дифференцированно рассматривает анализируемый вопрос, что на наш взгляд уже является положительным результатом.

Некоторые особенности содержания осужденных женщин предусмотрены в разделе IX Постановления Правительства РА от 3 августа 2006г. «Об утверждении Правил внутреннего распорядка исправительных учреждений и мест содержания арестованных уголовно-исполнительной службы министерства юстиции РА». Согласно п. 79 данного постановления беременные женщины и лица, имеющие детей в возрасте до 3 лет, в УИУ размещаются так, что бы по возможности было минимализировано общение с другими осужденными. В камерах или помещениях для беременных женщин и лиц, имеющих детей в возрасте до 3 лет размещаются одноярусные кровати, каждому ребенку предоставляется детская кровать, а камеры или помещения обеспечиваются горячей водой. Осужденная женщина во время родов перемещается в УИУ, имеющее соответствующее отделение. Если это не возможно, то роженицу могут перевести в наиболее близко к УИУ распо-

ложенное медицинское учреждение системы здравоохранения, с соблюдением соответствующего контроля.

Беременные женщины и лица, имеющие детей в возрасте до 3 лет обеспечиваются едой и другими принадлежностями согласно установленным нормам¹⁰. Кроме того, необходимо обеспечивать детское питание согласно нормам, выдаваемым детям соответственного возраста, находившимся в медицинских учреждениях системы здравоохранения. Лица, имеющие детей в возрасте до 3 лет получают необходимые предметы для ухода за ребенком.

Для лиц, имеющих детей в возрасте до 3 лет должно предоставляться двор для прогулок, имеющий игровую площадку или озелененный участок.

Согласно ч.2 ст.53 Минимальных стандартных правил обращения с заключенными сотрудники мужского пола допускаются в женское отделение только в сопровождении сотрудников женского пола. А согласно Закону РА от 8 июля 2005г. «Об уголовно-исполнительной службе» законодательство не ставит никакой разницы между мужчинами и женщинами, служащими уголовно-исполнительной службы, т.е армянский законодатель дает возможность принимать в данную систему работников женского пола, и рассматриваемая норма Минимальных стандартных правил может применяться на практике по необходимости. Кроме того, согласно ст. 62 Европейских пенитенциарных правил следует поощрять назначение сотрудников обоего пола, работающих совместно в местах лишения свободы или его отделениях, где содержатся заключенные мужчины и женщины. На практике в УИУ «Абовян» не достаточно число сотрудниц, поэтому осуществление анализируемой нормы затруднено вследствие нехватки кадров женского пола, работающих в уголовно-исполнительной

системе Армении. Конечно, заботу о находящихся в заключении женщинах и надзор над ними следует, в основном, возлагать только на сотрудников женского пола. Но это не должно, однако, мешать сотрудникам мужского пола, в частности врачам и учителям, выполнять свои профессиональные обязанности в женских заведениях или отведенных для женщин отделениях других заведений.

Здесь уместно привести пример Г.Ф. Хохрякова, который описывал следующий случай: «В одной из женских колоний ослабла дисциплина заключенных. Основным показателем ослабления было постоянное заигрывание заключенных с мужчинами из администрации, а то и энергичное приставание. Мужчины-администраторы тоже не были достаточно строгими и неприступными, чтобы игра прекратилась. Решили укомплектовать всю администрацию женщинами-офицерами, чтобы заключенные не испытывали соблазна. Мужчины исчезли с глаз затворниц. Вначале все было хорошо. Но затем обратили внимание на то, что женщины перестали следить за собой. Еще через какое-то время они стали заметно раздражительнее, с неохотой занимались работой, огрызались на безобидные, казалось бы, замечания, стали вспыхивать ссоры. Естественно, что, столкнувшись с такой неизвестной дотоле ситуацией, руководство сделало стандартный вывод: заключенных от соблазна уберегли, но администраторы-женщины в силу свойственной женщинам мягкости не могут обеспечить дисциплины — нужен хотя бы один мужчина среди руководителей колонии. Строгий начальник был подобран и назначен. Ему не нужно было кричать, распекать узниц и тем более наказывать их. Одно лишь его появление подействовало на них, словно удар электрического тока. Женщины вспомнили о косметике, о своем внешнем виде. Начальнику-мужчине

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

достаточно было намекнуть, чтобы его приказание было исполнено. Тогда руководство решило еще больше укрепить дисциплину и направило в эту колонию других энергичных и строгих мужчин-администраторов. Все вернулось на круги своя»¹¹. Отсюда следует логический вывод, что наличие только сотрудниц женского пола приводит к психологическому дискомфорту, а иногда и к агрессии, отторжению, поэтому необходимо найти оптимальный и рациональный вариант работы сотрудников обоих полов, что и отражено в международных нормах.

Исходя из вышесказанного можно подвести итог, что интеграция Армении в международное сообщество, деклара-

ция приоритета общечеловеческих ценностей и закрепление их в Конституции РА потребовали нового подхода к организации и содержанию уголовно-исполнительной политики государства. Известно, что уголовно-исполнительная политика включает, наряду с другими направлениями, цели и задачи социальной и гендерной политики в отношении осужденных к различным видам наказаний и отдельных категорий осужденных, которые в РА еще не на достаточном уровне в силу ряда как объективных, так и субъективных причин. Но, однозначно, находятся на более высоком уровне, чем в советский период, как вследствие открытости уголовно-исполнительной системы и законодательства, так влияния международных норм на формирование действующего национального законодательства.

¹ далее - УИК РА

² Хачикян А.М. Лишение свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы. Ереван, 2008, с.3.

³ Антонян Ю.М. Преступность среди женщин. М. 1992, с.131.

⁴ Женщины в российской тюрьме. Проблемы, свидетельства, взгляд изнутри. Сост. Л.И. Альперн. М., 2001, с.34.

⁵ Пищелко А.В., Сочивко Д.В. Реадаптация и ресоциализация. М, 2003, с.141.

⁶ Конвенции о ликвидации всех форм дискриминации в отношении женщин от 18.12.1979г. была подписана СССР 17.07.1980г. и вступила в силу 03.09.1981г., а Факультативный протокол в Армении вступил в силу 24.03.2006г.

⁷ Европейские пенитенциарные правила (рекомендация 1R (87) 3). Выпуск 2. М, 1999, с.47.

⁸ далее - УИУ

⁹ Хачикян А.М. Лишение свободы: криминоло-

гические и уголовно-исполнительные проблемы. Ереван, 2008, с.23.

¹⁰ Данные нормы, к сожалению, пока не установлены Правительством РА. На данный момент есть только Постановление Правительства РА от 10 апреля 2003г. «Об утверждении средней суточной нормы пищи, сроков эксплуатации и норм одежды, а также сроков эксплуатации и норм постельных и гигиенических принадлежностей для лиц, содержащихся в уголовно-исполнительных учреждениях Министерства юстиции РА», где наряду с нормами питания для всех осужденных есть и дополнительные нормы питания, которые установлены для больных осужденных. Соответственно, ни на осужденных беременных женщины, ни кормящих матерей данные нормы не распространяются.

¹¹ Хохряков Г.Ф. Парадоксы тюрьмы. М., 1991, с.138.

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ դատական դեպարտամենտի դեկավարի առաջին տեղակալ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Սեփականության իրականացման ազատությունը չի կարող անսահման լինել: Այն սահմանափակվում է այլ անձանց իրավունքներով և օրինական շահերով, ինչպես նաև հասարակության՝ որպես ամբողջության, շահերով: Այդ իսկ պատճառով սուբյեկտիվ սեփականության իրավունքի ծավալը որոշվում է ոչ միայն իրավանորմերով սահմանված սահմաններով, այլ նաև արգելքներ և ցուցումներ պարունակող նորմերի համակցությամբ, որոնք էլ հենց սահմանափակում են սուբյեկտիվ իրավունքը:

Այդ առիթով Վ. Ի. Կուրդինովսկին գրում է. «Սահմանափակման ժամանակ իրավագործությունը, որը ենթարկվում է սահմանափակման, չի հանվում սեփականության իրավունքից: Այն մնում է սեփականության իրավունքի մեջ, սակայն չի կարող իրականացվել իր ամբողջ բովանդակությամբ: Սեփականատերն այդ իրավագործությունը կարող է իրականացնել այնքանով, որքանով դա հնարավոր է սահմանափակման պարագայում»: Ո. Պ. Կամիշենսկին համակարծիք է Վ. Ի. Կուրդինովսկու հետ, որ հնարավոր է սահմանափակել այն, ինչ գտնվում է իրավունքի սահմաններում: Չի կարելի սահմանափակել այն, ինչ վերցված է, ինչը բացառված է տիրապետման, տնօրինման, օգտագործման հետ կապված իրավունքի բովանդակությունից: Սահմանափակումները չեն բացառում առանձին իրավագործությունները սեփականության իրավունքի բովանդակությունից, այլ զսպում են սեփականատիրոջը սուբյեկտիվ իրավունքի իրականացման հարցում²: Յու. Վ. Նարիկովան սեփականության իրա-

վունքի սահմանը համարում է սեփականատիրոջ կողմից իրեն պատկանող իրավագործություններն իրականացնելիս որպես որոշակի գործողություններ կատարելու արգելք³:

Վ. Ի. Գոյմանը իր հերթին նշում է, որ հարկավոր է տարբերակել իրավունքի ծավալի նեղացումը կամ դրա սահմանափակումները օրինաստեղծ պրակտիկայում օգտագործվող իրավական միջոցներից, թույլատրված ազատության սահմանների ամրագրման եղանակներից: Դրանց թվին են պատկանում վերապահումները, արգելքները, բացառությունները⁴: Նրա կարծիքով, օրենքում իրավունքների և ազատությունների սահմանների ամրագրման նշված միջոցների տարբերությունը իրավունքի սահմանափակումներից այն է, որ իրավունքի սահմանների ամրագրումը չի ենթադրում դրա ծավալի նեղացում: Այդ դեպքում տեղի է ունենում «բովանդակության ճշգրտման, իրավունքի իրականացման հետ կապված սահմանների մատնանշում»⁵:

Այս կարծիքները միակը չեն սեփականության իրավունքի սահմանների և սահմանափակումների վերաբերյալ: Վ. Պ. Գրիբանովը կարծում է, որ օրենքի մատնանշումը այն մասին, թե սեփականատերը ինչ ձևով պետք է իրականացնի իր իրավագործությունները, ոչ այլ ինչ է, եթե ոչ նրա իրավունքների իրականացման սահմաններ և ոչ երբեք սեփականության իրավունքի սահմանափակումներ⁶: Նրա կարծիքով, իրավունքի սահմանները գոյության պայմաններում իրավական սահմանափակումները զսպում են իրավատիրոջ ակտիվությունը արդեն ամրագրված այդսահմաններում⁷:

Ըստ մեզ՝ սեփականության իրավունքի սահմանները ուրվագծում են այն իրավագործությունների (իրավագործություն՝ լայն

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

իմաստով) շրջանակը, որոնք կազմում են սեփականության իրավունքի բովանդակությունը: Սեփականության իրավունքի բովանդակության մեջ ներառվող այդ իրավագործությունների իրականացման պայմաններն էլ սահմանազօծվում են սահմանափակումներով: Սահմանափակումները ցույց են տալիս այն պայմանները, որոնց համաձայն պետք է իրականացվի համապատասխան իրավագործությունը:

Այլ կերպ ասած՝ կա նրբերանգային տարբերություն սահմանների և սահմանափակումների միջև. սահմանները մատնացույց են անում, թե ինչն է արգելված, իսկ սահմանափակումները՝ թե այն, ինչ թույլատրելի է, ինչ ձևով է թույլատրելի:

Խնդիրն ավելի է բարդանում սահմանափակումների և ծանրաբեռնվածությունների միջև տարանջատում մտցնելիս: Այս հասկացությունները իրավական գրականության մեջ տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ են սահմանվում: Որևէ օրենք նույնպես չի տալիս իրավունքի սահմանափակում կամ ծանրաբեռնվածություն հասկացությունը, ավելին, շատ հաճախ նույնիսկ օրենսդրական մակարդակով շփոթություն է առաջանում այս հասկացությունների միջև. սահմանափակումը մի օրենքում օգտագործվում է մի, մեկ այլ օրենքում՝ երկրորդ նշանակությամբ:

Օրենքների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, սահմանափակումներն օգտագործվում են որպես տեսակային հասկացություն և ներառում են ինչպես օրենքով սահմանված սահմանափակումները, այնպես էլ ծանրաբեռնվածությունները, այսինքն՝ սեփականության իրավունքի ծանրաբեռնվածությունները համարվում են սահմանափակման տեսակ:

Այսպես՝ ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ հողամասի թույլատրված օգտագործումը

հողամասի օգտագործումն է դրա նպատակային եւ գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքներն ու *սահմանափակումները*:

Սույն կետում օգտագործվող «սահմանափակումներ» եզրույթը չի ներառում սահմանված գույքային իրավունքները սեփականության իրավունքի օբյեկտի նկատմամբ: Մինչդեռ, նույն օրենսգրքի 14-րդ, 33-րդ հոդվածներում սահմանափակում է որակվում ծանրաբեռնվածության այնպիսի տիպական տեսակ, ինչպիսին սերվիտուտն է:

Հողային օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բնակչության անվտանգության ապահովման, օբյեկտների շահագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով քաղաքաշինական եւ հողաշինարարական փաստաթղթերով սահմանվում են գոտիներ, հողամասերի սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմ, *այդ թվում՝ սերվիտուտներ*:

Իսկ նույն օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը ներառում է հողամասերի նկատմամբ սեփականության եւ այլ գույքային իրավունքների, դրանց *սահմանափակումների, ներառյալ սերվիտուտների* պետական գրանցումը:

Նույն կերպ էլ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի (գ) կետը որպես գրանցման թերթիկի առանձին բաժին նշում է անշարժ գույքի միավորի նկատմամբ *սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները*: Մինչդեռ սերվիտուտներով իրավունքը ծանրաբեռնվում է, ոչ սահմանափակվում:

Մեր կարծիքով, նման մոտեցումն ընդունելի չէ, քանի որ նույն հասկացությամբ չի կարելի սահմանել երկու տարբեր իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող երևույթներ: Օրենքում անորոշ, երկիմաստ հասկացությունների օգտագործման արդյունքում են, որ պրակտիկայում նույն իրավական նորմը տարբեր կերպ է մեկնաբան-

վում, տարբեր կերպ է կիրառվում, խնդիր է առաջանում իրավական որոշակիության տեսանկյունից:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, սահմանելով գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները, որոնք ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ անկախ պետական գրանցումից, որպես այդպիսի սահմանափակման տեսակ «գ» կետով սահմանում է ընդհանուր կանոն եւ արգելք հանդիսացող սահմանափակումները (առողջապահական, պաշտպանական, շրջակա միջավայրի պահպանման եւ այլն): Այսպիսի ձևակերպումն այնքան անորոշ է, որ կարող է տարբեր մեկնաբանությունների առիթ տալ, մինչդեռ օրենքի հատկանիշներից մեկն էլ որոշակիությունն ու կիրառման առումով՝ կանխատեսելիությունն է:

Սահմանափակումների և ծանրաբեռնվածությունների վերաբերյալ իրավագետների կարծիքները նույնպես աչքի չեն ընկնում միասնականությամբ:

Բ. Ուտկինը կարծում է, որ եթե սեփականատիրոջ իրավունքը նեղացվում է նրա իրավունքների մի մասը երրորդ անձանց փոխանցելով, ապա դա համարվում է սեփականության իրավունքի սահմանափակում: Եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ակտով սեփականատիրոջը միակողմանի արգելվում է նրա իրավունքի իրականացման որոշակի մասը, սակայն միևնույն ժամանակ որևէ սուբյեկտ դրա հետևանքով հնարավորություն չի ստանում իրավունքի այդ մասից օգտվելու, ապա խոսքն իրավունքի ծանրաբեռնվածության մասին է⁸:

Վ. Պ. Կամիչենսկու կարծիքով, իրավունքի սահմանափակումները չեն հանգեցնում սուբյեկտիվ իրավունքների նվազեցմանը: Սահմանափակումների նախատեսելիս սուբյեկտիվ իրավունքների ծավալը պահպանվում է, սակայն դրանց իրականացումը բարդանում է սահմանափակումների ուժով առաջացող խոչընդոտների (стеснений, затруднений) պատճառով: Այդ սահմանափակումները պայմանավոր-

ված են նրանով, որ երրորդ անձանց փոխանցվում է միայն առանձին սուբյեկտիվ իրավունքներն *իրականացնելու հնարավորությունը*, բայց ոչ երբեք իրավագործությունը⁹:

Յու. Վ. Նարիկովան սեփականության իրավունքի սահմանափակումը համարում է տվյալ սեփականության իրավունքի իրականացման հարցում որոշակի խոչընդոտ¹⁰:

Տ. Ա. Մեչետինյան գտնում է, որ սահմանափակումները ոչ միայն զսպում են սեփականատիրոջը իր իրավունքներն իրականացնելիս, այլև միաժամանակ երրորդ անձանց հնարավորություն են տալիս առանձին իրավագործություններ իրականացնելու¹¹:

Վ. Պ. Կամիչենսկին տալիս է սեփականության իրավունքի սահմանափակումների դասակարգումը, առանձնացնում է դրանց հետևյալ տեսակները.

- ըստ սուբյեկտային կազմի (պետական, համայնքային, ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն),
- ըստ օբյեկտային կազմի (հողեր, ընդերք, ջրեր, անտառներ, ձեռնարկություններ, բնակելի շինություններ).

– ըստ նպատակային նշանակության¹²:

Սեփականության իրավունքի սահմանափակումները վերլուծելիս պետք է զուգահեռներ անցկացնել սեփականության իրավունքի սահմանափակումների և սեփականության իրավունքի ծանրաբեռնվածությունների միջև:

Ըստ Վ. Ա. Միկոյուկովի՝ երբ խոսքը իրավունքների մասին է, ապա դրանք սահմանափակվում են, երբ գույքի մասին՝ ծանրաբեռնվում¹³:

Վ. Վ. Դոլինսկայան, համամիտ լինելով գիտնականների մեծամասնության կարծիքին, գտնում է, որ ծանրաբեռնվածությունները և սահմանափակումները նույնական հասկացություններ չեն, քանի որ ծանրաբեռնվածության է ենթակա իրավունքի օբյեկտը (նույն օբյեկտի նկատմամբ բացի հիմնական իրավունքից կարող են սահմանվել լրացուցիչ իրավունքներ), իսկ սահմանափակման է ենթակա միայն գույքի նկատմամբ իրավունքը, որի ժամանակ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նոր իրավագործություններ չեն առաջանում¹⁴:

Սակայն երբեմն իրավական գրականության մեջ կարելի է հանդիպել վերլուծությունների, որտեղ սեփականության իրավունքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքներն անվանվում են ոչ թե «ծանրաբեռնվածություններ», այլ սահմանափակումներ: Կ. Ի. Սկլովսկին իր աշխատությունում, ըստ էության, հանգում է այն եզրակացության, որ բոլոր իրավունքները, որոնք ամրագրում են գույքի տիրապետումը, օգտագործումը կամ տնօրինումը, ստեղծում են այդ իրավունքներից ամենալիարժեքի՝ սեփականության իրավունքի սահմանափակում (ընդգծումը մերն է- Ն. Կ.)¹⁵:

Այսինքն, կարելի է ասել, որ կան դեպքեր, երբ «սահմանափակում» հասկացությունն օգտագործվում է որպես ընդհանուր կատեգորիա՝ սեփականատիրոջ ցանկացած իրավագործության նեղացման դեպքում: Օրինակ՝ Տ. Ա. Մեչետինան նշում է, որ սեփականության իրավունքի առանձնահատկությունը այն է, որ բացառում է սեփականության իրավունքի իրականացումն ամբողջ ծավալով՝ հանդես գալով սեփականատիրոջ իրավագործությունների նեղացման /стеснении/, ծանրաբեռնվածությունների ուժով (ընդգծումը մերն է-Ն. Կ.)¹⁶: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի ամբողջ տեքստում օգտագործվում է «գույքի նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ» արտահայտությունը, որտեղ «սահմանափակում» ասելով օրենքը հասկանում է անշարժ գույքի հետ կապված ցանկացած իրավունքների ծավալի նեղացում:

Մեր խորին համոզմամբ, օրենսդրության և իրավական գրականության ուսումնասիրությունը վկայում է, որ սեփականության իրավունքի սահմանափակում և սեփականության իրավունքի ծանրաբեռնվածություն երևույթները միմյանցից էական

նորեն տարբերվում են: Այդ տարբերությունները արտահայտվում են հետևյալ հատկանիշներում.

1. Սահմանափակումները սահմանվում են օբյեկտիվ իրավունքով: Սահմանափակումների սահմանմամբ երրորդ անձանց մոտ սուբյեկտիվ իրավունք չի ծագում, ինչը նշանակում է, որ սահմանափակման հետևանքով օրենքում սահմանվում են սեփականատիրոջը պատկանող իրավունքների մի մասի իրականացման կարգը և ծավալները՝ նկատի ունենալով այլ անձանց (ոչ կոնկրետ սուբյեկտի), հասարակության, պետության շահերը: Վ. Ի. Կուրդինովսկին նշում է, որ սահմանափակումը պետք է կրի օբյեկտիվ, այլ ոչ թե սուբյեկտիվ բնույթ¹⁷:

Ի տարբերություն սահմանափակման՝ ծանրաբեռնվածությանը միշտ համապատասխանում է երրորդ անձի իրավունքը. սեփականատիրոջ գույքի ծանրաբեռնվածության պատճառով երրորդ անձանց մոտ առաջանում է սեփականության իրավունքի օբյեկտի նկատմամբ իրային իրավունք: Սեփականության իրավունքը ծանրաբեռնվում է կոնկրետ սուբյեկտների իրավունքով կոնկրետ օբյեկտի նկատմամբ: Սա ծանրաբեռնվածության և սահմանափակումների հիմնական տարբերությունն է, որից բխում են մյուս առանձնահատկությունները: Քաղաքացիական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսգիրքը, որպես ծանրաբեռնվածություն, մատնանշում է սերվիտուտը, վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքները, գրավի իրավունքը, կառուցապատման իրավունքը, ռենտան, կտակային հանձնարարությունը: Այսինքն, գույքը ծանրաբեռնվում է կոնկրետ անձի իրավունքով, իսկ սահմանափակումները, կիրառվելով սեփականության իրավունքի օբյեկտի նկատմամբ, կոնկրետ անձի մոտ իրային իրավունք չեն առաջացնում:

2. Իրավունքի ծանրաբեռնվածությունը պետք է հստակ տարանջատել իրավունքի սահմանափակումներից՝ հաշվի առնելով դրանց նպատակը: Իրավունքի սահմանափակումը սահմանվում է՝ ապահովել այլ

անձանց իրավունքների, պետության, հասարակության շահերի, շրջակա միջավայրի անխաթարությունը ունենալու նպատակով:

Իր հերթին սահմանափակումները սահմանվում են՝ նպատակ ունենալով ապահովել այլ անձի համար տվյալ սեփականության օբյեկտի նկատմամբ սահմանված իրավունքի իրականացումը:

3. Իրավական գրականության մեջ բանավեճի նյութ է այն հարցը, թե արդյոք սեփականատերը իր գործողություններով կարող է սահմանափակել իր իրավունքները, թե՞ ոչ: Ա. Ի. Բիբիկովը և Վ. Ա. Միկոյուկովը կարծում են, որ սեփականատերն ոչ միայն կարող է իր գույքն ազատորեն տնօրինել և դրա նկատմամբ իրականացնել այս կամ այն գործողությունը իր հայեցողությամբ, այլև իրեն սահմանափակել որոշակի գործողություններ կատարելու մեջ: Ըստ Միկոյուկովի՝ ինքնասահմանափակումը ևս սահմանափակում է, որը թույլ է տրվում միայն օրենքի հիման վրա, և որի սահմանները որոշվում են սեփականատիրոջ կամքով¹⁸:

Վ.Վ.Բեզբախը գրում է. սահմանափակումները, որ դրվում են սեփականատիրոջ վրա օրենքով կամ դատական ակտով, արտահայտվում են առաջին հերթին նրան պատկանող իրավունքի տարրերի շոշափմամբ¹⁹:

Հակառակ տեսակետն է պաշտպանում Վ. Պ. Կամիշենսկին, որը կարծում է, որ պայմանագիրը (ինքնուրույն ակտը) չի կարող սեփականության իրավունքի սահմանափակման ինքնուրույն հիմք հանդիսանալ: Սեփականատիրոջ կողմից պայմանագրի կողմին առանձին լիազորություններ փոխանցելը սահմանափակում չէ: Պայմանագիրը տնօրինման իրավազորության սահմաններում սեփականության իրավունքի իրականացման եղանակներից մեկն է²⁰:

Այն, որ անձն իրավունք ունի իր գործողություններով, մասնավորապես կնքած պայմանագրով, սահմանափակել իր իրավունքները, բխում է օրենսդրական մի շարք հոդվածներից, որոնք սահմանափա-

կումները ամրագրում են որպես «օրենքով կամ պայմանագրով սահմանված»:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործի մեջ ընդգրկվող անշարժ գույքի առանձին միավորների նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող փաստաթղթերի ցանկում, ի թիվս այլոց, նախատեսում է անշարժ գույքի օգտագործման սահմանափակումների մասին որոշումները և պայմանագրերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 149-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փոխանցագիրը կարող է սահմանափակվել միայն արժեթղթով հավաստված իրավունքների իրականացման հանձնարարությամբ՝ առանց այդ իրավունքները ինդոսատին փոխանցելու (հանձնարարական փոխանցագիր):

Նման օրինակները, որոնք հիմնավորում են, որ իրավունքների սահմանափակումները կարող են սահմանվել սեփականատիրոջ գործողություններով, շատ են: Սակայն չպետք է մոռանալ, որ գործարքների, մասնավորապես պայմանագրերի կնքումով առաջանում են պարտավորական հարաբերություններ, ինչը նշանակում է, որ սեփականատիրոջ որոշակի իրավունքի, իրավազորության նեղացման փոխարեն իրավազորություն է ծագում պարտատիրոջ մոտ, հետևաբար, մեր խորին համոզմամբ, գործարքների հիման վրա կարող են առաջանալ ծանրաբեռնվածություններ, մինչդեռ սահմանափակումներ չեն կարող:

ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը իր հերթին սահ-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մանում է, որ քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Սա նշանակում է, որ նախ՝ ենթաօրենսդրական ակտերով սեփականատիրոջ համար չի կարող նախատեսվել սահմանափակումներ, և երկրորդ՝ սահմանափակումները չեն կարող լինել սեփականատիրոջ գործողությունների հետևանք, հետևաբար սեփականատերը, կնքելով պայմանագիր, չի կարող սահմանափակել իր իրավունքները:

Մինչդեռ սեփականատերը իր գործողություններով կարող է իրավական ծանրաբեռնվածություններ ստեղծել:

3. Միշտ ծանրաբեռնվում է կոնկրետ սեփականության իրավունքը կոնկրետ օբյեկտի նկատմամբ: Չի կարող ծանրաբեռնվածություն սահմանվել ընդհանրապես, որոշակի տեսակի օբյեկտների նկատմամբ, մինչդեռ, դրան հակառակ, սեփականության իրավունքի սահմանափակում սահմանվում է ոչ թե կոնկրետ սեփականության իրավունքի օբյեկտի նկատմամբ, այլ, որպես կանոն, սեփականության իրավունքի տվյալ տեսակի օբյեկտների նկատմամբ:

Այսինքն՝ ծանրաբեռնվել կարող է միայն կոնկրետ սուբյեկտիվ իրավունքը, և ծանրաբեռնվածություն կարող է սահմանվել բացառապես անհատապես որոշվող իրերի նկատմամբ, այդ իսկ պատճառով դժվար է գտնել օրինակ, երբ ծանրաբեռնվածություն սահմանվում է շրջանառության մեջ գտնվող դրամի նկատմամբ:

4. Նշվածից հետևում է, որ անշարժ գույքի ծանրաբեռնվածությունները՝ որպես անշարժ գույքի նկատմամբ սուբյեկտիվ իրավունք, ենթակա են պետական գրանցման, մինչդեռ, խնդրո առարկա հարցի տեսանկյունից սահմանափակումները ենթա-

կա չեն գրանցման՝ օբյեկտիվ իրավունքով սահմանված լինելու պատճառով: Այս պնդումը հաստատվում է նաև «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, ընդհանուր կանոն և արգելք հանդիսացող սահմանափակումները (առողջապահական, պաշտպանական, շրջակա միջավայրի պահպանման եւ այլն). ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

5. Կախված օբյեկտի տեսակից՝ սեփականության իրավունքի սահմանափակումների ծավալը տարբեր է: Շերշենկիչը նշում է, որ սահմանափակման նպատակը կանխորոշում է դրա ծավալը²¹:

Սահմանափակումների բովանդակությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե տվյալ օբյեկտը հասարակական հարաբերությունների տեսանկյունից ինչ կարևորություն է ներկայացնում, կամ դրա օգտագործումը ինչպիսի սուբյեկտների ինչպիսի շահեր կարող է շոշափել:

Իտալացի իրավաբան Ֆ. Լուկարելլին այդ գործընթացն անվանում է սեփականության իրավական ռեժիմների, սեփականության իրավունքի ձեռքբերման և պաշտպանության եղանակների «անհատականացում»՝ ելնելով այս կամ այն գույքի սոցիալական նշանակությունից և գործառնությունների տարբերությունից²²:

Պետությունը սեփականության սահմանափակումներ է սահմանում ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքի նկատմամբ, ընդ որում, սահմանափակումների մեծ մասն առնչվում է անշարժ գույքին, քանի որ վերջինիս նկատմամբ սեփականության իրավունքն է, որ առավել հաճախ բախվում է այլ անձանց և հասարակության իրավունքների և օրինական շահերի հետ²³:

Այդ իսկ պատճառով կասկածից վեր է, որ միշտ և ամենուր անշարժ գույքը ենթարկվել է շատ ավելի մեծ սահմանափակումների, քան շարժական գույքը²⁴:

Ծանրաբեռնման ժամանակ սեփականատիրոջն արգելվում է որոշակի գործո-

ղություններ կատարել, ընդ որում՝ այս առումով ընդհանրապես իրավական նշանակություն չունի, թե սեփականության իրավունքի ինչ օբյեկտ է ծանրաբեռնվում: Անշարժ գույքի նկատմամբ միակ իրավական պահանջը այլ անձանց իրավունքների գրանցումն է, այդ թվում, եթե այդ իրավունքներն առաջացել են երրորդ անձի սեփականությունը ծանրաբեռնելու հետևանքով:

6. Իրավական սահմանափակումների ծագման համար որպես իրավաբանական փաստ հանդես է գալիս միայն օրենքը, քանի որ սահմանափակումները գոյություն ունեն օբյեկտիվորեն, կարող են սահմանվել բացառապես օրենքով, ինչն ուղղակիորեն սահմանված է ՀՀ սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածով:

Մինչդեռ իրավունքի ծանրաբեռնվածություններ առաջանալու համար անհրաժեշտ է, որ այն նախևառաջ նախատեսված լինի օրենքով, և երկրորդ՝ անհրաժեշտ են պայմանագիր, պետական մարմնի ակտ կամ դատական ակտ, որն էլ իրավաստեղծ փաստ կհանդիսանա իրավական ծանրաբեռնվածությունների առաջացման համար: Այսինքն, ծանրաբեռնվածության առաջացման համար միշտ անհրաժեշտ է փաստական կազմ:

7. Իրավական ծանրաբեռնվածությունները, որոնք սահմանվում են ի շահ որոշակի անձանց, կարող են դադարել սեփականատիրոջ հետ մասնավոր անձանց փոխադարձ համաձայնությամբ կամ «հրաժարման ակտի հիման վրա»²⁵։ Մինչդեռ, սեփականության իրավունքի սահմանափակումները, սահմանված լինելով օբյեկտիվ իրավունքով, չեն կարող վերացվել սեփականատիրոջ հետ համաձայնությամբ:

8. Իրավական հետևանքները, կապված այն իրավիճակի հետ, երբ սեփականության իրավունքի օբյեկտը ոչնչանում է, նույնպես տարբեր է: Այն դեպքում, երբ խոսքն իրավունքի սահմանափակման մա-

սին է, իրավունքի օբյեկտի ոչնչացման արդյունքում սահմանափակումները դադարում են առանց որևէ իրավական հետևանքի, իսկ ծանրաբեռնվածության առկայության դեպքում գույքի ոչնչացման ժամանակ հնարավոր են դեպքեր, երբ իրավատերը իրավունք է ստանում սեփականատիրոջը որոշ պահանջներ ներկայացնել, օրինակ՝ գրավի առարկայի փոխարինումը գրավի առարկայի ոչնչացման դեպքում (քաղ. օր. 240 հոդվ.), ռենտայով ծանրաբեռնված գույքն օտարելիս սուբսիդիար պատասխանատվության պահանջը (քաղ. օր. 575-րդ հոդվ.):

9. Որպես ծանրաբեռնվածության հատկանիշ՝ կարելի է նշել այն, որ, որպես կանոն, այն ունի ժամանակավոր բնույթ և որոշակի ժամանակ անց ծանրաբեռնվածությունը, որոշակի իրավաբանական փաստի վրա հասնելու ուժով դադարում է: Օրինակ՝ կտակային հանձնարարականը, վարձակալությունը, գրավը: Մինչդեռ սեփականության իրավունքի սահմանափակումները, սահմանված լինելով օբյեկտիվ իրավունքով, նպատակ ունենալով ապահովելու հասարակության, երրորդ անձանց իրավունքների, շրջակա միջավայրի պահպանությունը, ունեն կայուն բնույթ, ենթադրվում են երկարաժամկետ և կարող են վերացվել միայն օրենսդրի կամքով:

10. Յուրաքանչյուր իրավական ծանրաբեռնվածություն, առաջանալով այլ անձի մոտ գույքային իրավունք ծագելու փաստով, ունի այնպիսի հատկանիշ, ինչպիսին «հետևելու իրավունքն» է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անցումն այլ անձի հիմք չէ այդ գույքի նկատմամբ սեփականատեր չհամարվող անձանց գույքային իրավունքների դադարման համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Բազմաթիվ հեղինակներ հենց այս իմաստով են հասկանում «հետևելու իրավունքը»²⁶:

«Հետևելու իրավունքը» գործում է միայն այն դեպքերում, երբ սահմանափակ իրային իրավունքի գոյության ժամանակ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տեղի է ունենում առավել ամբողջական գույքային իրավունքի իրավատիրոջ փոփոխություն, քան հետևող իրային իրավունքն է: Հետևելու իրավունքը պարտավորական իրավունքին հատուկ չէ, քանի որ պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում այն անձանց համար, որոնք դրանում որպես կողմ չեն մասնակցում: «Հետևելու իրավունքը» գործում է միայն այն դեպքում, երբ տեղի է ունենում առավել ամբողջական իրավունքի օտարում, և հատուկ է այն սուբյեկտի իրավունքին, որը տիրապետում է առավել նեղ ծավալով իրավունքի²⁷: «Հետևելու իրավունքը» բխում է *nemo plus iuris ad alium transferre potest quam ipse habet*²⁸ հայտնի կանոնից: Քանի որ նման առանձնահատկությունը բնորոշ է բոլոր սահմանափակ իրային իրավունքներին, այն հնարավորություն է տալիս որոշ հեղինակների եզրակացնելու, որ բոլոր սահմանափակ իրային իրավունքները ծանրաբեռնվածության տեսակ են²⁹: Հետևելու իրավունքը Միկրյուկովն այնքան էական է համարում, որ այն սեփականության ծանրաբեռնվածություն դիտելու համար անհրաժեշտ է համարում այդ իրավունքի՝ գույքին հետևելու հատկանիշը³⁰:

Հետևելու իրավունքը շեշտում է սեփականության իրավունքի ծանրաբեռնվածությունների բացարձակ բնույթը, ցույց է տալիս, որ իրավունքի գոյությունը անտարբեր է սեփականատիրոջ փոփոխությանը:

Կարևոր հարց է նաև այն, թե արդյոք սեփականության իրավունքի սահմանափակումները կամ ծանրաբեռնվածությունները կարող են արտահայտվել սեփականատիրոջ վրա ակտիվ գործողություններ կատարելու պարտականություն դնելու միջոցով:

Մեր կարծիքով, սահմանափակումներից պետք է տարբերակել սեփականության իրավունքի հետ կապված սեփականատիրոջ վրա դրված պարտականությունները: Եթե սահմանափակումները ի վերջո

հանգում են սեփականատիրոջ կողմից առանձին գործողություններից զերծ մնալու կամ գույքը որոշակի ձևով օգտագործելու պարտականությանը, այսինքն՝ արգելում են որոշակի գործողությունների որոշակի ձևով կատարումը, իրենցից ներկայացնում են պասիվ պարտականություններ, ապա սեփականատիրոջ վրա դրված պարտավորությունները ենթադրում են որոշակի ակտիվ գործողություններ, իրենց բնույթով պարտավորական են օրինակ՝ հարկեր վճարելու պարտականությունը: Սեփականատիրոջ համար արդեն առաջացած պարտականությունները գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման հետ չեն անցնում նոր սեփականատիրոջը:

Ծանրաբեռնվածության առումով սա առավել քան ակնհայտ է, քանի որ ծանրաբեռնվածության սահմանումով արդյունքում գույքային իրավունք է առաջանում: Գույքային իրավունքը գույքն անմիջականորեն իրավատիրոջ տիրապետման տակ է դնում: Յուրաքանչյուրը պարտավոր է հանդուրժել նրա ազդեցությունը գույքի վրա, և ոչ մեկը չպետք է դա խանգարի³¹:

Այսինքն, ծանրաբեռնվածությունը ենթադրում է սեփականատիրոջ պասիվ վարքագիծ, որպեսզի իրավատիրոջ իրավունքները չխախտվեն. ծանրաբեռնվածությունը չի ենթադրում սեփականատիրոջ վրա որոշակի գործողություններ կատարելու պարտականություն: Սեփականատիրոջ միակ պարտականությունը՝ կապված ծանրաբեռնվածության հետ, այն է, որ նա պարտավոր է չխոչընդոտել գույքային իրավունքի իրականացումը, սեփականատերը պարտավոր է հանդուրժել ծանրաբեռնվածության բովանդակությունը կազմող իրավունքների իրականացումը:

Եթե, հարաբերությունների բնույթից ելնելով, գույքի սեփականատիրոջից պահանջվում է դրական գործողությունների կատարում, ապա այդպիսի հարաբերությունը դիտվում է որպես պարտավորական³²:

Հռոմեական իրավունքի տեսանկյունից նույնպես սեփականատիրոջ վրա որևէ պա-

րագայում չի կարելի այնպիսի պարտականություն դնել, որը այլ անձի մոտ գույքային իրավունք կառաջացնի, մույնիսկ այնպիսի պարտականություն, ինչպիսին է գույքը պատշաճ վիճակում պահելու պարտականությունը: Ինչպես նշում են Ռ. Ի. Կուրդիմովսկին, Յու. Բարոնը և այլք, մեան պարտականություն դրվում է գույքային իրավունքի իրավատիրոջ վրա³³:

Ռ. Ի. Կուրդիմովսկին նշում է, որ իրավունքի սահմանափակումը կարող է մաս *ad faciendum* պարտականության ձևով դրսևորվել³⁴, (այսինքն որոշակի գործողություններ կատարելու պարտականության ձևով):

Հռոմեական իրավունքում գույքի ծանրաբեռնվածություններից քննարկման առարկա է դարձել հատկապես սերվիտուտը, որի կապակցությամբ արտահայտված կարծիքները կարելի է տարածել բոլոր ծանրաբեռնվածությունների վրա: Ուլպիանը պնդում էր, որ «Գալը գտնում է, որ չի կարելի սերվիտուտ սահմանել այնպես, որ որևէ մեկը պարտավոր լինի որևէ գործողություն կատարել, սակայն սերվիտուտի ուժով չի կարելի խոչընդոտել իմ գործողությունները, քանի որ բոլոր տեսակի սերվիտուտների պարագայում վերանորոգման պարտականությունը դրվում է նրա վրա, ով պնդում է, որ իրեն է պատկանում սերվիտուտը, սակայն ոչ նրա վրա, ում գույքը ծանրաբեռնվել է սերվիտուտով»: Սակայն այդ հարցում մախսպատվություն են ստացել Սուլպիցիա Սեվերի և Լաբեոնի տեսակետները, որոնք հակառակ բնույթ ունեին³⁵:

Սեփականատերը սեփականության իրավունքի սահմանափակման հետևանքով երբևէ չի պարտավորվում կատարել որոշակի դրական գործողություններ³⁶:

Այս տեսանկյունից, մեր կարծիքով, խոցելի է ՀՀ հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն իրաժարվել նվիրատվության կարգով պետությանը կամ համայնքներին անցնող հողամասերից, բացառությամբ մարդկանց

կյանքի ու առողջության համար վտանգ սպառնացող կամ հողամասերի շուկայական գինը գերազանցող պարտքերով ծանրաբեռնված հողամասերի նվիրատվության դեպքերի, քանի որ պարտքեր վճարելու պարտականությունը ծանրաբեռնվածություն չի կարող դիտարկվել. այն սեփականատիրոջ՝ սեփականության օգտագործման հետ կապված պարտականությունն է, որը սեփականատիրոջ փոփոխության պարագայում նոր սեփականատիրոջը չի փոխանցվում: Պարտքերը մարելու պարտականությունը դրվում է կոնկրետ անձի վրա՝ անկախ այդ պարտքի ծագման հիմքից:

Սեփականության իրավունքի սահմաններից, սահմանափակումներից և ծանրաբեռնվածություններից կարևոր է տարբերակել այն գործողությունները կատարելու սահմանափակումները, որոնք կարող է կատարել սեփականատերը: Ծանրաբեռնվածությունները, սահմանափակումները և սահմանները սահմանվում են գույքի նկատմամբ և նպատակ են հետապնդում ապահովելու սեփականության իրավունքի իրականացումն այնպես, որ սեփականության իրավունքի իրացումը վնաս չպատճառի այլ անձանց, հասարակության, այլ օրենքով պաշտպանվող շահերի: Այնինչ, սեփականատիրոջ կողմից որոշակի գործողությունները կատարելու սահմանափակումները սահմանվում են ոչ թե գույքի նկատմամբ, այլ ուղղված են սեփականատիրոջը, ուղղված են ապահովելու սեփականատիրոջ կողմից իր պարտականությունների պատշաճ կատարումը: Սեփականատիրոջ գործողությունների սահմանափակումն ունի բոլորովին այլ նպատակներ և կարգավորում, հետևաբար սեփականության իրավունքի սահմանների, սահմանափակումների և ծանրաբեռնվածությունների վերաբերյալ տեսական վերլուծությունները այդ ինստիտուտի նկատմամբ կիրառելի չեն: Այդպիսի սահմանափակումները կարող են սահմանվել միայն դատարանի որոշմամբ, դատավարական կարգով: Այդպիսի միջոցների թվին են դասվում արգելանքը, գույքի վրա կալանք դնելը: Այս

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

դեպքում սահմանափակումը ուղղված է ոչ թե գույքին, այլ սեփականատիրոջը:

Նշված միջոցները՝ որպես ընդհանուր կանոն, դրսևորվում են օտարման իրավունքի սահմանափակմամբ, ինչի կապակցությամբ Բեկկինգը նշում է, որ օտարման իրավունքի սահմանափակումները սեփականության իրավունքի սահմանափակում չեն համարվում: Դրանց բնույթն առանձնահատուկ է, հարաբերական և փոխանցվող: Այդպիսի արգելքներ սահմանվում են կամ որոշակի անձանց շահերի կամ որոշակի իրավահարաբերությունների պաշտպանության համար, կամ առանձին դեպքերում նպատակ ունենալով խթանել իրավունքի իրականացմանը: Նրա կարծիքով, դրանք իրենց բնույթով իրավունակության սահմանափակումներ են⁹⁷:

Գերմանական քաղաքացիական օրենսգրքի (18-ը օգոստոսի, 1896թ.) հեղինակները գտնում են, որ օրենքում ամրագրված գույքն օտարելու սեփականատիրոջ սահմանափակումները «չեն համարվում սեփականության իրավունքի

սահմանափակումներ, քանի որ դրանք, իրենցից մերկայացնելով օտարման օրինական արգելքներ, ծառայում են որոշակի մասնավոր կամ հանրային շահերի պահպանությանը և չեն առնչվում սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագորությունների ընդհանուր ծավալին»⁹⁸:

Սեփականատիրոջ իրավունակության՝ օրենքով նախատեսված սահմանափակման հետ գործ ունենք նաև այն դեպքում, երբ խոսքը գույքի որոշակի տեսակների՝ շրջանառունակության սահմանափակման մասին է:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք պետք է օրենսդրորեն միասնական մոտեցում ցուցաբերել սեփականության իրավունքի «սահման», «սահմանափակում», «ծամրաբեռնվածություն» հասկացություններն օգտագործելիս՝ անկախ իրավունքի ճյուղից: Նման մոտեցումը հնարավորություն կտա խուսափելու տարակերպ մեկնաբանություններից, ապահովելու իրավական որոշակիությունը և օրենքի միատեսակ կիրառությունը, կանխելու հնարավոր վեճերը:

¹⁸ Принципы, пределы, основания,

¹ Տե՛ս Курдиновский В. И. նշված աշխատությունը, էջ 21:

² Տե՛ս Камышанский В. П., նշված աշխատությունը, էջ 67:

³ Տե՛ս www.nestu.ru Нарыкова Ю. В., Понимание ограничений права собственности в юридической науке.2005, էջ 7:

⁴ Տե՛ս Курдиновский В. И. նշված աշխատությունը էջ 26-27:

⁵ Տե՛ս Курдиновский В. И., նշված աշխատությունը, էջ 27:

⁶ Տե՛ս Նույն տեղը, էջ 119:

⁷ Տե՛ս Նույն տեղը, էջ 117:

⁸ Уткин Б. Абсолютное право- относительные полномочия Юрист 2002 N 48, էջ 2 *լստ* Микрюков В. А. Ограничения и обременения гражданских прав.Москва 2007, էջ 43

⁹ Камышанский В. П., նշված աշխատությունը, էջ 48

¹⁰ www.nestu.ru Нарыкова Ю. В., Понимание ограничений права собственности в юридической науке.2005, էջ 8

¹¹ Мечетина Т. А.- Ограничения права собственности: проблемы публичных и частных интересов Автореф. Рязань.2001, էջ 17-18

¹² Камышанский В. П., նշված աշխատությունը, էջ 201

¹³ Микрюков В. А. Ограничения и обременения гражданских прав.Москва 2007, էջ 22,

¹⁴ Ըստ նույն աշխատության, էջ 22, Долинская В. В., Ограничения права собственности: понятие и виды. Закон. 2003, N 11, էջ 28

¹⁵ Скловский К. И., Собственность в гражданском праве, Москва 2002, էջ 150

¹⁶ Мечетина Т. А., նշված աշխատությունը, էջ 95

¹⁷ Курдиновский В. И., նշված աշխատությունը, էջ 26

- ограничения прав и свобод человека по российскому законодательству и международному праву. «Круглый стол» журнала Государство и право // Государство и право. 1998, N 8, էջ 60, *Микрюков В. А.*, նշված աշխատությունը, էջ 57.
- ¹⁹ *Безбах В. В.* Частная собственность на землю в странах Латинской Америки (правовое регулирование). М., 1997, էջ 82.
- ²⁰ Камышанский В. П., նշված աշխատությունը, էջ 116
- ²¹ Торговое право. Шершеневич Г.Ф. Том I. Введение. Торговые деятели. Изд. четвертое. СПб. По изданию 1908
- ²² Lucarelli F. La proprietà planificata. Napoli, 1974. P. 180-231. Цит. по: *Кикоть В. А.* Современные тенденции и противоречия учения о праве собственности в развитых капиталистических странах // Актуальные проблемы современного буржуазного гражданского права: Сб. научно-аналитических обзоров. М., 1983. ըստ? Камышанский В. П., նշված աշխատությունը, էջ 110:
- ²³ Камышанский В. П., նշված աշխատությունը, էջ 102:
- ²⁴ Грибанов В.П., նշված աշխատությունը, էջ 131:
- ²⁵ Курдиновский, նշված աշխատությունը, էջ 66.
- ²⁶ Иоффе О. С., Мусин В. А. Основы римского гражданского права. Л., 1974., էջ. 82., Брагинский М.И. Договор подряда и подобные ему договоры. М., 1999, էջ.70; Власова А.В. К дискуссии о вещных и обязательственных правах // Правоведение. 2000. N2., էջ 147; Ефимова Л.Г. О соотношении вещных и обязательственных прав // Государство и право. 1998. 10., էջ.42; Старостина О.А. Правовая природа залога // Актуальные проблемы гражданского права: Сборник статей. Вып.5 / Под ред. В.В. Витрянского. М., 2002., էջ 36; Суханов Е.А. Право собственности и иные вещные права в России // Маттеи У., Суханов Е.А. Основные положения права собственности. М., 1999. էջ.318; Тимонина Ю.В. Категория ограниченных вещных прав в доктрине и законодательстве (Общие положения) // Актуальные проблемы гражданского права. Вып.2 / Под ред. М.И. Брагинского. М., 2000. էջ.59. Годэмэ Е. Общая теория обязательств. М., 1948. էջ.13; Introduction to Dutch Law / Edited by J.M.J. Chorus, P.H.M. Gerver, E.H. Hondius and A.K. Koekkoek. The Hague-London-Boston, 1999. էջ 98.
- ²⁷ Гришин А. А. Специфика правовой природы ограниченных вещных прав на землю N 8 2008 – Экономика и право, http://www.zpu-journal.ru/e-zpu/2008/8/Grishin/#_ftn10:
- ²⁸ Ոչ որ չի կարող մեկ ուրիշին փոխանցել ավելի շատ իրավունք, քան ինքն ունի (լատ.):
- ²⁹ Микрюков В. А., նշված աշխատությունը, էջ 78:
- ³⁰ Микрюков В. А., նշված աշխատությունը, էջ 78:
- ³¹ *Курдиновский В. И.* նշված աշխատությունը, էջ 44; *Барон Ю.* Система Римского гражданского права. Вып. 2. Книга 3. Вещные права. 3-е изд. СПб., 1908. , էջ. 87-88.
- ³² И.Б. Новицкий. Римское право. Сервитуты. Понятие и виды, http://society.polbu.ru/novitsky_pravo/ch33_i.html
- ³³ См.: *Курдиновский В. И.* նշված աշխատությունը, էջ. 44; *Барон Ю.* Система Римского гражданского права. Вып. 2. Книга 3. Вещные права. 3-е изд. СПб., 1908., էջ. 87-88.
- ³⁴ *Курдиновский В. И.* նշված աշխատությունը, էջ 53.
- ³⁵ Նույն տեղը
- ³⁶ Куликова, նշված աշխատությունը, էջ 85
- ³⁷ Pandekten des romischen Privatsrechts B. 2 Lieferung 1. 1855. էջ. 31-32. §158, ըստ? Курдиновский В. И. Указ. соч էջ. 76:
- ³⁸ Romisches Privatrecht 1862, s. 80; Pandekten. 1855. § 138, s. 32. ըստ: *Курдиновский В. И.* Указ. соч. էջ. 24. 98

ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակ՝ ՀԱԽՎԵՐԳՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Իրավական դաշտում վարկային կազմակերպությունների համակարգային պատկանելիության հարցի համարժեք կարգավորումն ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն: Մի կողմից այն հնարավորություն կտա բանկային օրենսդրության կողիֆիկացման ժամանակ համալիր կարգավորման ենթարկել վարկային կազմակերպությունների իրավական կարգավիճակը, Կենտրոնական բանկի և այլ սուբյեկտների հետ առնչման ոլորտները, մյուս կողմից՝ կիրառական տեսակետից ավելի դյուրին կդարձնի նորմատիվ մյուսից օգտվելը:

«Վարկային կազմակերպություն» (ռուս.՝ «кредитная организация», անգլ.՝ «credit organization», ֆրանս.՝ «l'organisation de crédit») եզրույթը բավականին լայն կիրառություն ունի ինչպես իրավաբանական և տնտեսագիտական գրականության մեջ, այնպես էլ տարբեր երկրների օրենսդրություններում: Այդուհանդերձ, այս եզրույթը միանշանակ և համընդգրկուն մեկնաբանություն չի գտել ո՛չ իրավաբանական գրականության, ո՛չ էլ տարբեր պետությունների օրենսդրության մեջ, և հեղինակների կարծիքներն այս հարցի վերաբերյալ միմյանցից տարբերվում են: Որոշ հեղինակներ, օրինակ՝ Ա.Ա. Վիշնևսկին, Ա.Ս. Կարելինան, Ա.Կուրբատովը և այլք, «վարկային կազմակերպություն» եզրույթը դիտարկում են որպես սահմանային հասկացություն, որի շրջանակներում որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ հանդես են գալիս բանկերը և բանկ չհանդիսացող վարկային կազմակերպությունները¹: Նմա-

նատիպ մոտեցում է դրսևորվում նաև եվրոպական որոշ հեղինակների աշխատություններում (Ֆ. Չեսնեյս, Ռ. Վիթլի)²: Ռուս հեղինակների դիրքորոշումը բխում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1990թ. դեկտեմբերի 2-ի ՌԴ օրենքի 2-րդ հոդվածի բովանդակությունից, համաձայն որի՝ «ՌԴ բանկային համակարգը իր մեջ ներառում է Ռուսաստանի բանկը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև արտասահմանյան բանկերի մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները»: Իսկ նույն օրենքի 1-ին հոդվածը տալիս է ՌԴ բանկային համակարգը կազմող տարրերի սահմանումները: Այսպես, վարկային կազմակերպությունը իր գործունեության արդյունքում շահույթ ստանալու հիմնական նպատակ հետապնդող իրավաբանական անձ է, որը Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի (Ռուսաստանի բանկի) կողմից տրված հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա իրավունք ունի իրականացնելու «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՌԴ օրենքով նախատեսված բանկային գործառնություններ: Բանկը ևս բնորոշվում է որպես վարկային կազմակերպություն, որն ունի բացառիկ իրավունք իրականացնելու տվյալ օրենքով նախատեսված բանկային գործառնությունների ամբողջ համալիրը: Բանկ չհանդիսացող վարկային կազմակերպությունը վարկային կազմակերպություն է, որն իրավունք ունի իրականացնելու սույն դաշնային օրենքով նախատեսված առանձին բանկային գործառնություններ: Բանկ չհանդիսացող վարկային կազմակերպությունների համար բանկային գործառնությունների թույլատրելի տեսակները սահմանվում են Ռուսաստանի կենտրոնական բանկի կողմից: Արտասահմանյան բանկը այն բանկն է, որը այդպիսին է ճանաչվել արտասահմանյան

այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում գրանցված է:

Այսինքն՝ ՌԴ օրենսդրությունը վարկային կազմակերպություններ է համարում բանկային գործունեության բոլոր սուբյեկտներին, որոնք կարող են գոյություն ունենալ կամ բանկերի, կամ բանկ չհանդիսացող վարկային կազմակերպությունների տեսքով: Դրանց միջև տարբերությունը այն բանկային գործառնությունների համալիրում է, որն իրավունք ունի իրականացնելու բանկը կամ բանկ չհանդիսացող վարկային կազմակերպությունը³: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ չնայած ռուս օրենսդիրը վարկային կազմակերպություն է համարում բանկային գործունեության բոլոր սուբյեկտներին՝ հիմք ընդունելով դրանց կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, սակայն նույն մոտեցումը չի դրսևորում ՌԴ Կենտրոնական բանկի նկատմամբ այն պարագայում, երբ ՌԴ Կենտրոնական բանկը Կառավարության հետ փոխհարաբերություններում իրականացնում է վարկային կազմակերպություններին բնորոշ գործառնություններ⁴: Փաստորեն, եթե հետևենք ՌԴ օրենսդրության տրամաբանությանը և վարկային կազմակերպություն հասկացությունը ենթարկենք տարածական մեկնաբանության, ապա ՌԴ Կենտրոնական բանկը և՛ որպես իրավաբանական անձ, կհամարվի վարկային կազմակերպություն:

«Վարկային կազմակերպություն» հասկացության նկատմամբ միանգամայն այլ մոտեցում է դրսևորել հայ օրենսդիրը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996թ. հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության օրենքը⁵ հստակ սահմանում է բանկային համակարգի, բանկերի և բանկային գործունեության հասկացությունը: Այսպես, նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը (այսուհետև՝ Կենտրոնական բանկ), Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (այդ թվում՝ դուստր բանկերը),

նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները (կետերը), ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները»: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն: Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդներ ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով»:

«Վարկային կազմակերպությունների մասին» 2002թ. մայիսի 29-ի Հայաստանի Հանրապետության օրենքի⁶ 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Վարկային կազմակերպությունը սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձն է, որն իրավունք ունի իրականացնել սույն օրենքով սահմանված գործունեության տեսակները»: Իսկ նույն օրենքի 1-ին հոդվածը սահմանում է օրենքի կարգավորման առարկան՝ նշելով, որ «Սույն օրենքը կարգավորում է վարկային կազմակերպությունների, այդ թվում՝ վարկային միությունների, խնայողական միությունների, լիզինգային, ֆակտորինգային կազմակերպությունների և այլ վարկային կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման, գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեության տեսակի փոփոխման կարգը: Սույն օրենքի գործողությունը չի տարածվում բանկերի (բացառությամբ սույն օրենքի 6-րդ գլխով նախատեսված դեպքերի), ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, կենսաթոշակային ֆոնդերի, ներդրումային

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ընկերությունների, գրավատների, գյուղատնտեսական վարկային ակումբների վրա, որոնց գործունեությունը կարգավորվում է այլ օրենքներով և իրավական ակտերով»: Այսինքն, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն ՌԴ օրենսդրության, խիստ սահմանափակում է «վարկային կազմակերպություն» եզրույթի կիրառության շրջանակները:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը վարկային կազմակերպություններին ոչ միայն չի համարում բանկային գործունեության սուբյեկտներ, այլև կարծես փորձում է արհեստականորեն ձևավորել ֆինանսական գործառնություններ իրականացնող սուբյեկտների ինքնուրույն համակարգ, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ ինչպես օրենսդրության կառուցվածքի, այնպես էլ այդ մարմինների գործունեության իրավական կարգավորման նպատակահարմարության տեսանկյունից:

Վարկային կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման հայեցակարգը, մեր կարծիքով, պետք է ընդգրկի հետևյալ կարևոր ուղղությունները: Առաջին հերթին օրենքի մակարդակով պետք է հստակեցնել վարկային կազմակերպությունների համակարգային պատկանելիության հարցը՝ հաշվի առնելով այդ կառույցների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները: Այս առնչությամբ դժվար է գերազանահատել համակարգային մոտեցման նշանակությունը իրավաստեղծ գործունեության բնագավառում: Վարկային կազմակերպությունները, ըստ էության, բանկային գործառնությունների որոշակի տեսակներ իրականացնող իրավաբանական անձինք են, ուստի դրանց իրավական վիճակը որոշվում է մի կողմից իրավաբանական անձանց վերաբերյալ ընդհանուր նորմերով, մյուս կողմից՝ վարկային կազմակերպությունների վերաբերյալ հատուկ կանոններով: Վար-

կային կազմակերպությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրության համակարգը ներառում է նաև բանկային գործունեության ոլորտը կարգավորող մի շարք իրավունքի աղբյուրներ, որոնցով միաժամանակ կարգավորվում են վարկային կազմակերպություններին առնչվող որոշ հարցեր: Այս առումով Հայաստանի Հանրապետության օրենսդրության կառուցվածքը թույլ չի տալիս նույնիսկ տրամաբանական եզրակացության հանգել այն մասին, թե վարկային կազմակերպությունները ինչ տեղ են զբաղեցնում ֆինանսավարկային կազմակերպությունների համակարգում. արդյո՞ք դրանք մտնում են բանկային համակարգի մեջ, թե՞ ոչ: Տնտեսագիտական գրականության մեջ հիմնականում այն կարծիքն է արտահայտվում, որ բանկ չհանդիսացող վարկային կազմակերպությունները բանկային համակարգի մասն են կազմում⁷, ինչը լիովին արդարացված է այդ կազմակերպությունների տնտեսական դերի տեսանկյունից : Այս մոտեցումն ուղղակիորեն արտահայտված է նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ: Հայ օրենսդրի դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ անհասկանալի է. մի կողմից վարկային կազմակերպությունների համակարգային պատկանելիության վերաբերյալ որևէ նորմատիվ ակտում ուղղակի նշում չենք գտնի, իսկ մյուս կողմից մի շարք նորմատիվ ակտերի կոնկրետ դրույթների համադրումը և վերլուծությունը ցույց են տալիս, որ բոլոր հիմքերը կան Հայաստանի Հանրապետությունում ևս վարկային կազմակերպությունները դե յուրե ներառելու բանկային համակարգի մեջ: Բացի այն, որ վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը սերտորեն առնչվում է բանկային գործունեության ոլորտին, նաև բանկերին և վարկային կազմակերպություններին Կենտրոնական բանկի կողմից ներկայացվող բազմաթիվ պահանջների և նորմատիվների միասնականությունը թույլ է տալիս վարկային կազմակերպությունները տեսանելի ապագայում ընդգրկել բանկային համակարգի մեջ:

Վերը շարադրվածը հիմնավորելու համար բերենք մի քանի փաստարկներ: Նախ, «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք դրույթներում կարող ենք հանդիպել «բանկեր, վարկային կազմակերպություններ և այլ անձինք» արտահայտությանը, ինչը խոսում է այն մասին, որ օրենսդիրը բանկերն ու վարկային կազմակերպություններն առանձնացնում է ֆինասավարկային համակարգը կազմող մյուս օղակներից: Միաժամանակ, բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության հարցերը կարգավորող միասնական ակտի առկայությունը («Բանկերի, ներդրումային ընկերությունների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք), «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում բանկերի՝ որպես վարկային կազմակերպություն գրանցվելու կարգի նախատեսումը, Կենտրոնական բանկի կողմից բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ իրականացվող վերահսկողության բնույթը և կարգը, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի որոշումներով բանկերի և վարկային կազմակերպությունների համար սահմանած մի շարք պահանջների միասնականությունը (Կենտրոնական բանկի խորհրդի 2002թ. դեկտեմբերի 13-ի որոշումը «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր անդամի ստորացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները և անվճարունակ բանկի և վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրի ձևը հաստատելու մասին», Կենտրոնական բանկի խորհրդի 2005թ. մարտի 29-ի որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի

Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը հաստատելու մասին» և այլն) վկայում են վարկային կազմակերպությունները բանկային համակարգում ներառելու օբյեկտիվ անհրաժեշտության մասին:

Հավելենք նաև, որ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածներում նշված և այդ սուբյեկտների կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները գրեթե նույնն են՝ բացառությամբ բանկային հաշվի և բանկային ավանդի պայմանագրերի կնքման հետ կապված գործառնությունների, որոնք վերապահված են բանկերի բացառիկ իրավասությանը: Այսինքն՝ վարկային կազմակերպությունների գործունեության բնագավառն ավելի նեղ է, քան առևտրային բանկերինը: Եթե բանկերը երկրի հիմնական ֆինանսական հաստատություններն են, որոնք ի սկզբանե ուղղորդված են բանկային գործառնությունների ողջ համակարգի իրականացմանը, ապա վարկային կազմակերպությունները բանկերի համեմատ ունեն երկրորդական բնույթ, նրանց գործունեությունն ածանցվում է բանկային գործունեությունից⁸, սակայն այդ փաստն ամենևին չի նսեմացնում վարկային կազմակերպությունների դերն ու նշանակությունը ֆինանսական շուկայում:

Հիմնվելով վերը շարադրվածի վրա՝ առաջադրում ենք «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը (այսուհետեւ՝ Կենտրոնական բանկ), Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (այդ թվում՝ դուստր բանկերը), նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները (կետերը), վարկային կազմակերպությունները,

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, ինչպես նաև օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները»: Կարծում ենք՝ նման հստակ ձևակերպումը թույլ չի տա վարկային կազմակերպությունների համակարգային պատկերիության վերաբերյալ երկիմաստ դատողություններ անել:

Վարկային կազմակերպությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության բազմակողմանի ուսումնասիրությունը և այլ պետությունների օրենսդրությունների հետ համադրումը թույլ են տալիս նախանշել վարկային կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման հիմնական ուղղությունները: Այդ ուղղությունները հստակեցնելու համար նախ անհրաժեշտ է համակարգել օրենսդրական կարգավորման ենթակա հարցերը, ինչպես նաև հաշվի առնել «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կառուցվածքն ու տրամաբանությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ վարկային կազմակերպությունների վերաբերյալ գործող օրենսդրությունը օրգանապես կապված է Հայաստանի Հանրապետության ամբողջ իրավական համակարգի հետ, ուստի օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս պետք է անպայման հետևողականորեն համապատասխան փոփոխություններ ու լրացումներ մտցնել նաև հարակից իրավական ակտերում: Որպեսզի իրավաստեղծ գործունեությունը ծառայի իր առաքելությանը, իրավաստեղծ ցանկացած նոր ակտ չպետք է խաթարի գործող իրավունքի ներքին կառուցվածքը և տրամաբանությունը, իրավունքի աղբյուրների աստիճանակարգվածությունը, համակարգի նորմատիվ բովանդակությունը, այլ պետք է ոչ ուրիմ ներթափանցի այդ համակարգի մեջ, գտնի իր տեղն ու դերը նորմատիվ համակարգի աստիճանակարգում:

Շատ զարգացած պետություններ արդեն իսկ ընտրել են բանկային օրենսդրու-

յան կողիֆիկացման ուղին՝ ընդունելով բանկային օրենսգրքեր, որոնք կարգավորում են բանկերի և ֆինանսավարկային այլ հաստատությունների իրավական կարգավիճակը, Կենտրոնական բանկի, միմյանց, ինչպես նաև հաճախորդների միջև հարաբերությունները և այլն: Կարծում ենք, Հայաստանի Հանրապետությունում ևս հասունացել է պահը՝ բանկային օրենսդրության կատարելագործումը տանելու կողիֆիկացիայի ճանապարհով:

Թերևս անհրաժեշտություն չկա մեկ անգամ ևս կրկնելու, որ իրավաստեղծ գործունեության բովանդակությունը, բնույթը, նպատակները և արդյունքը մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, թե իրավաստեղծ մարմինը ինչպիսի սկզբունքներով է ղեկավարվում: Իրավաստեղծ գործունեության սկզբունքները իրավաստեղծ ամբողջ ընթացակարգի ելակետային, հիմնարար պահանջներն են, որոնցով պետք է ղեկավարվեն իրավաստեղծ մարմինները⁹: Այդպիսի հիմնարար սկզբունքներ են իրավական և սոցիալական լեգիտիմությունը կամ իրավունքի արժեքային հատկանիշների արտացոլումը իրավական ակտերի նորմատիվային բովանդակության մեջ¹⁰, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը, գիտական հիմնավորվածությունը և պրոֆեսիոնալիզմը, համակարգված մոտեցումը: Իրավաստեղծ գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև այդ գործունեության գիտական հիմնավորվածությամբ և պրոֆեսիոնալիզմով:

Նորմատիվ-իրավական ակտերի գիտական հիմնավորվածությունը իրավաստեղծ գործունեության բոլոր փուլերում շատ կարևոր է իրավունքի իրացման, իրավունքի նկատմամբ հարգանքի և իրավագիտակցության բարձրացման, ինչպես նաև իրավական դաստիարակության համար¹¹:

Ընդունվող օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի գիտական հիմնավորվածության ապահովման համար կարևոր նշանակություն ունի օրինագծերի գիտական փորձաքննության անցկացումը համապատասխան գիտական հաստատությունների կամ առանձին գիտնականների կողմից, որի հիմնական նպատակն է աջակցել իրավաստեղծ գործունեության բարելավ-

մանը և նորմատիվ-իրավական ակտերի ուրակական հատկանիշների բարձրացմանը: Այդ առաքելությունը՝ գիտական փորձաքննությունը, արդյունավետ կարող է իրականացվել հետևյալ փոխկապակցված գործառույթների միջոցով.

ա) նախագծի ընդհանուր արժեքավորումը բովանդակային առումով, այսինքն՝ առաջարկվող իրավական ձևը (ակտի տեսակը) արդյո՞ք համարժեք է արտահայտում իրավական կարգավորման ենթակա օբյեկտիվ պահանջումները:

բ) նախագծի գնահատումը՝ ձևական իրավաբանական տեսանկյունից, այսինքն՝ նախագծում ամրագրված նյութը որքանո՞վ է բավարարում իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի պահանջները:

գ) կանխատեսման գործառույթը, այսինքն՝ ընդունվելիք նորմատիվ ակտը, որքանո՞վ արդյունավետ կգործի նաև տեսանելի ապագայում¹²:

Իրավաստեղծ գործունեության համար հատկապես կարևորվում է խնդրո առարկայի նկատմամբ համակարգային մոտեցումը, որը ներկայումս լայն տարածում է գտել զարգացած երկրների իրավաստեղծ պրակտիկայում: Ինչպես նշում է Յ. Ստեփանյանը, «Համակարգային մոտեցման

տրամաբանությունը պահանջում է, որ իրավունքի համակարգը ուսումնասիրվի առարկայական կեցության մեջ, ժամանակավորապես վերացարկելով նրա գոյության իրական հարաշարժությունը»¹³:

Ի թիվս վերոհիշյալ սկզբունքների և մոտեցումների՝ վարկային կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության համակողմանի կատարելագործումը պահանջում է նաև առավելագույնս հաշվի առնել այն տնտեսական օրինաչափությունները, որոնց վրա կառուցվում են ֆինանսավարկային հարաբերությունները: Ֆինանսավարկային հարաբերությունները, լինելով տնտեսական հարաբերությունների կարևորագույն բաղադրատարր, իրենց վրա կրում են այդ հարաբերությունների առանձնահատկությունների դրոշմը, ուստի նշված ոլորտի հարաբերությունները կարգավորելիս օրենսդրի համար որպես ուղեմիջ պետք է ծառայի տնտեսական հարաբերությունների համալիր (կոմպլեքսային) կարգավորման անհրաժեշտությունը: Այս և մյուս սկզբունքներն ու մոտեցումները պետք է ընկած լինեն վարկային կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրության բարեփոխման հայեցակարգի հիմքում:

¹ Տե՛ս А.А. Вишневский, Банковское право. Краткий курс лекций. Статут, М. 2004. А.С. Карелина, Правовое регулирование вопросов создания, реорганизации и ликвидации акционерных обществ. Учебное пособие. М., «Зерцало», 1998. А.Я.Курбатов, Поправки в банковское законодательство: сущность и значение. «Хозяйство и право», 2001, N 10:

² Տե՛ս Chesnais, F. National systems of innovation, foreign direct investment and the operations of multinational enterprises. In Lunvall 1992. Whitley, R. European Business Systems: Firms and Markets in their National Contexts. London: Sage 1992:

³ Տե՛ս А.А.Вишневский, Банковское право. Краткий курс лекций. Статут, М. 2004, էջ 9:

⁴ ՀՀԱԺՏ 1996/12:

⁵ ՀՀՊՏ 03.07.02./23(198) ???526:

⁶ Տե՛ս А.А. Вишневский. Банковское право. Статут. М. 2004. էջ 12:

⁷ Տե՛ս Տ.Կ. Բարսեղյան, Գործարարական իրավունք, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2007, էջ 99:

⁸ Տե՛ս М.Н. Марченко. Общая теория государства и права. Академический курс. Том 2. Теория права. М., 1998. էջ 162:

⁹ Տե՛ս, Проблемы ценностного подхода в праве: традиции и обновление. М., 1996, էջ 56:

¹⁰ Տե՛ս Научные основы правотворчества. Отв. ред. Р.О. Халфина, М., 1981, էջ 53

¹¹ Տե՛ս Ն.Ա. Ապիյան, Գ.Գ. Սաֆարյան, Ջ. Հ. Հակոբյան, Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2001, էջ 229

¹² Տե՛ս Յ. Ստեփանյան, Իրավունք և օրենսդրություն, Հայաստանի պետության և իրավունքի տեսության և պատմության հիմնահարցեր, Երևան, 1998, էջ 42:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ
ԵՆԹԱԳՐՅԱԼ ԻՐԱՎԱՍՈՒԲԵԿՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Արման ՍԱՐԳՍՅԱՆ

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի
ամբիոնի ասպիրանտ, ԵՊՀ եվրոպական
իրավունքի և ինտերգրման կենտրոնի փոքրագետ*

Միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, բացի պետություններից, պետականակերպ կազմավորումներից և իրենց անկախության համար պայքարող ազգերից ու ժողովուրդներից, հանդիսանում են նաև միջազգային կազմակերպությունները¹: Առաջին անգամ միջազգային կազմակերպությունները որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ առաջ են եկել 19-րդ դարում²: Ժամանակի ընթացքում միջազգային կազմակերպություններին զուգահեռ առաջացել նաև մի շարք այլ միջազգային հաստատություններ, որոնք միջազգային կազմակերպություն չեն հանդիսանում և հետևաբար միջազգային իրավունքի սուբյեկտ լինել չեն կարող (օրինակ՝ Գրինվիլդը): Միջազգային կազմակերպությունները այդ հաստատություններից զանազանելու համար միջազգայի իրավունքի տեսության մեջ մշակվել են մի շարք հատկանիշներ, որոնք թույլ են տալիս այս կամ այն միջազգային հաստատությունը միջազգային կազմակերպություն որակելու համար: Այդպիսի հատկանիշներ հանդիսանում են միջազգային կազմակերպությանը ինքնիշխան պետությունների մասնակցությունը, հիմնադրման պայմանագրային հիմքը, նրա մոտ որոշակի նպատակների առկայությունը, մշտական հիմունքներով գործող մարմիններ ունենալը, միջազգային իրավունք-

քին համապատասխան հիմնադրված լինելը³: Հատկանիշների այս համախմբում միջազգայնագետների մեծամասնությունն առանձնացնում է ևս մի հատկանիշ՝ միջազգային կազմակերպության միջազգային իրավասուբյեկտությունը⁴: Վերջին հատկանիշին բավարարելու տեսանկյունից հատկապես հետաքրքրական է Եվրոպական միության միջազգային իրավասուբյեկտության առկայության հարցը, որի ուսումնասիրմանն էլ նվիրված է սույն հոդվածը: Սակայն նախքան հոդվածի խնդրո առարկա թեմայի հետազոտությանն անցնելը ճշգրտենք նրանում օգտագործվող «Եվրոպական միության միջազգային իրավասուբյեկտություն» բառակապակցության հասկացությունը:

Ինչպես հայտնի է, Եվրոպական միության կառուցվածքը դյուրըմբռնելի դարձնելու համար այն համեմատում են հռոմեական տաճարի հետ և այն ներկայացնում են ռասյուն կառուցվածքի տեսքով: Առաջին հենասյունը կազմում են Եվրոպական ընկերակցությունները (Եվրոպական ընկերակցությունը⁵ և Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցությունը)⁶, որոնք ինքնուրույն ինտեգրացիոն կազմավորումներ են և ստեղծման առաջին իսկ օրվանից օժտված են եղել իրավասուբյեկտությամբ: Այդ մասին են վկայում այդ ինտեգրացիոն կազմավորումների հիմնադիր պայմանագրերում նրանց իրավասուբյեկտության փաստն ամրագրող համապատասխան դրույթների առկայությունը: Եվրոպական ընկերակցությունները որակական այս հատկանիշը չեն կորցրել նաև այսօր, ինչի

մասին են վկայում Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 281-րդ հոդվածը և Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 184-րդ հոդվածը: Բացի դրանից՝ պրակտիկայում հայտնի են նաև Եվրոպական ընկերակցությունների կողմից իրավասուբյեկտության իրացման բազմաթիվ դեպքեր (օրինակ՝ 1995թ. Հայաստանի Հանրապետության հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի կնքումը):

Երկրորդ և երրորդ հենասյունները համապատասխանաբար հանդիսանում են Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում անդամ պետությունների համագործակցության և Քրեաիրավական ոլորտում ոստիկանության ու դատական մարմինների համագործակցության հենասյունները: Այս հենասյունների ամբողջությունն էլ կազմում է Եվրոպական միությունը և վերջինիս միջազգային իրավասուբյեկտության հարցը սույն հոդվածում դիտարկելիս նկատի ունենք հենց այդ հենասյունների շրջանակներում Եվրոպական միության կողմից միջազգային իրավասուբյեկտության իրացման հայտնի և թույլատրելի ձևերով հանդես գալու հնարավորությունը: Սակայն նախքան այս հարցի ուսումնասիրությանն անցնելը, ելնելով Եվրոպական միության իրավասության ոլորտների երկփեղկվածությունից, առանձնացնենք նրա իրավասուբյեկտության երկու դրսևորում՝ ներքին և արտաքին:

Իրավասուբյեկտության ներքին դրսևորումը դա իրավունքի սուբյեկտի՝ տվյալ դեպքում Եվրոպական միության կողմից ներքին իրավասության ոլորտում իրավահարաբերությունների մեջ մտնելու, դրանից բխող իրավունքներ ու պարտականություններ ստանձնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու ունակությունն է:

Իրավասուբյեկտության արտաքին դրսևորումը իրավունքի սուբյեկտի՝ տվյալ

դեպքում Եվրոպական միության կողմից արտաքին իրավասության ոլորտում իրավահարաբերության կողմ լինելու, այդ իրավահարաբերությունից բխող իրավունքներ և պարտականություններ ստանձնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու ունակությունն է (օրինակ՝ 2003թ. Եվրոպական միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև էքստրադիցիայի և փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրերի կնքումը՝ Եվրոպական միության կողմից իրավասուբյեկտության արտաքին դրսևորման իրացման ձև է): Իրավասուբյեկտության արտաքին դրսևորումը այլ կերպ անվանվում է նաև միջազգային իրավասուբյեկտություն: Հենց այս դրսևորման վրա էլ կենտրոնանալու է հետագա ամբողջ հետազոտությունը: Ընդ որում, խոսելով Եվրոպական միության միջազգային իրավասուբյեկտության մասին՝ հնարավոր չէ ձեռնպահ մնալ նաև Եվրոպական միության իրավասուբյեկտության մասին դատողություններ անելուց, քանի որ դրանք միմյանց չբացառող, այլ մեկը մյուսի գոյությունը մեծապես պայմանավորող կատեգորիաներ են: Մասնավորապես, իրավասուբյեկտության բացակայությունը նշանակում է նաև միջազգային իրավասուբյեկտության բացակայություն, քանի որ այն առաջինի՝ որոշակի ուղղվածությամբ դրսևորում է: Այսինքն, պատասխանելով այն հարցին, թե արդյոք Եվրոպական միությունը օժտված է միջազգային իրավասուբյեկտությամբ՝ մենք միաժամանակ պատասխանում ենք նրա՝ ընհանրապես իրավասուբյեկտությամբ օժտված լինելու հարցին:

Եվրոպական միության իրավասուբյեկտության հարցն ընդհանրապես, իսկ նրա միջազգային իրավասուբյեկտության հարցը մասնավորապես ԵՄ իրավունքի՝ լայն քննարկումների առարկա դարձած թեմաներից մեկն է: Այս հարցը առաջ է եկել Եվրոպական միության ստեղծման հետ միաժամանակ (1992թ.)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ անդամ պետություններ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րի կամքի արտահայտման հիմնական միջոց հանդիսացող Եվրոպական միությունը հիմնադրող պայմանագիրը այս կազմավորման իրավասուբյեկտության փաստն ամրագրող որևէ դրույթ չէր պարունակում: Այն ժամանակի ընթացքում տեսական հարցից վերածվել է գործնական նշանակություն ունեցող հիմնախնդրի: Բանն այն է, որ Եվրոպական միությունը ինտեգրացիոն գործընթացների խորացմանը զուգընթաց սկսել է իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք պայմանավորված են բացառապես իրավասուբյեկտության առկայությամբ: Մասնավորապես, 1997թ. Ամստերդամի պայմանագրով Եվրոպական միությունը իրավունք ստացավ երկրորդ և երրորդ հենասյուների շրջանակներում կնքել միջազգային համաձայնագրեր¹⁰: Շատերը չհամաձայնվելով կառարկեն, որ քննարկվող հիմնախնդիրը աստիճանաբար կորցնում է իր գործնական կարևորությունը, քանի որ Լիսաբոնի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, ինչը կհանգեցնի Եվրոպական միության իրավասուբյեկտության հարցի լուծմանը, ինքնին վերջ կորվի նաև Եվրոպական միության իրավասուբյեկտության առկայության կամ բացակայության վերաբերյալ գոյություն ունեցող տարածայնություններին: Բան այն է, որ այդ պայմանագրով ուղղակիորեն ամրագրվում է, որ Եվրոպական միությունը օժտված է իրավասուբյեկտությամբ¹¹: Հաշվի նստելով նշված տեսակետի հետ՝ բայց և այնպես պետք է պնդել, որ գիտական հիմնախնդիրների շուրջ առկա բանավեճերը կորցնում են իրենց արդիականությունը միայն այն դեպքում, երբ դրանցով զբաղվող հետազոտողների մեծամասնության մոտ ձևավորվում է միասնական ընդունելի տեսակետ, ինչը չենք կարող ասել ուսումնասիրվող հիմնախնդրի մասին:

Ավելին, անգամ Լիսաբոնի պայմանագրից հետո, մեր խորին համոզմամբ, չի պա-

կասի հետաքրքրությունը այն հարցի նկատմամբ, թե արդյոք միջազգային կազմակերպությունը կարող է օժտված լինել միջազգային իրավասուբյեկտությամբ նրա հիմնադիր փաստաթղթում իրավասուբյեկտության մասին ուղղակի որևէ բան ամրագրված չլինելու պայմաններում: Ի վերջո որևէ երաշխիքներ չունենք, որ ապագայում չի ստեղծվի մեկ այլ միջազգային կազմակերպություն, որը, իրավասուբյեկտությամբ օժտված չլինելով հանդերձ, կիրականացնի գործառույթներ, որոնք կապված են այդ որակական հատկանիշի առկայության հետ: Տվյալ դեպքում Եվրոպական միությունը կծառայի որպես նմուշօրինակ վերը նշված հիմնախնդրին պատասխանելու համար:

Այս պայմաններում առաջանում է հետևյալ հարցադրման կատարման օբյեկտիվ անհրաժեշտությունը: Արդյո՞ք Եվրոպական միության մոտ միջազգային իրավասուբյեկտության առկայության համար անհրաժեշտ է, որ այն հիմնադրող փաստաթուղթը ուղղակիորեն ամրագրի իրավասուբյեկտության որակական հատկանիշը, թե այն կարելի է բխեցնել այդ փաստաթղթի այլ դրույթներից:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է դիմել միջազգային իրավունքի դոկտրինային, քանի որ Եվրոպական միության իրավունքը, որքան էլ ինքնուրույն իրավական համակարգ լինի, այն որպես միջազգային-իրավական կազմավորում պետք է ենթարկվի միջազգային իրավունքի ընդհանուր կանոններին և տրամաբանությանը:

Միջազգային իրավունքի դոկտրինայում միջազգային կազմակերպությունների միջազգային իրավասուբյեկտության վերաբերյալ գոյություն ունեն երկու հիմնական տեսություններ: Դրանիցից մեկը անվանվում է «Կամային», իսկ մյուսը՝ «Օբյեկտիվ» տեսություն:

«Կամային» տեսության համաձայն՝ միջազգային կազմակերպության մոտ միջազգային իրավասուբյեկտության առկա-

յությունը կախված է նրա հիմնադիրների կամքից, որը արտահայտվում է հիմնադիր փաստաթղթերում: Փաստորեն, Եվրոպական միության միջազգային իրավասուբյեկտության առկայության հարցը այս տեսության լույսի ներքո մեկնաբանելու դեպքում պետք է հավաստենք, որ Եվրոպական միությունը միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված չէ, քանի որ ոչ այն հիմնադրող պայմանագրում, ոչ էլ դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելուն ուղղված ակտերում Եվրոպական միության իրավասուբյեկտության առկայության մասին խոսք չկա¹²: Հենց այս տեսությունն է տարբեր հասարակական, գիտական շրջանակներում մտահոգություններ հարուցել Եվրոպական միության միջազգային իրավասուբյեկտության առկայության կամ բացակայության մասին, և դրա տրամաբանությամբ են առաջնորդվում այն հեղինակները, որոնք նշում են, որ Եվրոպական միությունը իրավասուբյեկտությամբ, առավել ևս դրա արտաքին դրսևորմամբ օժտված չէ¹³:

Որոշ հեղինակներ էլ անդամ պետությունների՝ Եվրոպական միությանը իրավասուբյեկտությամբ օժտելու կամքը փորձում են բխեցնել Եվրոպական ընկերակցություններից, որոնք, ըստ նրանց, Եվրոպական միության բաղկացուցիչ տարր են¹⁴:

«Օբյեկտիվ» տեսության համաձայն՝ միջազգային կազմակերպության միջազգային իրավասուբյեկտության առկայությունը բխում է վերջինիս իսկ գոյության փաստի ուժով, և դրա համար որևէ ձևակառուցում անհրաժեշտ չէ: Այս տեսության տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում անհողողող հաստատականությամբ կարող ենք պնդել Եվրոպական միության միջազգային իրավասուբյեկտության առկայության փաստը¹⁵:

Ինչպես Կլաբբերսը արդարացիորեն նկատում է, վերը բերված երկու տեսություններից և ոչ մեկը չունի բավարար բացատրողական ներուժ, որը թույլ կտա պատասխանել Եվրոպական միության միջազ-

գային իրավասուբյեկտության առկայության կամ բացակայության հարցին¹⁶: Վերջինս հիմք ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ ՄԱԿ) Միջազգային դատարանի *Reparation for Injuries* գործը՝ մշակեց մի նոր տեսություն, որը հայտնի է «*Ենթադրյալ իրավասուբյեկտության*» տեսություն անվանմամբ: Նախքան այդ տեսության էության մասին խոսելը անդրադառնանք վերոնշյալ գործի ուսումնասիրությանը, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի ամբողջական պատկերացում կազմել Կլաբբերսի կողմից առաջ քաշված տեսության մասին: *Reparation for Injuries* գործի կապակցությամբ կայացված որոշումը ներկայումս միջազգային կազմակերպությունների միջազգային իրավասուբյեկտության վերաբերյալ ամենահեղինակավոր որոշումն է: Այս գործը վերաբերում է ՄԱԿ-ի կողմից՝ իր ծառայողին պետության պատճառած վնասը հատուցելուն ուղղված հայցապահանջ բերելու հնարավորությանը: Մասնավորապես, ըստ այդ գործի փաստակազմի՝ 1948թ. սեպտեմբերին հաշտեցման բանակցություններ վարելու համար Երուսաղեմ գործուղված ՄԱԿ-ի ներկայացուցիչը սպանվում է ահաբեկիչների կողմից: Ընդ որում, այդ ժամանակ Երուսաղեմը գտնվում էր Իսրայելի տիրապետության տակ:

ՄԱԿ-ի Գլխավոր անսամբլեան հարցում է ներկայացնում ՄԱԿ-ի Միջազգային դատարանին խնդրելով տալ խորհրդատվական պարզաբանում, թե արդյոք ՄԱԿ-ը կարող է որպես միջազգային կազմակերպություն պատճառած վնասը հատուցելուն ուղղված հայցապահանջ բերել Իսրայելի կառավարության դեմ իր ներկայացուցչի անվտանգությունը չապահովելու մեղադրանքով: Այդ հարցի կապակցությամբ Գլխավոր ասամբլեայի մտահոգությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ բացակայում էր ՄԱԿ-ի իրավասուբյեկտության փաստն ամրագրող որևէ դրույթ, իսկ միջազգային գանգատներ կամ հայցապա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հանջներ բերելը իրենից ներկայացնում է իրավասուբյեկտության իրացման արտաքին դրսևորում: Այլ կերպ ասած՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք ՄԱԿ-ը կարող է պատճառած վնասը հատուցելուն ուղղված հայցապահանջ բերել որևէ պետության դեմ, նշանակում է պատասխանել այն հարցին, թե արդյոք ՄԱԿ-ը օժտված է միջազգային իրավասուբյեկտությամբ:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը, ուսումնասիրելով և վերլուծելով ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթները իրենց ամբողջության մեջ, հանգեց այն եզրակացությանը, որ ՄԱԿ-ը օժտված է այնպիսի իրավունքներով և պարտականություններով, որոնք ենթադրում են իրավասուբյեկտության լայն ծավալի առկայություն՝ ընդհուպ իրավասուբյեկտության տիրապետում նաև միջազգային ասպարեզում¹⁷: Մասնավորապես, նա այդ եզրահանգմանը հանգեց ՄԱԿ-ի առջև դրված նպատակների և նրան տրված գործառնությունների հիման վրա (օրինակ՝ ՄԱԿ-ի և նրա անդամների միջև միջազգային համաձայնագրեր կնքելու գործառնությամբ):

Փաստորեն, ՄԱԿ-ը պաշտպանում էր այն տեսակետը, որ միջազգային կազմակերպության իրավունքների և պարտականությունների ծավալը կախված է հիմնադիր փաստաթղթերով նրա առջև դրված նպատակներից և նրան տրված գործառնություններից: Իր այս ինքնատիպ մոտեցմամբ ՄԱԿ-ի միջազգային արդարադատության դատարանը միջազգային կազմակերպությունների միջազգային իրավասուբյեկտության վերաբերյալ ձևավորեց մի նոր տեսություն, որը հետագայում Կլաբբերսի կողմից անվանվեց *«ենթադրյալ իրավասուբյեկտության տեսություն»*:

Այս տեսության մասին հնչել են բազմաթիվ կողմ և դեմ կարծիքներ: Սակայն մեր խորին համոզմամբ չպետք է ամենևին նսեմացնել այս տեսության նշանակությունը,

քանի որ այն, լինելով ծանրակշիռ դատողություններով փաստարկված, բոլոր արժանիքներն ունի միջազգային կազմակերպությունների միջազգային իրավասուբյեկտության վերաբերյալ հավակնոտ տեսություն համարվելու համար: Այս տեսությունը ներկայումս ունի լայն ճանաչում: Ձուր չէ, որ Պասսիվիրտան ենթադրյալ իրավասուբյեկտության տեսությունը համարում է առավել լայնորեն ընդունված մոտեցումը միջազգային իրավասուբյեկտության առկայության կամ բացակայության հարցը պարզելու համար¹⁸:

Այսպիսով, փորձենք ենթադրյալ իրավասուբյեկտության տեսության տրամաբանության հիմնական կանոնները կիրառել Եվրոպական միության նկատմամբ նրա մոտ ենթադրյալ իրավասուբյեկտության առկայության հարցը պարզելու համար: Այս նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա դարձնել Եվրոպական միության հիմնադիր փաստաթուղթը՝ Եվրոպական միության մասին պայմանագիրը, որով սահմանվում է երկրորդ և երրորդ հենասյունների իրավական ռեժիմը: Մասնավորապես, այդ պայմանագրի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է Եվրոպական միության նպատակներին, մի շարք նպատակների կողքին հիշատակում է միջազգային ասպարեզում Եվրոպական միության կողմից իր անհատականության հաստատման նպատակը¹⁹: Հանուն ճշմարտության պետք է նկատել, որ այսպիսի հավակնոտ նպատակի իրականացմանը հասնելը անհնարին է առանց իրավասուբյեկտության և հատկապես դրա արտաքին դրսևորման տիրապետման, քանի որ միջազգային ասպարեզում անհատականության հաստատման առաջնային ձևերից մեկը միջազգային իրավունքի սուբյեկտների հետ երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի կնքումն է, որը ինքնին պահանջում է միջազգային իրավասուբյեկտության որակական հատկանիշի առկայություն: Եվրոպական միությունը չի կարող միջազգային ասպարեզում իր անհատա-

կանության հաստատման հարցում զգալի հաջողություններ ունենալ միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ սոսկ բանակցություններ վարելով կամ նրանց հետ պարզունակ այլ ձևերով հաղորդակցվելով:

Ավելին, ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում Եվրոպական միության հետապնդած նպատակների ամրագրմանը նվիրված Եվրոպական միության մասին պայմանագրի 11-րդ հոդվածը ոչ պակաս հավակնոտ նպատակներ է հռչակում՝ կապված խաղաղությունը պահպանելու և միջազգային անվտանգությունը ամրապնդելու հետ²⁰: Նշված նպատակը դրված է նաև ՄԱԿ-ի առջև, որն էլ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը հաշվի առավ այս միջազգային կազմակերպության միջազգային իրավասուբյեկտության առկայության հարցը պարզելու համար: Ընդ որում Եվրոպական միության մասին պայմանագրի 11-րդ հոդվածը նշում է, որ Եվրոպական միությունը խաղաղությունը պահպանելու և միջազգային անվտանգությունը ամրապնդելու նպատակը պետք է իրականացնի ՄԱԿ-ի Կանոնադրության, ՅԵԼԻՆԻԿԻ վերջնական ակտին և Փարիզի խարտիայի սկզբունքներին համապատասխան²¹:

Բացի այդ, այն հանգամանքը, որ ներկայումս Եվրոպական միությունը օժտված է երկրորդ և երրորդ հեռասյունների շրջանակներում միջազգային համաձայնագրեր կնքելու իրավասությամբ²², անուղղակիորեն վկայում է այն մասին, որ անդամ պետությունները համաձայնել են Եվրոպական միության մոտ իրավասուբյեկտության առկայությանը: Գործնականում Եվրոպական միությունը բազմիցս օգտվել է իրեն տրված այդ լիազորությունից: Մասնավորապես, 2002թ. հոկտեմբերի 4-ին Եվրոպական միությունը միջազգային համաձայնագիր է կնքել Բոսնիայի և Հերցեգովինայի հետ այդ երկրներ ոստիկանական առաքելություն ուղարկելու մասին: Եվրոպական միությունը միջազգային համաձայնագրեր ունի կնքած նաև Մարրոկոյի,

Չիլիի, Ինդոնեզիայի, Մակեդոնիայի և մի շարք այլ պետությունների հետ:

Թերևս վերը թվարկված պատճառների գիտակցումով է պայմանավորված, որ ինտեգրացիոն գործընթացների տարբեր փուլերում առաջարկներ են հնչել Եվրոպական միությանը օժտել իրավասուբյեկտությամբ և հիմնադիր պայմանագրում ուղղակիորեն ամրագրել այդ որակական հատկանիշը: Մասնավորապես, դեռևս 1996թ. միջկառավարական կոնֆերանսի ժամանակ Եվրոպական խորհրդարանը հանդես է եկել Եվրոպական միությանը իրավասուբյեկտությամբ օժտելու առաջարկությամբ²³:

Այսպիսով, ենթադրյալ իրավասուբյեկտության տեսության հիմնական կանոնները կիրառելով Եվրոպական միության նկատմամբ՝ կարող ենք ասել, որ այն օժտված է իրավասուբյեկտությամբ և հատկապես դրա արտաքին դրսևորմամբ, քանի որ համապատասխանում է նշված տեսության հիմնական մոտեցումներին:

Փաստորեն, միջազգային կազմակերպության միջազգային իրավասուբյեկտության առկայությունը կարող է բխեցվել ոչ միայն դրա հիմնադիր պայմանագրի այն դրույթից, որը ուղղակիորեն ամրագրում է իրավասուբյեկտության որակական հատկանիշը, այլ նաև այդպիսի դրույթի բացակայության դեպքում՝ միջազգային կազմակերպության նպատակներին և գործառույթներին վերաբերող դրույթներից՝ պահպանելով ենթադրյալ իրավասուբյեկտության տեսությանը վերաբերող հիմնական կանոնները: Այլ կերպ ասած՝ միջազգային կազմակերպության միջազգային իրավասուբյեկտությունը կարող է բխեցվել անուղղակիորեն:

Մեկ անգամ ևս, չնսեմացնելով սույն հետազոտության նշանակությունը, հիշենք, որ Եվրոպական միության մոտ իրավասուբյեկտության առկայության կամ բացակայության հարցը կհանգուցալուծվի Լիսաբոնի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, քանի որ այդ պայմանագրով համա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պատասխան իրավական դրույթով ուղղակիորեն նախատեսված է Եվրոպական միության կողմից այդ որակական հատկա-

նիշով օժտված լինելու հանգամանքը²⁴: Սա վերջ կդնի նաև Եվրոպական միության՝ միջազգային իրավասուբյեկտության վերաբերյալ գոյություն ունեցող տարածայնություններին և դրա բխեցման աղբյուրների վերաբերյալ գոյություն ունեցող կարծիքների բազմազանությամբ:

¹ Տե՛ս Վ.Քոչարյան, Միջազգային իրավունք, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2002, էջեր 60-64, P.A.Каламкарян, Ю.И.Мигачев, Международное Право, Москва, Изд. Эксмо, 2-е издание, 2006, էջեր 141-148:

² Տե՛ս article by Dapo Akande, "International Organizations", in International law, editor Malcolm D.Evans, Oxford University Press, second edition, 2006, էջ 277:

³ Տե՛ս Վ.Քոչարյան, նշվ. աշխ., էջ 179:

⁴ Տե՛ս article by Dapo Akande, "International Organizations", in International law, editor Malcolm D.Evans, Oxford University Press, second edition, 2006, էջ 279:

⁵ Մինչև 1992թ. այս ինտեգրացիոն կազմավորումը անվանվում էր Եվրոպական տնտեսական ընկերակցություն, սակայն Եվրոպական միության կամ Մասստրիխտի մասին պայմանագրից հետո այն վերանվանվեց Եվրոպական ընկերակցություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ անդամ պետությունների համագործակցությունը վաղուց դուրս էր եկել զուտ տնտեսական ոլորտից և ընդգրկում էր այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են սոցիալականը, կրթականը, մշակութայինը և այլն:

⁶ Մինչև 2002թ. գոյություն ուներ ևս մեկ ինտեգրացիոն կազմավորում, որը հայտնի էր Աժխի և պողպատի Եվրոպական ընկերակցություն անվանմամբ, սակայն 2002թ. հուլիսի 23-ին այն դադարեցրեց իր գործունեությունը, քանի որ նրա հիմնադիր պայմանագիրը կնքվել էր 50 տարի ժամկետով: Այս ինտեգրացիոն կազմավորման շրջանակներում առկա իրավասությունները փոխանցվեցին Եվրոպական ընկերակցությանը:

⁷ Տե՛ս article 281 of the Consolidated version of the Treaty establishing the European Community, [2002] OJ C 325/33 and article 184 of the Treaty establishing the European Atomic

Energy Community:

⁸ OJ L 181/25 of 19 July 2003:

⁹ Տե՛ս Philippe de Schoutheete and Sami Andoura, "The Legal Personality of the European Union", in Studia Diplomatica, Vol. LX: 2007, n 1, Egmont European Affairs Publication, 2007, Philippe Gautier, "The Reparation for Injuries Case Revisited: The Personality of the European Union", J.A. Frowein and R.Wolfrum (eds.), Max Planck Yearbook of United Nations Law, Kluwer Law International, 2000, էջեր 331-361, Jan Klabbers, "Presumptive Personality: The European Union in International Law", in M.Koskenniemi (ed.), International Law Aspects of the European Union, Hague, Kluwer Law International, էջեր 231-253:

¹⁰ Տե՛ս article J.14 of Treaty of Amsterdam amending the Treaty on European Union, the Treaties establishing the European Communities and related acts, OJ C 340, 10.11.1997:

¹¹ Տե՛ս article 47 of the Consolidated version of the Treaty on European Union (Lesbon Treaty), [2008] OJ C 115/1:

¹² Տե՛ս Piet Eeckout, External Relations of the European Union: Legal and Constitutional Foundations, New York, Oxford University Press, 2004, էջ 156:

¹³ Տե՛ս P.J.G Kapteyn and P. Verloren van Themaat, *Inleiding tot het Recht van de Europese Gemeenschappen na Maastricht*, Kluwer, Deventer, 1995, e.g., p.756 ինչպես վկայակոչված է Jan Klabbers, "Presumptive Personality: The European Union in International Law", in M.Koskenniemi (ed.), International Law Aspects of the European Union, Hague, Kluwer Law International, 1999, էջ 231:

-
- ¹⁴ St'u A.Von Bogdandy and M.Nettesheim, "Die erschmelzung der Europ'ischen Gemeinschaften in der Europ'ischen Union ", (1995) *Neue Juristische Wochenschrift*, 2324-2328, ինչպես վկայակոչված է Jan Klabbers, "Presumptive Personality: The European Union in International Law", in M.Koskenniemi (ed.), *International Law Aspects of the European Union*, Hague, Kluwer Law International, 1999, էջ 231:
- ¹⁵ St'u հղում 12:
- ¹⁶ St'u Jan Klabbers, "Presumptive Personality: The European Union in International Law", in M.Koskenniemi (ed.), *International Law Aspects of the European Union*, Hague, Kluwer Law International, 1999, էջ 233:
- ¹⁷ St'u advisory opinion of 11 April 1949 of ICJ on *Reparation for Injuries Suffered in the Service of the United Nations* - General List No. 4:
- ¹⁸ St'u E.Paasivirta, "The European Union: From an Aggregate of States to a Legal Person? " (1997) 2 *The Hofstra Law & Policy Symposium* 43-4, ինչպես վկայակոչված է Piet Eeckout, *External Relations of the European Union: Legal and Constitutional Foundations*, New York, Oxford University Press, 2004, էջ 157-ում:
- ¹⁹ St'u article 2 of the Consolidated version of the Treaty on European Union {2002} OJ C 325/5:
- ²⁰ St'u article 11 (1) of the Consolidated version of the Treaty on European Union {2002} OJ C 325/5:
- ²¹ St'u հղում 20:
- ²² St'u articles 24 and 38 of the Consolidated version of the Treaty on European Union {2002} OJ C 325/5:
- ²³ St'u European Parliament's Report to the 1996 IGC, pr. 14 (ii):
- ²⁴ St'u article 47 of the Consolidated version of the Treaty on European Union (Lesbon Treaty), [2008] OJ C 115/1:
-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

ԿՈՆՑԵՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Սոնա ԹԵՎԱՆՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

Քաղաքակրթության ժամանակակից դինամիկ զարգացման պայմաններում առանձին երկրների միջև գոյություն ունեցող կապերն ավելի են սերտանում, և ի հայտ են գալիս համագործակցության նորանոր ասպարեզներ: Թեև երկրների միջև տնտեսական ոլորտների փոխազդեցությունը նոր չէ և դարեր ի վեր եղել է պետությունների համագործակցության առավել տարածված ձևը, առաջընթաց զարգացումները թելադրում են նորագույն և արդյունավետ համագործակցության ուղիների մշակման անհրաժեշտությունը:

Այդ ուղիներից մեկն էլ օտարերկրյա ներդրումների իրականացումն է, որը կիրառելի է ինչպես զարգացած պետությունների միջև հարաբերություններում, այնպես էլ զարգացող պետությունների տնտեսությանն աջակցելու նպատակով: Ներդրումների իրականացման եղանակները տարբեր են՝ ուղղակի, պորտֆելային, ինչպես նաև պայմանագրային՝ ներառյալ կոնցեսիոն պայմանագրերի կնքմամբ կատարվող, թեև պետք է ընդգծել, որ կոնցեսիան, լինելով պետական և մասնավոր ոլորտների համագործակցության ժամանակակից առավել նախապատվելի ձևերից մեկը, նորույթ չէ և կիրառվում է պետական ոլորտում ոչ միայն արտաքին, այլև ներքին ներդրումներ ներգրավելու նպատակով: Այդուհանդերձ, զարգացող երկրներից շատերը կոնցեսիոն հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացնում են այն՝ օտարերկրյա ներդրողների համար որպես ինստիտուտ գրավիչ ու ապահով դարձնելու կարևորագույն խնդիրը նկատի ունենալով: Հաշվի առնելով կոնցեսիոն

կառուցակարգի նշանակությունը ենթակառույցների և ընդհանրապես՝ տնտեսության զարգացման հարցում՝ երկրներից շատերը հակված են ապահովելու մասնավոր ոլորտի գործառնումը՝ նոր օրենսդրության մշակմամբ և համապատասխան ֆինանսական միջոցների ներգրավմամբ¹:

Կոնցեսիոն հարաբերությունների նկատմամբ ՀՀ օրենսդրությունը գործնականում իրականացնում է ոչ ամբողջական և ոչ լիարժեք կարգավորում: Կոնցեսիայի վերաբերյալ դրույթներ առկա են ՀՀ ջրային օրենսգրքում², «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին», «Օտարերկրյա ներդրումների մասին», «Օտարերկրյա ներդրումների մատչելի» ՀՀ օրենքներում³ և մի քանի ենթաօրենսդրական ակտերում: Ակնհայտ է, որ ՀՀ-ում կոնցեսիոն հարաբերությունների օրենսդրական կարգավորումն ըստ էության բացակայում է, քանի որ չկա այդ ոլորտը կարգավորող միասնական իրավական ակտ, որից կարող են բխել հարակից ակտերի կարգավորման ուղղությունները և հիմնական սկզբունքները: Այս իրավիճակը, սակայն, չի խոչընդոտել ՀՀ-ում կոնցեսիոն հարաբերությունների ծավալումն և դրանց պայմանագրային կարգավորման գործընթացը: Այդ է վկայում, օրինակ, ՀՀ Կառավարության 2008թ. փետրվարի 7-ի «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին» N 83-Ա որոշումը, որը հիմք է հանդիսացել կոնցեսիոն պայմանագրի կնքման համար:

Գնահատելով ստեղծված իրավիճակը՝ կարող ենք միանշանակ պնդել, որ կոնցեսիոն հարաբերությունների զարգացման և գործնական կիրառության աստիճանը հրատապ է դարձնում դրա իրավական կարգավորման և տեսական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Իհարկե, կոնցեսիոն պայմանագրի օրենսդրական կարգավորման բացակայությունը արգելք չէ նման պայմանագրերի կնքման համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված՝ պայմանագրի ազատության սկզբունքը ենթադրում է ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագրերի կնքման հնարավորություն (ՀՀ քաղ.օր. 437 հոդված, մաս 3), սակայն սույն պայմանագրերի կիրառման ոլորտի առանձնահատկությունները և պետության տնտեսության համար ունեցած նշանակությունը պահանջում են պատշաճ իրավական կարգավորվածություն՝ ապահովել գիտական և գործնական առումներով հիմնավորված իրավաստեղծում, ինչպես նաև նախատեսել առաջադրված հիմնախնդիրների և կոլիզիաների լուծման կառուցակարգեր:

Իսկ ի՞նչ է կոնցեսիան, և ինչու՞ է այդչափ կարևորվում այդ ոլորտի լիարժեք կարգավորումը:

Կոնցեսիան՝ որպես հարաբերությունների համակարգ, իր կիրառությունն է գտել պատմական ամենավաղ ժամանակներից: Դեռևս Հռոմեական կայսրությունում՝ մունիցիպալներում (լատ. municipium), որոնք համարժեք են ներկայիս համայնքներին, գոյություն ունեին փոստային կայանները, նավահանգիստները, շուկաները, բաղնիքները և այլ կարևոր ենթակառուցվածքային մասնավոր անձանց կառավարմանը հանձնելու որոշակի փորձ⁴: Միջնադարում արդեն կոնցեսիոն հարաբերությունները տարածում էին գտել ոչ միայն Եվրոպայում, այլև Հարավային Ամերիկայում, իսկ ավելի ուշ՝ նաև Ռուսաստանում: 17-18-րդ դարերում Ֆրանսիայում կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա կառուցվում էին ճանապարհներ, կամուրջներ, ինչպես նաև գործառնում էին կոմունալ ծառայությունները, 19-

րդ դարում Արգենտինայում կոնցեսիոն պայմանագրերը կիրառում էին արդեն հիդրոէլեկտրակայանների և այլ հիդրոտեխնիկական մեխանիզմների շահագործման համար, Մեքսիկայում կոնցեսիոն պայմանագրերը տարածված էին ավիափոխադրումների, իսկ Եգիպտոսում՝ միջազգային օդանավակայանների և ընդերքի օգտագործման ոլորտներում: Խորհրդային Ռուսաստանում ՆԵՊ-ի տարիներին ևս լայն տարածում էին գտել կոնցեսիոն պայմանագրերը, և նույնիսկ ժողովրդի սարքավորումների կից ձևավորվել էր հատուկ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր օտարերկրյա կապիտալի գործունեության համար համապատասխան պայմանների մշակմամբ: Կոնցեսիայի՝ որպես միջազգային մասնավոր իրավունքի կարգավորման շրջանակներում ընդգրկվող հարաբերությունների վերաբերյալ դրույթներ են առկա նաև Բուստամանտեի⁵ միջազգային օրենսգրքում, որը հայտնի է նաև Հավայան կոնվենցիա անվանումով: Այս փաստաթղթի առաջին գրքի միջազգային քաղաքացիական իրավունք բաժնում գույքի դասակարգման և կիրառման ենթակա օրենսդրության մասին խոսելիս նշվում է, որ կոնցեսիաները դիտարկվում են որպես այն վայրում գտնվող, որտեղ դրանք օրինական կերպով ստացվել են⁶:

Կոնցեսիայի պայմանագիրը՝ որպես պետության և մասնավորի համագործակցության արդյունավետ կառուցակարգ, ներկայումս լայն տարածում ունի ոչ միայն Եվրոպայի մի շարք երկրներում, ինչպիսիք են, օրինակ՝ Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Հունգարիան⁷, այլև նախկին ԽՍՀՄ մի շարք երկրներում՝ Ուկրաինայում, Վրաստանում, Ղազախստանում, Դրոգոստանում, Ուզբեկստանում, Մոլդովայում, Լատվիայում, 2005 թվականից ի վեր՝ նաև Ռուսաստանի Դաշնությունում:

«Կոնցեսիա» հասկացությունը ծագում է լատիներեն «concession» բառից, որը թարգմանաբար նշանակում է թույլտվություն⁸: Կոնցեսիայի էությունը պետության առանձնաշնորհը հանդիսացող գործունեության ոլորտներ մասնավոր անձանց

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

մուտք գործելու հնարավորության տրամադրումն է: Կոնցեսիոն իրավահարաբերությունները ծագում են տնտեսական գործակալների միջև⁹, ուստի այս հարաբերություններում սերտորեն միահյուսված են իրավական և տնտեսագիտական ասպեկտները: Տնտեսագիտական տեսանկյունից կոնցեսիան դիտարկվում է որպես ներդրումներ ներգրավելու ձևերից մեկը¹⁰: Այն որպես գործիք պետք է խթանի պետության կողմից մասնավոր ոլորտի ներդրումային հնարավորությունների առավել ակտիվ օգտագործումը հատկապես ֆինանսական և տնտեսական ճգնաժամի պայմաններում¹¹:

Կոնցեսիայի մասին խոսելիս հարկ է նշել, որ որպես նույնամշանակ հասկացություններ օգտագործում են կոնցեսիա և կոնցեսիոն համաձայնագիր (պայմանագիր) եզրույթները: Իրականում, սակայն, դրանք հոմանիշներ չեն. կոնցեսիան իր բովանդակությամբ ավելի լայն հասկացություն է, քան կոնցեսիոն համաձայնությունը: Վերջինս կոնցեսիոնի և կոնցեսիոնների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները սահմանելուն ուղղված մասնավոր իրավական փոխազդեցության ձևակերպման ուղղակի եղանակ է և համարվում է այն հարաբերությունների համակարգի տարրերից մեկը, որոնք իրենց ամբողջության մեջ սահմանում են կոնցեսիայի բովանդակությունը:

Կոնցեսիան որպես հարաբերությունների համակարգ, ներառում է.

1. հարաբերություններ, որոնք կապված են պետական (համայնքային) գույքը փոխանցելու մասին որոշմամբ արտացոլված պետության կամահայտնության հետ,
2. կազմակերպչական հարաբերություններ, որոնք ուղղված են կոնցեսիոն գործունեության կանոնակարգմանը,
3. հարաբերություններ, որոնք կապված են կոնցեսիոն համաձայնագիր կնքելու նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման հետ,

4. հարաբերություններ, որոնք առնչվում են հարակից պայմանագրերի կնքման հետ, եթե նման պայմանագրերի կնքման անհրաժեշտությունը ծագում է հիմնական կոնցեսիոն պայմանագրի կատարման ընթացքում:

Այսպիսով կոնցեսիոն համաձայնագիրը կոնցեսիոն հարաբերությունների բարդ համակարգի բաղկացուցիչ տարրն է և այդ հարաբերությունների ձևավորման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանը:

Կոնցեսիոն համաձայնագրի մասին խոսելիս անհրաժեշտ է ընդգծել, որ իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի բանավեճ «կոնցեսիա» եզրույթի կիրառման և ձևերի վերաբերյալ: Որոշ հեղինակներ (օրինակ՝ Մ. Սուբոտինը) կարծում են, որ պետության և մասնավոր ոլորտի համագործակցության ընթացքում ծագող հարաբերությունների նկատմամբ կոնցեսիա եզրույթի կիրառումն արդարացված չէ, քանի որ շատ երկրների օրենսդրություններն արդեն իսկ պարունակում են դրույթներ առևտրային կոնցեսիայի կամ, այլ կերպ ասած, ֆրանչայզինգի վերաբերյալ, ուստի կարող է ի հայտ գալ որոշակի տերմինային խառնաշփոթ: Դրանից խուսափելու նպատակով նրանք առաջարկում են «կոնցեսիոն համաձայնագիր» ձևակերպման փոխարեն օգտագործել «պետության և ոչ պետական ներդրողների միջև կնքվող պայմանագիր» կամ «ներդրումային պայմանագիր» հասկացությունները¹²:

Որոշ գիտականներ էլ (օրինակ՝ Յու.Յա.Վելիկովիսլովը) պնդում են, որ անհրաժեշտ է տարանջատել կոնցեսիան՝ որպես քաղաքացիաիրավական կատեգորիա, և կոնցեսիան՝ որպես ներդրումային գործունեության ձև: Ըստ նրա՝ քաղաքացիաիրավական տեսանկյունից կոնցեսիան մեզ հայտնի ֆրանչայզինգն է, այսինքն՝ երկու մասնավոր սուբյեկտների միջև կնքվող պայմանագիրը, իսկ ներդրումային գործունեության տեսանկյունից՝ պետության և մասնավոր սուբյեկտի միջև կնքվող պայմանագիրը՝ ուղղված պետության տնտեսության մեջ ներդրումների ներգ-

րավմանը¹³: Մեր կարծիքով, վերոնշյալ տեսակետներն այնքան էլ հիմնավոր չեն, և գործնականում պետական-մասնավոր համագործակցությունը միջնորդավորող պայմանագրերը բնորոշելու համար նոր եզրույթներ ներմուծելու անհրաժեշտություն չկա: Կոնցեսիոն պայմանագիրը, մեր կողմից քննարկվող դիտարկյունից, հայտնի է եղել դեռևս հռոմեական իրավունքին: Առևտրային կոնցեսիան իր բնույթով շատ հեռու է դասական ընկալմամբ հայտնի կոնցեսիայից, քանի որ ֆրանչայզինգի հարաբերություններում կողմերը բացառապես մասնավոր սուբյեկտներ են, այն դեպքում, երբ դասական կոնցեսիայի բնութագրիչ հատկանիշներից մեկը հենց պետության մասնակցությունն է նշված հարաբերություններին: Ֆրանչայզինգի պայմանագրի կոնցեսիոն բնույթի ընդգծումը թերևս պայմանավորված է ձևավորվող հարաբերությունների բնույթով, որտեղ առանցքային է իրավատեր կողմի՝ (concessio) իրեն պատկանող մտավոր սեփականության արդյունքները օգտագործելու թույլտվությունը: Մինչդեռ ֆրանչայզինգի պայմանագիրը չի կարող դիտարկվել նույնիսկ որպես կոնցեսիայի պայմանագրի տարատեսակ այն պատճառով, որ կոնցեսիոն պայմանագրի սուբյեկտային կազմում պետության մասնակցությունը համարվում է պարտադիր հատկանիշ, իսկ ֆրանչայզինգի պայմանագրի կողմեր կարող են լինել ինչպես առևտրային կազմակերպությունները, այնպես էլ անհատ ձեռնարկատեր քաղաքացիները (ՀՀ քաղ. օր. հոդվ. 969, մաս 2): Ֆրանչայզինգի պայմանագրի առանցքային և բնութագրիչ գիծ է իրավատեր կողմի թույլտվությունը մյուս կողմին՝ իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող քաղաքիկ իրավունքների համալիրը այնպես, ինչպես պետությունն է իրավունք տալիս կոնցեսիոններին օգտագործելու քաղաքիկ սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտները, այսինքն՝ նշված պայմանագրերը տարբերվում են ոչ միայն սուբյեկտային կազմով, այլև պայմանագրի օբյեկտով¹⁴: Ակնհայտ է,

որ ֆրանչայզինգը, այլ կերպ ասած՝ «առևտրային կոնցեսիան», և դասական կոնցեսիան ընդամենը հեռավոր նմանություն ունեն:

Ինչ վերաբերում է գիտնականների կողմից քննարկվող հնարավոր տերմինաբանական խառնաշփոթին, ապա դրանից խուսափելու համար նպատակահարմար ենք համարում բացառիկ իրավունքների օգտագործման թույլտվության կապակցությամբ ծագող հարաբերությունների համար կիրառել միջազգային առավել լայն ճանաչում ունեցող *ֆրանչայզինգ* եզրույթը, իսկ *կոնցեսիա*՝ միայն այն պայմանագրերի առնչությամբ, որոնց առարկան պատմականորեն հանդիսացել է կոնցեսիոն հարաբերությունների հիմքը¹⁵:

Հարկ է նկատել, որ կոնցեսիան իր պատմական ակունքներում ընդհանրապես պայմանագրային ձև չի ունեցել. այն եղել է ֆեոդալ միապետի կողմից իր հպատակին որոշակի գործողություններ կատարելու իրավունքի նվիրաբերման ակտ, որը ֆեոդալի բացառիկ մենաշնորհն էր¹⁶: Տնտեսական զարգացմանը զուգընթաց ոչ պայմանագրային (միակողմանի) կոնցեսիային փոխարինելու եկավ ժամանակակից զուտ պայմանագրային կոնցեսիան¹⁷, թեև «կոնցեսիա տրամադրել», «կոնցեսիոն թույլտվություն» և նման մի շարք այլ արտահայտություններ տակավին շարունակում են լայնորեն շրջանառվել: Թերևս այս տեսագործնական երկակիությունն էլ հանգեցնում է կոնցեսիոն պայմանագրի իրավական էության մասին գիտական բանավեճերի:

Նախ և առաջ պետք է նշել, որ կոնցեսիայի մասին (մեղ իմաստով) խոսելիս իրավաբանական գրականության մեջ նկատվում է հասկացությունների խայտաբղետություն. որոշ հեղինակներ օգտագործում են կոնցեսիոն համաձայնագիր, մյուսները՝ կոնցեսիոն պայմանագիր եզրույթները: Թեև օրենսդրությունը համաձայնագիր և պայմանագիր իրավական կատեգորիաները միմյանցից չի տարանջատում, այնուամենայնիվ *համաձայնագիր* եզրույթը ՀՀ քաղ. օրենսգրքում չի կիրառ-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

վում, ուստի գտնում ենք, որ նեղ իմաստով կոնցեսիայի մասին խոսելիս կիրառելի է բացառապես **կոնցեսիոն պայմանագիր** հասկացությունը:

Բացի այդ, կոնցեսիայի պայմանագրի իրավական էությունը դոկտրինալ աղբյուրներում արտացոլվում է ամենատարբեր տեսություններում, ընդ որում՝ այդ մոտեցումները տարբերվում են ոչ միայն կոնցեսիայի պայմանագրի բնորոշումներով, որոնք, կոնցեսիոն գործունեության բազմակողմանիությամբ պայմանավորված, արտացոլում են դրա այս կամ այն կողմը, այլև տարբեր երկրներում կոնցեսիոն օրենսդրության առանձնահատկություններով և տնտեսության մեջ դրա ունեցած դերով ու նշանակությամբ: Ներկայումս գոյություն ունեն կոնցեսիայի առավել տարածված երկու տեսություններ՝ վարչաիրավական (օրինակ՝ Ֆրանսիայում) և պայմանագրային, որն առավել հայտնի է ագլո-սաքսոնական իրավունքում: Հենց այս պատճառով էլ գոյություն ունեն կոնցեսիայի և կոնցեսիոն պայմանագրի ամենատարբեր սահմանումներ, որոնք զուրկ են ինչպես տերմինաբանական, այնպես էլ բովանդակային հստակությունից¹⁸: Ըստ վերոնշյալ տեսությունների՝ տարբեր երկրներում կոնցեսիան ձևակերպվում է տարաբնույթ պայմանագրային ձևերով. մի դեպքում՝ դրանք հանրային-իրավական բնույթի պայմանագրերն են, մյուս դեպքում՝ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրերը¹⁹:

Մի շարք տեսաբաններ կոնցեսիայի պայմանագիրը դասում են վարչական պայմանագրերի թվին և համարում են, որ դա համապատասխանում է դասական միտումներին²⁰: Ներկայումս որոշ արտասահմանյան երկրներում այս տեսությամբ համահունչ մշակվել և լայնորեն կիրառվում է հանրային իրավական (վարչական) պայմանագրի ինստիտուտը, որում այս կամ այն չափով միավորված են «հորիզոնական» և «ուղղահայաց» հարաբերությունների տարրերը:

Այլ երկրներում, օրինակ՝ ՌԴ-ում, կոնցեսիոն պայմանագիրն առավելապես դասվում է քաղաքացիաիրավական պայմանագրերի թվին՝ նկատի առնելով այն, որ կոնցեսիոն պայմանագրի մեջ հանրային-իրավական և մասնավոր իրավական տարրերի համակցության մեջ առավել առանցքային և բնութագրիչ նշանակություն ունեն մասնավոր իրավական (քաղաքացիաիրավական) տարրերը: Այս միահյուսվածությունն էլ որոշ իրավագետների հիմք է տալիս կոնցեսիայի պայմանագիրը դասելու խառը պայմանագրերի թվին²¹: Մեր կարծիքով՝ այս մոտեցումը չի համապատասխանում խառը պայմանագրերի գաղափարին: Ավանդաբար խառն է համարվում այն պայմանագիրը, որը չունի սեփական իրավական կարգավորում, հետևաբար՝ բացակայում է նաև դրա իրավական բնորոշումը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կոնցեսիայի պայմանագիրը չի կարող դասվել խառը պայմանագրերի թվին, քանի որ այն երկրներում, ուր նշված պայմանագիրը լայն կիրառություն ունի, առկա են և՛ համապատասխան իրավական կարգավորումները՝ հանձին անհրաժեշտ օրենքների ու ենթօրենսդրական ակտերի, և՛ պայմանագրի իրավական բնորոշումը: Ուստի արդարացված է կոնցեսիայի պայմանագիրը խառը պայմանագիր համարելու մոտեցումը:

Կոնցեսիայի պայմանագիրը վարչական պայմանագրերի թվին դասելուն կողմնակից հեղինակները, մասնավորապես է.Տալապինան²², գտնում են, որ ՌԴ-ում կոնցեսիոն պայմանագիրը վարչականների թվին չի դասվում զուտ այն պատճառով, որ այնտեղ մշակված է վարչական պայմանագրերի տեսությունը: Ինչ վերաբերում է քաղաքացիաիրավական կարգավորմանը, ապա, ըստ նրա, դրանում միավորվել են բոլոր այն հարաբերությունների նորմատիվ կարգավորումները, որոնցում որևէ չափով նկատվում է գույքային տարրի առկայություն՝ ուշադրություն չդարձնելով այդ հարաբերություններին մասնակից այն անձանց իրավական ստատուսին, որոնք միանշանակ հանրային իրավունքի սուբ-

յեկտներ են: Այդ պատճառով էլ, ըստ հեղինակի, ՌԴ-ում այդքան տարածված է հանրային սուբյեկտների մասնակցությամբ գույքային հարաբերությունների քաղաքացիաիրավական սուբսիդիար կարգավորումը: Այլ կերպ ասած՝ կոնցեսիոն պայմանագրի նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով կիրառման ենթակա այլ իրավունք (իրավական կարգավորում) գոյություն չունի: Մեզ համար այս մոտեցումն ընդունելի չէ, քանի որ պետությունը, որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, կարող է ազատորեն մասնակցել քաղաքացիական շրջանառությանը՝ ըստ ՀՀ քաղ. օրենսգրքի 128-րդ հոդվածի²³: Թեև պետք է նկատի ունենալ, որ մի շարք գիտնականներ հանրային իրավունքի սուբյեկտների նկատմամբ քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավահավասարության մասին դրույթների կիրառումը բավականին բարդ խնդիր են համարում²⁴: Այդուհանդերձ կարծում ենք, որ պետության առանձնահատուկ իրավասուբյեկտությունը, որում միավորված են ինչպես իշխանական առանձնաշնորհները, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտի հատկանիշները, չպետք է փոփոխի քաղաքացիական իրավունքով կարգավորվող այն իրավահարաբերությունների բնույթը, որոնց մասնակցում է պետությունը՝ դրանք վերածելով խառը հարաբերությունների՝ իշխանության և ենթակայության աստիճանակարգային տարրերով, այլապես վերանում է «շուկան», և խարխլվում են դրա քաղաքացիաիրավական հիմքերը²⁵: Սա նշանակում է, որ կոնցեսիոն պայմանագրերի դասակարգումը քաղաքացիաիրավականի և վարչաիրավականի զուտ պետության մասնակցության հանգամանքով պայմանավորելն արդարացված չէ: Այլ խնդիր է, որ մինչև կոնցեսիոն պայմանագրի կնքումը պետությունն իրականացնում է որոշակի գործողություններ, որոնք իրենց բնույթով բացառապես վարչաիրավական են և բխում են պետության՝ որպես սուվերեն իշխանության կրողի իրավասություններից և որոշ հեղինակների համար կարող են կոն-

ցեսիոն պայմանագիրը որպես վարչաիրավական կամ միջճյուղային պայմանագիր դիտարկելու հիմք հանդիսանալ, քանի որ կոնցեսիոն պայմանագիրը «ենթադրաբար» պարունակում է թե՛ հանրային իրավունքի և թե՛ մասնավոր իրավունքի տարրեր՝ վերջիններիս գերակայությամբ: Մեր կարծիքով՝ խնդրի այսօրինակ լուծումը չի համապատասխանում առկա իրավական կարգավորումներին. այսպես՝ *կոնցեսիա* և *կոնցեսիոն պայմանագիր* հասկացությունների հարաբերակցության հարցը քննարկելիս նշել ենք, որ կոնցեսիոն պայմանագիրն իր բնույթով ավելի նեղ կատեգորիա է, քան կոնցեսիան. այն, ըստ էության, հարաբերությունների համակարգ է, ուր ներառված են ինչպես վարչաիրավական, այնպես էլ քաղաքացիաիրավական բնույթի հարաբերություններ, և հենց այստեղ է, որ կարելի է խոսել հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի միաժամանակյա կիրառման հնարավորության մասին, քանի որ կոնցեսիոն պայմանագրի կնքմանը նախորդում են «մաքուր» վարչաիրավական բնույթի իրավաբանական փաստեր, ինչպիսիք են պետական գույքը կոնցեսիոն պայմանագրով մասնավոր կազմակերպությանը հանձնելու մասին իրավասու մարմնի որոշումը, պետության՝ կոնցեսիոն գործունեության կարգավորմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, կոնցեսիոնների ընտրության համար մրցույթի կազմակերպումը և համանման այլ գործողություններ: Այսինքն՝ պետության վարչաիրավական բնույթի գործառնություններն իրականացվում են մինչև կոնցեսիոն պայմանագրի կնքումը և սահմանափակվում են մասնավոր սուբյեկտին պետության մենաշնորհը հանդիսացող օբյեկտի նկատմամբ կամ գործունեության ոլորտում տնտեսավարմամբ զբաղվելու բացառիկ իրավունք տրամադրելու համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորմամբ²⁶: Ինչ վերաբերում է կոնցեսիոն պայմանագրին, ապա դա կնքվում է վերոնշյալ վարչաիրավական ակտերի հիման վրա, սակայն կրում է բացառապես քաղաքացիաիրավական բնույթ: Ըստ էության կոնցեսիոն իրա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

վահարաբերություններում պետությունը հանդես է գալիս երկու տարբեր մակարդակներում՝ օգտվելով իր իրավասուբյեկտության բովանդակությունը կազմող իրավունքների առանձին խմբերից. 1-ին մակարդակում այն հանդիսանում է հանրային իրավունքի սուբյեկտ և հիմք է ստեղծում 2-րդ մակարդակի ձևավորման համար, իսկ 2-րդ մակարդակում, արդեն պահպանելով հանրային իրավունքի սուբյեկտի մի շարք հատկանիշները, հանդես է գալիս որպես մասնավոր/քաղաքացիական իրավունքի սուբյեկտ:

Կան նաև գիտնականներ, ինչպես օրինակ՝ Ի.Ն.Բերշտեյնը, ովքեր կոնցեսիան դիտարկում են որպես թույլտվության ինստիտուտի բարդացված տարատեսակ, որը, պայմանավորված տրամադրվող իրավունքների ծավալով ու բնույթով, տրվում է որոշակի աստիճանակարգության վրա գտնվող պետական մարմնի կողմից: Այս իրավական կառուցակարգին ներկայումս առավել մոտ է լիցենզավորման ինստիտուտը, որի էությունը, սակայն, չի նույնանում կոնցեսիայի հետ: Այսպիսով՝ պետության սեփականությունը կոնցեսիոն հիմունքներով մասնավոր սուբյեկտին փոխանցելու մասին վարչական ակտը առաջացնում է երկակի բնույթի իրավական հետևանքներ. մի կողմից վարչաիրավական, իսկ մյուս կողմից՝ քաղաքացիաիրավական²⁷:

Կոնցեսիոն պայմանագրի զուտ քաղաքացիաիրավական բնույթը հիմնավորվում է հետևյալ հատկանիշների առկայությամբ.

1. տրամադրվող կոնցեսիայի շրջանակներում կողմերի փոխհարաբերությունների կարգավորումը միայն պայմանագրով,

2. կոնցեսիայի առանձին պայմանների փոխհամաձայնեցման հնարավորությունը, այսինքն՝ դիսպոզիտիվ տարրի առկայությունը,

3. կողմերի փոխադարձ պատասխանատվությունն իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

4. կոնցեսիոն պայմանագրի փոփոխման կամ լուծման քաղաքացիաիրավական ընթացակարգերի նախատեսումը:

Թվարկված հատկանիշներն իրենց ամբողջությամբ ընդգծում են կողմերի իրավահավասարությունը կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում:

Ի տարբերություն պայմանագրի, որով կողմերը ստանձնում են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, լիցենզիան որոշակի տեսակի գործունեությամբ զբաղվելու իրավունք է տալիս և չի ուղեկցվում նման գործունեություն ծավալելու իրավունք ստացած անձի կողմից այն անպայմանորեն իրականացնելու պարտականությամբ, մինչդեռ կոնցեսիայի պարագայում կողմը ոչ միայն ստանում է համապատասխան գործունեություն ծավալելու թույլտվություն, այլև նրա վրա դրվում է այն իրականացնելու որոշակի պարտականություն: Բացի այդ, սկզբունքորեն տարբեր են նաև լիցենզիայի և կոնցեսիայի տնտեսական նպատակները: Լիցենզավորման ինստիտուտի միջոցով պետությունը հնարավորություն է ստանում ընտրելու մարդկանց իրավունքների և օրինական շահերի համար վտանգ պարունակող գործունեության առանձին տեսակներով զբաղվելու իրավունք ստացող քաղաքացիական շրջանառության մասնակիցներին, և փաստորեն, այս համակարգն էական տնտեսական օգուտ չի ենթադրում²⁸, մինչդեռ կոնցեսիան մեծապես նպաստում է տնտեսական խնդիրների լուծմանը ոչ միայն կոնցեսիոն վճարների հավաքագրման, այլև կոնցեսիոնների կողմից և նրանց ռեսուրսներով պետական ենթակառուցվածքների զարգացումն ապահովելու միջոցով: Այսպիսով՝ ակնհայտ է, որ կոնցեսիան իր ներկայիս բովանդակությամբ, առանձնահատկություններով և նպատակներով լիովին տարբերվում է լիցենզավորման ինստիտուտից, և դրանք ոչ մի դեպքում չի կարելի նույնացնել:

Իրավաբանական գրականության մեջ տեղ է գտել մի տեսակետ ևս, որով փորձ է արվում պետության և օտարերկրյա մասնավոր կազմակերպության միջև կնքվող

կոնցեսիոն պայմանագիրը դիտարկել որպես միջազգային կամ *կվազի միջազգային* պայմանագիր, որը կոնցեդենտ պետության համար միջազգային պարտավորություններ է առաջացնում²⁹: Այս դրկտրինան, ըստ էության, ուղղված է գաղութների կազմալուծման արդյունքում ձևավորված պետությունների դեմ, որոնք փորձում են տնտեսական անկախություն ձեռք բերել նախկինում մոնոպոլիաների կողմից տրամադրված կոնցեսիաների վաղաժամկետ դադարեցման միջոցով, և նպատակահարմար է համարվում կոնցեսիաների դադարեցումը դիտարկել որպես միջազգային պարտավորությունների խախտում:

Այս տեսությունը հպանցիկ վերլուծության դեպքում անզան չի դիմանում որևէ քննադատության. ինչպես արդարացիորեն նշում է Ե.Տ.Ուսենկոն, հիմք ընդունելով, որ պետությունները կարող են հանդես գալ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներ, իսկ տնտեսական կազմակերպությունները որպես միջազգային իրավունքի սուբյեկտ հաղես գալ չեն կարող՝ նրանց միջև կնքվող «հորիզոնական» պայմանագիրը *a priori* պետք է դիտարկել որպես քաղաքացիաիրավական, որը կարգավորման է ենթարկվում բացառապես քաղաքացիական իրավունքի և միջազգային մասնավոր իրավունքի նորմերով³⁰: Մեր կարծիքով՝ քննարկվող տեսությունը ևս գիտականորեն բոլորովին հիմնավորված չէ, և կարելի էր ընդհարապես դրան չանդրադառնալ, եթե այն արժանացած չլիներ ՄԱԿ-ի ուշադրությանը: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի XI նստաշրջանի ընթացքում ընդունված որոշումը լիովին հերքում է այդ տեսությունը՝ ամրագրելով, որ այն համաձայնությունները, որոնցում մասնակիցներից միայն մեկն է պետություն (կամ միջազգային իրավունքի որևէ այլ սուբյեկտ), որն օժտված է միջազգային պայմանագրերին մասնակցելու իրավունքով, իսկ մյուս մասնակիցը մասնավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, երբեք չի կարող համարվել միջազգային պայմանագիր, որքան էլ արտաքին հատկանիշներով համա-

պատասխանի միջազգային պայմանագրի պահանջներին³¹: Այսպիսով՝ քննարկվող դրկտրինան անհաջող փորձ է՝ հերքելու այն տեսությունը, համաձայն որի՝ պետության կողմից կնքվող արտաքին տնտեսական պայմանագիրը (մասնավորապես քաղաքացիաիրավական) ենթարկվում են տվյալ պետության ներքին իրավունքին: Այլ հարց է, որ գործնականում քննարկվող պայմանագրերում հաճախ ամրագրվում է դրույթ, որով սահմանված է «իրավունքի ընտրության» պայմանը, կամ առկա են հղումներ համապատասխան միջազգային իրավական ակտերին, կամ նախատեսված է պայմանագիրը «քաղաքակիրթ ազգերի» իրավունքի ընդհանուր նորմերին ենթարկելու դրույթը, կամ համանման այլ ձևակերպումներ, որոնք միտված են տվյալ պայմանագիրը որևէ երկրի ներքին իրավունքի ազդեցության ոլորտից դուրս բերելուն³²: Այս հանգամանքը ոչ միայն չի փոխում տվյալ պայմանագրի մասնավոր իրավական բնույթը, այլև ընդգծում է այն՝ կողմերին հնարավորություն տալով իրենց ազատ կամահայտնությամբ որոշելու ձևավորվող պայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա օրենսդրությունը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ կոնցեսիայի պայմանագիրը զուտ քաղաքացիաիրավական պայմանագիր է, որը կարելի է բնորոշել որպես պայմանագիր, որով մի կողմը (կոնցեսիոները) պարտավորվում է իր հաշվին ստեղծել և/կամ վերակառուցել տվյալ պայմանագրով սահմանված անշարժ գույքը կամ այլ կերպ շահագործել այն, որի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է կամ պետք է պատկանի մյուս կողմին (կոնցեդենտին), գործունեություն ծավալել կոնցեսիոն պայմանագրի օբյեկտի օգտագործմամբ, իսկ կոնցեդենտը պարտավորվում է պայմանագրով սահմանված ժամկետով կոնցեսիոներին տրամադրել կոնցեսիոն պայմանագրի օբյեկտի տիրապետման և օգտագործման իրավունքը՝ իր գործունեությունն իրականացնելու համար:

Այսպիսով՝ կոնցեսիայի պայմանագրի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

իրավական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է գործնականում տվյալ իրավահարաբերությունների ձևավորման, տարածման և պետության տնտեսության համար ունեցած դերով: Սա

նշանակում է, որ կոնցեսիայի պայմանագրի վերաբերյալ գիտագործնական ուսումնասիրությունները պետք է ավելանան, քանի որ այդպիսով հնարավոր կլինի բացահայտել ոլորտի առավել խնդրահարույց կողմերը և ապահովել իրավական կարգավորման նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը:

¹ St'e'u J.Luis Guash, Granting and renegotiating infrastructure concessions: Doing It Right, Washington, 2004, էջ 6:

² ՀՀ ջրային օրենսգրքում ևս կոնցեսիոն պայմանագրի ընդհանրական սահմանում չկա, առկա է միայն հետևյալ ձևակերպումը. կոնցեսիոն պայմանագիր՝ ջրային համակարգի կամ դրա մի մասի նկատմամբ օգտագործման իրավունքների փոխանցման գրավոր պայմանագիր: ՀՀ ջրային օրենսգրքը ընդունվել է 04.06.2002թ., տե՛ս ՀՀՊՏ 10.07.02/24(199):

³ Նշված ակտերը կարգավորում են կոնցեսիոն հարաբերությունների միայն մեկ ոլորտը՝ բնական ռեսուրսների շահագործման տեսանկյունից, և չեն ներառում ընդհանուր դրույթներ կոնցեսիոն կարգավորման սկզբունքների ու կառուցակարգերի վերաբերյալ: Այսպես՝ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված է կոնցեսիոն պայմանագրի սահմանումը, համաձայն որի՝ կոնցեսիոն պայմանագիր է համարվում Հայաստանի Հանրապետության (հանձինս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի) և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի միջև կնքված գրավոր համաձայնությունը, որով կարգավորվում են կողմերի՝ օրենքով սահմանված պարտավորությունները: «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. նոյեմբերի 5-ին, տե՛ս 29.11.02./52(227): Ինչ վերաբերում է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքին, ապա այն կոնցեսիոն պայմանագրին

նվիրել է միայն մեկ հոդված, ըստ որի օտարերկրյա ներդրողներին վերարտադրող և չվերարտադրող բնական ռեսուրսների շահագործման իրավունքի վերապահումն իրականացվում է կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա, որոնք օտարերկրյա ներդրողի հետ կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կամ դրա համար լիազորված պետական այլ մարմնի կողմից՝ կոնցեսիաների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1994թ. հուլիսի 31-ին, տե՛ս ՀՀԳԽՏ 1994/4:

⁴ St'e'u Демьяненко Л. Концессионная деятельность <http://www.fincontrol.ru/themes/fincontrol/archive-document.asp?folder=4312&matID=133885>:

⁵ Բուստամանտեի օրենսգրքը Լատինական Ամերկայի տարածաշրջանի միջազգային մասնավոր իրավունքի առավել հայտի կողմնակցված ակտերից է, որը ստեղծվել է կուբացի հայտնի դիվանագետ և իրավաբան Սանչես դե Բուստամանտե ի Սիրվեն Անտոնիոյի կողմից (1865-1951):

⁶ St'e'u Источники по международному частному праву XIX и XX веков (выпуск I). Составил В.Н.Дурденевский, М., 1941, էջ 39:

⁷ Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա դեռևս 1896 թ. քաղաքացիական օրենսգրքում հիշատակվում է կոնցեսիայի մասին. այսպես՝ օրենսգրքի 22-րդ պարագրաֆում նշվում է, որ ձեռնարկություն կազմակերպելու նպատակ ունեցողն իրավունակություն է ձեռք բերում կառավարությունից կոնցեսիա ստանալու միջոցով, եթե այդ կապակցությամբ չկան հատուկ կայսերական որոշումներ:

⁸ St'e'u Большой юридический словарь, М., 2002, էջ 285:

- ⁹ St'u Демьяненко Л. Концессионная деятельность <http://www.fincontrol.ru/themes/fincontrol/archive-document.asp?folder=4312&matID=133885>:
- ¹⁰ St'u Карасс А.В., Советское промышленное право (обзор и материалы), Ленинград, 1925, էջ 128:
- ¹¹ St'u Азизов А., Возможности использования концессионных соглашений в условиях кризиса, Корпоративный юрист, N 5, 2009, Приложение, էջ 11:
- ¹² St'u Сосна С., Суботин М., Бюро экономического анализа: полотика привлечения прямых иностранных инвестиций в российскую экономику. М., 2001, էջ 100-182:
- ¹³ St'u Великомыслов Ю.Я., Иностранные инвестиции. Международно-правовое и внутригосударственное регулирование деятельности предприятия с иностранными инвестициями. www.allpravo.ru, 2005:
- ¹⁴ Ուշագրավ է, որ պետությունների մեծամասնությունում կոնցեսիայի օբյեկտ է հանդիսանում հանրային գույքը, բացառություն է միայն Ռումինիան, ուր կոնցեսիոն պայմանագրով կարող են փոխանցվել նաև մասնավոր սեփականության օբյեկտները, եթե դրանք ունեն հանրային նշանակություն:
- ¹⁵ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, օրինակ, որպես ֆրանչայզինգի պայմանագրի այլընտրանքային անվանում օգտագործվում է՝ «համալիր ձեռնարկատիրական գործունեության պայմանագիր», իսկ կոնցեսիա եզրույթը ՀՀ քաղ. օրենսգրքում ընդհանրապես տեղ չի գտել:
- ¹⁶ St'u Сосна С.А., Концессионное соглашение - новый вид договора в российском праве, Журнал российского права, 2003, N 2, էջ 45:
- ¹⁷ Պետք է նշել, որ մայրցամաքային իրավունքի երկրներում լայն տարածում գտնելով՝ կոնցեսիան առավել արդյունավետ կիրառություն է ստանում այն երկրներում, որոնք հակված են *դեբիտալիզացիայի*, այսինքն՝ տնտեսության կառավարման մեջ պետության ակտիվ մասնակցությանը:
- ¹⁸ St'u Сосна С.А., Концессионное соглашение - новый вид договора в российском праве, Журнал российского права, 2003, N 2, էջ 45:
- ¹⁹ St'u Дроздов И., К правовой природе концессионного соглашения. Хозяйство и право, 2006, N 6, էջ 49:
- ²⁰ St'u Мозолин В.П., Право США и экспансия американских корпораций. М., 1997, էջ 70:
- ²¹ St'u Савинова О.Н., Афтореф. дисс. "Концессионные соглашения: правовое регулирование", М., 2006:
- ²² St'u Талапина Э., Концессии-как форма публично-частного партнерства, Хозяйство и право, 2009, N 4, էջ 73:
- ²³ Այս հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:
- ²⁴ St'u Грось Л., Участие публично-правовых образований в отношениях собственности: гражданско-правовые проблемы. Гос. и право, 1999, N 6, էջ 30:
- ²⁵ St'u Гражданский кодекс Российской Федерации. Комментарий. Под.ред. В.Д.Карповича, М., 1996, էջ 183:
- ²⁶ St'u Исаев И.А., Правовые вопросы использования частного капитала в восстановлении советского народного хозяйства (1921-1925 гг.): учебное пособие, М., 1977, էջ 35:
- ²⁷ St'u Карасс А.В., Право государственной социалистической собственности: объекты и содержание, М., 1954, էջ 142:
- ²⁸ St'u Дроздов И., К правовой природе концессионного соглашения. Хозяйство и право, 2006, N 6, էջ 50:
- ²⁹ St'u Лунц Л.А., Курс международного частного права, М., 2002, էջ 408:
- ³⁰ St'u Усенко Е.Т., О правовой природе непосредственных связей по линии министерств и ведомств стран-членов СЕВ, "Межведомственные связи в условиях социалистической экономической интеграции".
- ³¹ St'u Доклад Комисии международного права ООН на XI сессии. Нью-Йорк, 1959, էջ 12:
- ³² St'u Lord Mc Neir. The General Principles of Law Recognized by Civilized Nations // BYBIL, 1957.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

**ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀՈԳԵԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԾԱՆՐ
ՀԻՄԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔ**

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության ակադեմիայի սապիրանդ

Յանցագործությունների քննությունը պետք է ավարտվի օրենքով սահմանված ժամկետում: Սակայն քրեական գործի քննության ընթացքում երբեմն առաջանում են այնպիսի հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող անձին զրկում են ապահովել մեղադրյալի մասնակցությունը գործի քննությանը և թույլ չեն տալիս օրենքով սահմանված ժամկետներում ավարտել գործով վարույթը: Այդ հանգամանքները կարող են լինել ինչպես հանցագործություն կատարած անձի գիտակցական գործունեության արդյունք, որն առաջանում է նրա կամքով, այնպես էլ նրա գիտակցությունից անկախ¹: Այդպիսի հանգամանքներից է հանդիսանում նաև մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունը: Այս դեպքում մեղադրյալը ժամանակավորապես «դուրս է գալիս» գործով վարույթից՝ անկախ իր կամ նախաքննության մարմնի աշխատակիցների կամքից:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե *մեղադրյալը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որոնց պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետազա վարույթն անհնար է*»²:

Ինչպես նկատում ենք, ՀՀ քր. դատ. օր.ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսել է քրեական գործի քննության կասեցման հարաբերականորեն ինքնուրույն երկու հիմք.

- երբ մեղադրյալը ծանր հիվանդ է, կամ
- երբ մեղադրյալը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որի պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետազա վարույթն անհնար է:

Սույն հոդվածի շրջանակներում կանրադառնանք միայն ծանր հիվանդության հիմքով գործի քննության կասեցմանը:

ՀՀ քր. դատ. օր.-ի ներկայիս կարգավորումից չի հետևում, թե «ծանր հիվանդություն» ասելով ինչ պետք է հասկանալ, քանի որ՝ ա/ օրենսդիրը չի սահմանել այն ֆիզիկական և հոգեկան հիվանդությունների ցանկը, որոնք կարող են կասեցման հիմք հանդիսանալ, բ/ թե մեղադրյալի ծանր հիվանդությունը ինչ դատավարական կարգով պետք է հաստատվի, այսինքն՝ քննիչը ի՞նչը պետք է որոշի մեղադրյալի հիվանդության բնույթը, թե՞ այն պետք է հաստատվի բժշկի կողմից, գ/ հիվանդության բնույթը պարզելու համար քննիչը պետք է նշանակի դատաբժշկական, դատահոգեբուժական, դատահոգեբանական փորձաքննություն, թե՞ բավական է միայն բժշկի տեղեկանքը: Ասվածի հետ կապված պրակտիկայում ծագում են մի շարք հարցեր, որոնք ՀՀ քր. դատ. օր.-ում հստակեցման կարիք ունեն:

Մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ ծանր հիվանդությունների ցանկի սահմանումը օրենսդրորեն հնարավոր չէ հետևյալ պատճառաբանություններով.

1. այդպիսի հիվանդությունների ցանկը կարող է լինել շատ մեծ և մշտապես փոփոխվող,

2. միաժամանակ, նույն հիվանդությունը մի դեպքում կարող է հանդիսանալ կասեցման հիմք լինել, մեկ այլ դեպքում՝ ոչ³:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր հիվանդություններն են գործի քննության կասեցման հիմք: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվում է «ծանր հիվանդություն» բառակապակցությունը: Սակայն «ծանր հիվանդություն» հասկացության վերաբերյալ, ինչպես արդեն նշեցինք, քրեական դատավարության օրենսգրքում չկա հատուկ ցուցումներ, ինչի պատճառով այդ հասկացությունը գրականության մեջ և դատաքննչական պրակտիկայում մեկնաբանվում է ոչ միանշանակ:

Կան դատավարագետներ, որոնք առաջարկում են «ծանր» բառը ընդհանրապես հանել քրեական դատավարության օրենսգրքի տեքստից⁴:

Ա.Ս. Շահինյանը կարծում է, որ «քրեական գործով վարույթի կասեցման հիմքում կարող է ընկած լինել միայն այնպիսի ծանր հիվանդությունը, որը կրում է ժամանակավոր, բուժելի բնույթ, չնայած և կարող է ունենալ երկարատև (խրոնիկական) բնույթ, որը կբացառի մեղադրյալի մասնակցությունը քրեական դատավարությանը»: Ըստ նրա՝ այդպիսի հիմք կարող են ծառայել այնպիսի հիվանդությունները, ինչպիսին է, օրինակ, շաքարային դիաբետը (ոչ ծայրահեղ վիճակում): Հեղինակի կարծիքով, «դրա համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել, թե ինչն է ժամանակավոր (ոչ մշտական) հիվանդության բնույթը, այն չի ենթադրում առկա հիվանդության կարճաժամկետություն: Այսպես, մեղադրյալի հիվանդանալը անզինայով, ալերգիայով, որն ուղեկցվում է բարձր ջերմությամբ և ընդհանուր թուլությամբ ու բուժման մեջ գտնվող հիվանդին զրկում է տեղաշարժվելու և իր գործողություններին հաշիվ տալու հնարավորությունից կամ միկրոինֆակտը կասեցման հիմք չի հանդիսանում: Տվյալ դեպքում քննիչը չպետք է կասեցնի գործով նախնական քննությունը, այլ պետք է միջ-

նորդություն ներկայացնի դատախազին նախաքննության ժամկետը երկարացնելու»⁵:

Ի հակադրություն նշված տեսակետների՝ մասնագիտական գրականության մեջ կարծիք կա նաև այն մասին, որ նախնական քննությունը պետք է կասեցվի ոչ միայն մեղադրյալի ծանր հիվանդության, այլև ցանկացած այլ հիվանդության դեպքում, որը բացառում է մեղադրյալի՝ քննիչին ներկայանալու հնարավորությունը: Ընդ որում, դա հիմնավորվում է այն իրողությամբ, որ որպես կասեցման հիմք կարող է ծառայել միայն ժամանակավոր, բուժելի հիվանդությունը, կամ եթե այն կրում է խրոնիկ (անբուժելի) բնույթ, բայց ենթակա է այնպիսի բուժման, որը կհանգեցնի մեղադրյալի առողջական վիճակի բարելավման, ինչը թույլ կտա նրան մասնակցելու դատավարությանը և ավարտելու նախնական քննությունը: Այս հետևությունը բխում է քրեական գործի քննության կասեցման ելությունից:

Մեղադրյալի հիվանդությունը կհամարվի ծանր ոչ միայն այն դեպքում, երբ նա ֆիզիկապես չի կարող ներկայանալ քննիչին, այլ նաև, երբ նրա հիվանդությունը վտանգավոր է իր և շրջապատի մարդկանց՝ առողջության համար (սուր վարակիչ, մաշկային վարակիչ հիվանդություններ և այլն)⁶: Ընդ որում, այդ հիվանդությունը պետք է լինի երկար ձգվող ինֆեկցիոն հիվանդություն: Այսպես, *Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. դեկտեմբերի 27-ի «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 1286 որոշման* համաձայն՝ այդպիսի հիվանդություններն են համարվում ՉԻԱՀ/ՄԻԱՎ-ը, ժանտախտը, խոլերան, սիբիրյան խոցը, տուլարեմիան, դիֆթերիան, բժավոր տիֆը, որովայնային տիֆը, պարատիֆերը, մալարիան, փայտացումը, սուր պոլիոմիելիտը, մենինգոկոկային վարակը, դիզենտերիան, վիրուսային հիպատիտները, տուբերկուլյոզի բոլոր ձևերը, բրուցելյոզը, կատաղությունը, սիֆիլիսը, զոնոկոկային ինֆեկցիայի բարդացած ձևերը, լեպտոս-

ԵՐԻՏՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

պիրոզը, ընդհանուր աղիքային ինֆեկցիաները, սալմոնելոզային ինֆեկցիաները, էպիդեմիկ պարոտիտը, կարմրուկը, կարմրախտը, կապույտ հազը և հրակապույտ հազը, ջրծաղիկը, վարակային մոնոնուկլեոզը, քութեշը, ստրեպտոկոկային անգինան և գրիպը⁷:

Սակայն մենք կարծում ենք, որ ցանկում նշված բոլոր հիվանդությունները մեխանիկորեն որպես գործի քննության կասեցում առաջացնող հիմք դիտելը ճիշտ չէ: Ցանկում նշված այս կամ այն հիվանդությունը կարող է գործի քննության կասեցման հիմք հանդիսանել՝ ելնելով հիվանդության ծանրության աստիճանից: Այսպես, մի դեպքում, օրինակ, մեղադրյալի գրիպով հիվանդանալը կարող է համարվել կասեցման հիմք, մեկ այլ դեպքում՝ ոչ: Սակայն քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ քննիչները շատ հաճախ խուսափում են նշված հիմքով վարույթը կասեցնելուց՝ անկախ հիվանդության բնույթից: ՀՀ քննչական պրակտիկային հայտնի են դեպքեր, երբ մեղադրյալը տառապել է տուբերկուլյոզ հիվանդությամբ, որը տարածվում է օդակաթիլային ճանապարհով և վտանգավոր է եղել շրջապատի համար, սակայն վարույթն իրականացնող մարմինները չեն կասեցրել գործի քննությունը, շարունակել են այն ընդհանուր կարգով, ավարտել նախաքննությունը և գործն ուղարկել դատարան⁸:

Մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունը կարող է նախնական քննության կասեցման հիմք հանդիսանալ, եթե հիվանդությունը իր բնույթով՝ ա/ ծանր է, բ/ ժամանակավոր, գ/ բուժելի⁹:

«Ծանր հիվանդությունը» ոչ թե իրավաբանական, այլ բժշկական հասկացություն է, ուստ այս հարցում պետք է առաջնորդվել բժշկական չափանիշներով՝ իհարկե հաշվի առնելով նաև առկա հիվանդության քրեական գործով վարույթի վրա ազդեցությունը:

Հիվանդության հիմքով նախաքննութ-

յունը կասեցվում է մինչև մեղադրյալի առողջանալը:

«Ծանր հիվանդություն» բառակապակցությանը զուգահեռ ՀՀ քր. դատ. օր.-ը օգտագործում է նաև «հոգեկան հիվանդություն» հասկացությունը: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 31 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարող է կասեցվել, եթե մեղադրյալը ծանր հիվանդ է ..., իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 310 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ամբաստանյալի թաքնվելու, ինչպես նաև ամբաստանյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության դեպքում, երբ նա զրկվում է դատարան ներկայանալու հնարավորությունից, դատարանն այդ ամբաստանյալի նկատմամբ գործի վարույթը կասեցնում է մինչև նրան հայտնաբերելը կամ նրա առողջանալը, և քննությունը շարունակում է մնացած ամբաստանյալների նկատմամբ:

Նշված երկու նորմերում օգտագործվում է «ծանր հիվանդություն» և «հոգեկան կամ այլ ծանր հիվանդություն» հասկացությունները: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասում ասվում է, որ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացություններ չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Առաջարկում ենք քրեական դատավարության օրենսդրությունը մշակելիս միասնականացնել միևնույն երևույթը բնորոշող տերմինները:

ՀՀ քրեադատավարական օրենսգրքից հետևում է, որ ծանր հիվանդություն ասելով պետք է հասկանալ նաև մեղադրյալի հոգեկան հիվանդությունը: Քրեական գործով վարույթի կասեցման հիմք կարող է դառնալ միայն ժամանակավոր, լրիվ վերականգնելի հոգեկան հիվանդությունը, ա) որի դեպքում մեղադրյալը չի կարող գիտակցել իր գործողությունների փաստա-

կան բնույթը և հանրային վտանգավորությունը և դեկլարել դրանք, բ) որն իր մոտ առաջացել է հանցանքը կատարելուց հետո՝ ինչպես մինչև քրեական գործ հարուցելը, այնպես էլ նախնական քննության ժամանակ, որը չի առաջացնում նշված հետևանքները, սակայն ժամանակավորապես խոչընդոտում է քննչական գործողություններին մեղադրյալի մասնակցությամբ: Ընդ որում, ամեն հիվանդություն չէ, որ խոչընդոտում է մեղադրյալի՝ քննիչի մոտ ներկայանալուն, հետևաբար՝ կարելի է համարել քրեական գործով վարույթի կասեցման հիմք, որովհետև օրենքը չի արգելում քննիչին դատավարական գործողություններ կատարել մեղադրյալի գտնվելու վայրում:

Վարույթն իրականացնող մարմինները մինչև նախաքննության կասեցումը պետք է պարզեն հետևյալ հարցերը.

1. խոչընդոտում է արդյոք հիվանդությունը մեղադրյալին մասնակցելու նախնական քննությամբ,

2. այն չի՞ խանգարում արդյոք մեղադրյալին կողմնորոշվելու իրադրության մեջ և ընկալելու մեղադրանքի էությունն ու նշանակությունը,

3. կարո՞ղ է արդյոք մեղադրյալը օգտվել պաշտպանության իր իրավունքից¹⁰:

Գործի քննության կասեցման նշված հիմքի հետ կապված՝ դատավարական իրավունքի տեսության մեջ վիճահարույց է նաև այն հարցը, թե մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության փաստը ո՞ւմ կողմից պետք է հաստատվի՝ բժշկի՞, բժշկական հանձնաժողովի՞, թե՞ դատաբժշկական, դատահոգեբուժական, դատահոգեբանական փորձաքննության միջոցով:

Մեղադրյալի ծանր հիվանդ լինելու փաստը կարող է հաստատվել բժշկական հաստատությունում աշխատող համապատասխան բժշկի կողմից՝ քննիչի հանձնարարությամբ կամ մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Մեկ այլ դեպքում կարելի է նշանակել դատաբժշկական փորձաքննություն՝ որոշելու մեղադրյալի մարմ-

նական վնասվածքի ծանրության աստիճանը և պարզելու քննությանը նրա մասնակցության հնարավորությունը¹¹:

Ս.Ս. Կուրդինյանը կարծում է, որ մեղադրյալի ծանր հիվանդության առկայության դեպքում գործի կասեցման հարցի վերջնական լուծման համար բժշկի տեղեկանքը բավարար չէ: Նրա կարծիքով, գործը կարող է կասեցվել միայն այն դեպքում, երբ ծանր հիվանդության փաստը կհաստատվի փորձագետի եզրակացությամբ: Իր հերթին փորձաքննության նշանակման հիմք կարող է հանդիսանալ բժշկի տեղեկանքը¹²:

Նման տեսակետի կողմնակից է նաև Բ.Օ. Ալիմջանովը: Ըստ նրա՝ «... մեղադրյալի հիվանդության փաստի հաստատումը չի սահմանափակվում միայն բժշկի տեղեկանքով: Անհրաժեշտ է նշանակել նաև դատաբժշկական կամ դատահոգեբանական փորձաքննություն: Միայն դատահոգեբանական բնագավառի փորձագետը կարող է ստույգ որոշել մեղադրյալի հոգեկան հիվանդություն բնույթը»¹³:

Ի հակադրություն այս հեղինակների՝ Լ.Ս. Ռեպկինը կարծում է, որ «եթե հիվանդության փաստը ակնհայտ է, և դրա ծանրության աստիճանը կարող է հաստատել բուժող բժիշկը, բավական է միայն նրա տեղեկանքը: Այն դեպքում, երբ բժիշկը անձամբ ի վիճակի չէ որոշել հիվանդության բնույթը, նոր միայն անհրաժեշտ է նշանակել դատաբժշկական փորձաքննություն»¹⁴: Նմանատիպ տեսակետի կողմնակից է նաև Վ.Ե. Գուցևը¹⁵:

Ըստ Վ.Ս. Բիկովի՝ «քրեադատավարական օրենսգիրքը պահանջում է, որ մեղադրյալի կամ կասկածյալի հիվանդության փաստը հաստատված լինի բժշկի եզրակացությամբ՝ չբացառելով նաև նշված դեպքում նշանակել և կատարել դատաբժշկական և դատահոգեբուժական փորձաքննություն»¹⁶:

Ելնելով որոշակի հիմքերի առկայությունից՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը, որպես կանոն, իր հայեցողությամբ է որոշում՝ անհրաժեշտ է արդյոք քրեական գործով կատարել փորձաքն-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

նություն, թե ոչ, կամ հատկապես ինչ փորձաքննություն է պետք նշանակել: Սակայն օրենքով ուղղակի նախատեսված մի շարք դեպքերում փորձաքննության նշանակումը պարտադիր է¹⁷: Ըստ ՀՀ քր. դատ. օր-ի 108-րդ հոդվածի՝ «քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝

1. մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.

2. հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների /անգործության/ բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը.

3. վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.

4. գործի համար նշանակություն ունեցնալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական և դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացությունները.

5. կասկածյալի և մեղադրյալի մոտ նախկին դատվածության առկայությունը և նրան որոշակի պատիժ նշանակելը՝ համապատասխան տեղեկանքը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև դատարանի դատավճռի պատճենը»:

Ինչպես նկատում ենք, քր. դատ. օր.-ը մեղադրյալի մոտ հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության առկայության պարզումը, որը նրան զրկում է դեպքի պահին գիտակցելու իր գործողության բնույթն ու նշանակությունը և ղեկավարելու դրանք, վերապահել է միայն դատահոգեբուժական կամ դատահոգեբանական բնագավառի փորձագետներին: Դրանից կարելի է ենթադրել, որ այն բոլոր դեպքերում, երբ քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալը հիվանդանում է հոգեկան հիվանդությամբ, որը նրան զրկում է քրեական գործով վարույթին մասնակցելու, պարտադիր պետք է նշանակվի և կատարվի դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձաքննություն: Այսինքն, այս դեպքում միայն բժշկի տեղեկանքը բավարար չէ քրեական գործով վարույթը կասեցնելու համար:

Ինչպես իրավագիտորեն նշում է Գ.Պ. Խիմիչևան, «գործում փորձագետի եզրակացության առկայությունը, որը հաստատում է կասկածյալի կամ մեղադրյալի ծանր հիվանդությունը, ունի առավելություն բժշկական տեղեկանքի համեմատ, քանի որ. 1/ փորձագետի եզրակացությունը, համաձայն քրեադատավարական օրենսգրքի, ապացույց է, իսկ բժշկի տեղեկանքը՝ ոչ, 2/ փորձագետի՝ անձի հիվանդության վերաբերյալ տված եզրակացության հիման վրա քննիչը կարող է մոտավորապես որոշել նրա առողջացման ժամկետը, որը թույլ կտա քննիչին որոշելու գործով վարույթը կասեցնելու կամ ՌԴ քր. դատ. օր.-ի 26 հոդվածով նախատեսված կարգով այն կարճելու հարցը, 3/ քննիչը չպետք է կասկածանքի տակ դնի կասկածյալի կամ մեղադրյալի հիվանդության վերաբերյալ փորձագետի տված եզրակացությունը, քանի որ փորձագետը պատասխանատվություն է կրում իր տված եզրակացության արժանահավատության համար, 4/ բացառում է տարածայնությունը քննիչի, դատա-

խագի և դատարանի միջև այն հարցում, թե հնարավոր է արդյոք իրականացնել քննչական գործողություններ հիվանդ կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությամբ»¹⁸:

Քննարկվող հիմնախնդրի հետ կապված իր դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ տատարանի քրեական և զինվորական գործերով պալատը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 1999թ. հոկտեմբերի 18-ի դատավճռով Ա.Ս.-ն էջմիածնի շրջանի ժող. դատարանի 29.06.1978թ. դատավճռով ՀՀ քր. օր.-ի 173 հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է 2 տարի 6 ամիս ժամանակով ազատազրկման: Քր. օր.-ի 232 հոդվածի կիրառմամբ ազատազրկումը փոխարինվել է պարտադիր աշխատանքների ներգրավումով: 1999թ. դեկտեմբերի 14-ին նույն դատարանի որոշմամբ դատավճռի կատարումն Ա.Ս.-ի ազատազրկման մասով հետաձգվել է մինչև նրա առողջանալը, և նա անհապաղ ազատ է արձակվել կենտրոնական հիվանդանոցից:

Բողոքով խնդրվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 18.10.1999թ. դատավճռի կատարումն Ա.Ս.-ի նկատմամբ ազատազրկման մասով հետաձգելու մասին նույն դատարանի 14.12.1999թ. որոշումը բեկանել, վարույթը կարճել և Ա.Ս.-ին վերադարձնել ՀՀ ՆԳՆ ՔՊԻՎ-ի համակարգում գտնվող համապատասխան հիմնարկ՝ պատժի կրումը շարունակելու:

Այս առումով ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը նշել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 108, 431, 438 հոդվածների իմաստից հետևում է, որ ծանր հիվանդության առկայության փաստը կարող է ապացուցվել միայն բժշկական հանձնաժողովի կամ դատաբժշկական փորձագետի եզրակացություններով: Մինչդեռ դատարանը սահմանափակվել է ՆԳՆ քրեական պատիժների իրականացման վարչության կենտրոնական հիվանդանոցի գրությամբ, ըստ որի՝

դատապարտյալ Ա.Ս.-ն ներկա առողջական վիճակով կարիք ունի բուժման մասնագիտացված սրտաբանական բաժանմունքում¹⁹:

Իսկ ինչ վերաբերում է այլ ծանր հիվանդության դեպքերում քրեական գործի քննության կասեցմանը, ապա մենք ևս համակարծիք ենք այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ այս դեպքում բավական է միայն բժշկական հանձնաժողովի կողմից տրված տեղեկանքը: Իսկ եթե բժիշկական հանձնաժողովը ի վիճակի չէ որոշելու հիվանդության բնույթը, ապա նոր միայն պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն:

Ընդ որում, որպեսզի գործի վարույթը կասեցվի, բժշկի եզրակացությամբ պետք է հաստատված լինի քննչական կամ դատավարական գործողություններին մեղադրյալի մասնակցության անհնարինության հանգամանքը: Ծանր հիվանդության փաստը հաստատող հետազոտություններ կատարելու համար քննիչն իրավունք ունի մեղադրյալին տեղավորել բժշկական հաստատություն: ՀՀ քր. դատ. օր.-ի 280 հոդվածի համաձայն՝ «միայն դատարանի որոշման հիման վրա են կիրառվում ... կասկածյալներին, մեղադրյալներին և այն անձանց, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավել որպես մեղադրյալ, բժշկական հաստատությունում տեղավորումը՝ դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար»: Ընդ որում, ՀՀ քր. դատ. օր.-ը հոդվածը նշված բժշկական հաստատությունում գտնվելու ժամկետ չի սահմանում: Ասվածի հետ կապված՝ Հ.Գ. Ավետիսյանը իր թեկնածուական ատենախոսության մեջ նշել էլ. «Նկատի ունենալով, որ քննարկվող հարկադրանքի միջոցի կիրառումը՝ անձին հարկադրաբար բժշկական հաստատությունում տեղավորելը, կապված է անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հետ և եվրոպական Կոնվենցիայի և Սահմանադրության տեսանկյունից դիտվում է որպես ազատությունից զրկելու տարատեսակ, այն պետք է սահմանափակվի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

որոշակի ժամկետով, որը կարող է երկարացվել միայն դատարանի որոշմամբ»: Այնուհետև հեղինակը ավելացնում է, որ նշված անձինք կարող են բժշկական հաստատությունում տեղավորվել մինչև մեկ ամիս ժամկետով: Վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ այդ ժամկետը կարող է երկարացվել դատարանի որոշմամբ մինչև երկու ամիս ժամկետով»²⁰:

Բժշկական հաստատությունում մեղադրյալի գտնվելու ժամանակահատվածում նախաքննության կասեցում չի թույլատրվում, քանի որ ծանր հիվանդության առկայությունը դեռ պետք է հաստատվի: Եթե մեղադրյալը ճանաչվել է անմեղույնակ, ապա վարույթը չի կասեցվում, այլ գործը օրենքով սահմանված կարգով ուղարկվում է դատարան՝ տվյալ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը լուծելու համար²¹:

Մինչև գործի կասեցումը քննիչը պարտավոր է հավաքել ապացույցներ, որոնք մեղադրանքի հիմք են: Ցանկացած դեպքում գործում պետք է լինեն մեղադրանքի առաջադրման ապացույցներ: Եթե ապացույցներ ձեռք չեն բերվել, գործը չի կարելի կասեցնել, այլ նախաքննությունը պետք է շարունակվի: Այսինքն մեղադրյալի ծանր հիվանդության հիմքով գործով վարույթը կարող է կասեցվել, երբ արդեն բացահայտված է հանցանք կատարած անձը, և եղած ապացույցների հիման վրա որոշում է կայացվել նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Հարկ է նշել, որ ՀՀ գործող քր. դատ. օր.-ը մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության հիմքով գործով վարույթի կասեցումը չի կասում նախաքննության ժամկետների լրանալու հետ: Ասվածից հետևում է, որ անկախ այն հանգամանքից, թե նախաքննության ժամկետները լրացել են, թե ոչ, մեղադրյալի մոտ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության փաստը հաստատվելուց հետո քննիչը իրավունք ունի

կասեցնելու գործի քննությունը:

Նշված հիմքով գործով վարույթի կասեցման պայման է.

1. որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում ընդունելը,

2. հնարավորություն կա կասեցնելու վարույթը և ավարտելու այն,

3. բժշկական եզրակացությամբ հաստատվել է մեղադրյալի ժամանակավոր հիվանդության փաստը, որը խոչնդոտում է նրա մասնակցությանը քննչական և այլ դատավարական գործողություններին²²:

Մենք կարծում ենք, որ քրեական գործի քննության կասեցման նշված հիմքը պետք է ձևակերպել հետևյալ կերպ՝ **մեղադրյալի ժամանակավոր հեզեկան կամ այլ ծանր հիվանդության դեպքում՝ հաստատված բժշկական հանձնաժողովի կամ դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական բնագավառի փորձագետի եզրակացությամբ, որը նրան զրկում է մասնակցելու քննչական և այլ դատավարական գործողություններին:**

Վերոգրյալից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ քրեական գործի քննությունը մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության հիմքով կարող է կասեցվել հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում.

1. մեղադրյալը պետք է հիվանդացած լինի ծանր հիվանդությամբ,

2. մեղադրյալի ծանր հիվանդության բնույթը պետք է որոշվի կոնկրետ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով,

3. մեղադրյալի ծանր հիվանդությունը, որը պետք է խոչնդոտի նրա մասնակցությանը քննչական կամ այլ դատավարական գործողություններին,

4. հիվանդությունը պետք է կրի ժամանակավոր բնույթ,

5. հիվանդությունը պետք է հաստատվի բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ, իսկ օրենքով հատուկ նախատեսված դեպքերում՝ փորձագետի եզրակացությամբ:

- ¹ Տես՝ **Якубович Н.** Приостановление и возобновление предварительного следствия в аспект УПК РФ 2001 г. // Уголовное право, 2002, № 2, էջ 79:
- ² Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նախնական քննության կատարման այս հիմքը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «կասկածյալի կամ մեղադրյալի ժամանակավոր ծանր հիվանդությունը, որը խոչնդոտում է նրանց մասնակցությունը քննչական և այլ դատավարական գործողություններին՝ հատուկված բժշկի եզրակացությամբ»:
- ³ Տես՝ Уголовный процесс Российской Федерации. Учебник, Отв. ред. **А.П.Кругликов**, М., 2010, էջ 456:
- ⁴ Տես՝ **Быков В.М.** Деятельность следователя по приостановленным делам /криминалистическое и уголовно-процессуальное исследование/. Дис. ... канд. юрид. наук, Свердловск, 1972, էջ 31:
- ⁵ Տես՝ **Шагинян А.С.** Приостановление предварительного следствия: Дис. ... канд. юрид. наук., Томск, 2001, էջ 106:
- ⁶ Տես՝ **Клюкова М.Е.** Приостановление дел в советском уголовном процессе, Автопеч. дис. ... канд. юрид. наук., Казан, 1990, էջ 16, **Захожий Л., Долина С.** Приостановление расследования при психическом или ином тяжком заболевании обвиняемого //Социалистическое законность, М., 1980, № 11, էջ 50:
- ⁷ Տես՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր. 2002, թիվ 5/180/:
- ⁸ Օրինակը ստացվել է մեր կողմից քննիչների բանավոր հարցման միջոցով:
- ⁹ Տես՝ **Н.А. Громов** Уголовный процесс России. М., 1998, էջ 332:
- ¹⁰ Տես՝ **Алимджанов Б.** Раскрытие преступлений - задач следственных органов, Ташкент, 1975, էջ 40:
- ¹¹ Տես՝ **Захожий Л., Долина С.** Приостановление расследования при психическом или ином тяжком заболевании обвиняемого //Социалистическое законность, М., 1980, N 11, էջ 50:
- ¹² Տես՝ **Кургинян С.М.** Процессуальные вопросы приостановления предварительного следствия в случае психического или иного тяжкого заболевания обвиняемого // Вопросы борьбы с преступностью. Вып. 9. М., 1969, էջ 83:
- ¹³ **Алимджанов Б.О** Приостановлении расследования в случае психического или иного тяжкого заболевания обвиняемого //Общественные науки в Узбекистана. Ташкент, 1971, № 2, էջ 25:
- ¹⁴ **Репкин Л.М.** Приостановление предварительного следствия. Волгоград, 1971, էջ 51:
- ¹⁵ **Гуцев В.Е.** Процессуальные вопросы приостановления производства по уголовному делу на предварительном следствии и в суде. Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 1971, էջ 33:
- ¹⁶ **Быков В.М.** Основания приостановления предварительного следствия по УПК РФ, //Государство и право, 2004 N 5, էջ 107-108:
- ¹⁷ Տես՝ **Ենգիբարյան Վ.** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները: Երևան 2007, էջ 38:
- ¹⁸ **Химичева Г.П.** Досудебное производство по уголовным делам, концепция совершенствования уголовно-процессуальной деятельности, М., 2003, էջ 200:
- ¹⁹ Տես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու /2000-2001 թթ./: Հատոր երկրորդ, էջ 543:
- ²⁰ **Ավետիսյան Յ.Գ.** Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը՝ որպես անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովման երաշխիք: Իրավ. գիտ. թեկ. ատեն. սեղմագիր, Երևան 2009, էջ 13:
- ²¹ Տես՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս , **Գ.Ս. Ղազինյանի** խմբագրությամբ, ԵՊՀ, Երևան 2003, էջ 205:
- ²² Տես՝ **Химичева Г.П.** Досудебное производство по уголовным делам, концепция совершенствования уголовно-процессуальной деятельности, М., 2003, էջ 199:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ
ԳԱՂՏՆԻՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻ
ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գոռ ԵՆԳԻՔԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման կարևորագույն հիմնախնդիրը ներառում է փոխկապակցված հարցերի մի ամբողջ համալիր: Դրա մեջ կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի այնպիսի տեղեկությունների պահպանությունը, որոնց տարածումն այս կամ այն չափով կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Խոսքը պետական և ծառայողական գաղտնիք կազմող և պետության սեփականությունը հանդիսացող գաղտնի տեղեկությունների մասին է:

Դրանց լիարժեք պահպանության կազմակերպումն ու իրականացումը պայմանավորված են տարբեր հանգամանքներով և առաջին հերթին՝ հստակ ու ամբողջական իրավական կարգավորմամբ, որն օրենքի արդյունավետ գործողության կարևորագույն երաշխիքներից է: Այս հանգամանքը, ցավոք, երբեմն անհրաժեշտ ուշադրության չի արժանանում, եթե չասենք՝ անտեսվում է: Որպես հետևանք՝ ակամա ծնվում են օրենքի այս կամ այն դրույթի իրարամերժ մեկնաբանություններ, որոնք անհարկի դժվարություններ են ստեղծում այն կիրառելիս: Օրենքի անկատարությունը դառնում է դրա թերի կատարման պատճառ, ինչը բնականաբար ծառայողական գաղտնիքի մասով ևս բացասաբար է անդրադառնում պետության շահերի վրա:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ծառայողական

գաղտնիքի իրավական ինստիտուտի արդի վիճակի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար փորձենք նախ հիմնավորել այդ իրավական ինստիտուտի գոյության իրավաչափությունը և անհրաժեշտությունը, ապա կներկայացնենք համառոտ անդրադառնալով նաև հարցի պատմությանը դրա զարգացման հեռանկարների վերաբերյալ մեր նկատառումները:

Պետության և իրավունքի տեսությունում իրավական ինստիտուտը բնորոշվում է որպես իրավական նորմերի համակարգված ամբողջություն, որը կարգավորում է հասարակական հարաբերությունների որոշակի տեսակ (խումբ)¹:

Ծառայողական գաղտնիքի իրավական ինստիտուտը որպես այդպիսին կայացել է դեռևս խորհրդային տարիներին: Իրավագետ Ա.Ա.Ֆատյանովը, անդրադառնալով խորհրդային շրջանում տեղեկությունների շրջանառությունը սահմանափակող ինստիտուտներին, նշում է, որ «երկրում ձևավորվել էր տեղեկություններ ստանալը սահմանափակող ինստիտուտների՝ պետական գաղտնիքի, ծառայողական գաղտնիքի, սահմանափակ տարածման տեղեկությունների բավականաչափ կուռ և պետական ապարատի պահանջմունքները լիովին բավարարող համակարգ»²: Այս կարծիքին են նաև այլ իրավագետներ³:

Նախարարություններում և գերատեսչություններում գաղտնիության ռեժիմի ապահովման մասին 1987թ. ուղեցույցում ծառայողական գաղտնիքը սահմանվել է որպես գիտության, տեխնիկայի, արտադրության և կառավարման բնագավառների ցանկացած տեղեկություն, որի տարածու-

մը կարող էր վնաս հասցնել պետության շահերին: Այդպիսի տեղեկությունները կրել են «գաղտնի» դրոշմագիրը և պահպանվել պետության կողմից պետական գաղտնիքի հետ գրեթե միևնույն ռեժիմով:

Այս հանգամանքն արդեն իսկ խոսում է ծառայողական գաղտնիքին նախկինում ևս տրված կարևոր նշանակության մասին: Նպատակը այն էր, որ ծառայողական գաղտնիքի պահպանությունը մեծապես նպաստել է հենց պետական գաղտնիքի պահպանությանը: Որպես կանոն՝ պետական գաղտնիքի մեջ մտնում էին նաև այնպիսի առավել փոքր ծավալի և նշանակության տեղեկություններ, որոնք առանձին-առանձին ոչ թե պետական գաղտնիք էին հանդիսանում, այլ ծառայողական, բայց և որոշակի համադրությամբ կարող էին այդպիսին դառնալ: Ա.Ա.Ֆատյանովի բնորոշմամբ՝ «ծառայողական գաղտնիքի ինստիտուտը առավելապես «սպասարկել է» պետական գաղտնիքի ինստիտուտին»⁴: Այստեղից պարզ է դառնում այդ կարգի տեղեկությունների պահպանման անհրաժեշտությունն ու ծառայողական գաղտնիքի ու այն կարգավորող իրավական նորմերի դերն ազգային անվտանգության (նախկինում ընդունված ձևակերպմամբ՝ պետական անվտանգության) ապահովման ոլորտում:

Մյուս կողմից՝ կային նախարարությունների և գերատեսչությունների գործունեությանը վերաբերող բազմաթիվ ծառայողական բնույթի տեղեկություններ, որոնց տարածումը կարող էր վնաս պատճառել հենց նշված մարմինների օրինական շահերին, հետևաբար՝ միջնորդավորված ձևով նաև պետությանը: Այս մոտեցումներն ըստ էության պահպանվել են նաև մեր օրերում:

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ «ռազմական գաղտնիք» հասկացությունը խորհրդային տարիներին ներառում էր նաև ծառայողական բնույթի գաղտնի տեղեկություններ (ռազմական բնագավառի գաղտնի տեղեկություններ, որոնք պետական գաղտնիք չէին հանդիսա-

նում), ապա առավել հասկանալի կդառնան ծառայողական գաղտնիքին տրված կարևոր նշանակությունը և պետական գաղտնիքի ռեժիմով դրա պահպանության անհրաժեշտությունը:

Սահմանելով «ծառայողական գաղտնիք» հասկացությունը և ծառայողական գաղտնիքի պահպանության կարգը՝ խորհրդային օրենսդրությունը նաև պատասխանատվություն էր նախատեսում դրա տարածման համար: Մասնավորապես՝ 1961թ. մարտի 7-ի ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 71¹ հոդվածում («Պաշտոնեական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հանձնումը օտարերկրյա կազմակերպություններին») թեև խոսվում էր «պաշտոնեական գաղտնիքի» մասին, սակայն դրա բովանդակության մեջ քիչ թե շատ խորամուխ լինելիս կասկած չի մնում, որ խոսքը հենց ծառայողական բնույթի տեղեկությունների մասին է («Պաշտոնեական գաղտնիք հանդիսացող տնտեսական, գիտատեխնիկական կամ այլ տեղեկություններ օտարերկրյա կազմակերպություններին կամ նրանց ներկայացուցիչներին հանձնելը կամ հանձնելու նպատակով հավաքելը այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել ծառայության կամ աշխատանքի բերումով կամ հայտնի են դարձել այլ ճանապարհով...» և այլն):

Նույն օրենսգրքի մեկ այլ հոդված (հոդված 267, մաս «դ») պատասխանատվություն էր նախատեսում «հրապարակման ոչ ենթակա, բայց պետական գաղտնիք չհանդիսացող ռազմական տեղեկություններ» տարածելու համար:

Մենք հեռու ենք ծառայողական գաղտնիքի խորհրդային տարիների իրավական կարգավորումը կատարյալ համարելու մտքից: Ընդհակառակը՝ հակված ենք կարծելու, որ այն ավելի շատ կրում էր ոչ թե իրավական, այլ վարչահրամայական բնույթ: Որպես խոշոր թերություն բավական է մատնանշել ընդհանրապես գաղտնիքների մասին օրենքների բացակայությամբ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

յան և ոլորտի ենթաօրենսդրական կարգավորման հանգամանքը: Եվ, այնուամենայնիվ, ծառայողական գաղտնիքի խորհրդային տարիների իրավական ինստիտուտը ներառել է նորմեր, որոնք մի կողմից սահմանել են ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը (այլ կերպ ասած՝ սահմանվել է «ծառայողական գաղտնիք» հասկացությունը), մյուս կողմից՝ կարգավորել են դրանց պահպանության կարգը և պատասխանատվություն նախատեսել այդ տեղեկությունների անօրինական տարածման համար: Այսինքն՝ այն ներառել է ծառայողական գաղտնիքի հետ կապված գրեթե բոլոր հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր:

Դրանց մեջ առաջնային դեր է հատկացվել «ծառայողական գաղտնիքը» սահմանող իրավական նորմին: Դեռևս 18-րդ դարում գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչ Յեզեփը հասկացությունն անվանել է «մտածողության գազաթնակետ»⁵: Հանրահայտ է, որ գիտության մեջ հասկացությունները փոխկապակցված են, և սահմանումներում է, որ բացահայտվում է նրանց միջև եղած կապը: Ահա թե ինչու «ծառայողական գաղտնիք» հասկացության հստակ սահմանման պայմաններում միայն հնարավոր էր ճիշտ որոշել պահպանվող տեղեկությունների շրջանակը, տարանջատել դրանք մնացածից այլ տեղեկություններից և պահպանության արդյունավետ միջոցներ իրականացնել: Ակնհայտ է, որ ծառայողական գաղտնիքի (նաև այլ գաղտնիքների) հստակ սահմանումն է թույլ տալիս խուսափելու այնպիսի տեղեկությունների պահպանումից, որոնք ընդհանրապես գաղտնիք չեն կազմում կամ դադարել են այդպիսին լինելուց (դրանով իսկ ավելորդ անգամ չսահմանափակել տեղեկատվության ազատության իրավունքը, ինչպես նաև խնայել ֆինանսական

միջոցները), ճիշտ սահմանելու գաղտնի տեղեկությունների անօրինական տարածման համար պատասխանատվությունը:

Ասվածի համատեքստում փորձենք վերլուծել Հայաստանի Հանրապետությունում ծառայողական գաղտնիքի հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորման առանձին կողմերը, պարզել մեզանում դրա կարևորության ըմբռնման աստիճանը:

Այսպես, «ծառայողական գաղտնիք» հասկացությունն առաջին անգամ օրենսդրորեն սահմանվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին ընդունված «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ որի՝ «Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը»:

Նշենք այդ բնագավառները՝ ռազմական, արտաքին հարաբերություններ, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական, և նկատենք, որ օրենքում բովանդակային առումով պետական և ծառայողական գաղտնիքները, ըստ էության, դիտարկվում են նույն հարթության վրա, այլ կերպ ասած՝ բխում են նույն տրամաբանությունից:

Բայց կա նաև ծառայողական գաղտնիքի մեկ այլ սահմանում, որը տեղ է գտել 1998 թ. մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում. «Տեղեկությունը ծառայողական գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկությունն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար»:

հիարկե խոսքը նույն հասկացության (ծառայողական գաղտնիքի) սահմանումների ձևակերպումների (տեքստային) տարբերությունների մասին չէ: Ամեն օրենք ի վերջո ունի իր գերակա ուղղվածությունը, լեզուն, տերմինաբանությունը, և այդպիսի տարբերություններ կարող են լինել: Բայց դրանք չպետք է առաջացնեն նույն հասկացության սահմանումների իմաստային անհամաձայնություն, անհամապատասխանություն, նույնիսկ՝ իրարամերժություն, որ անընդունելի է, քանի որ հիշյալ երկու օրենքներն էլ գործում են նույն օրենսդրական դաշտում և, մեղմ ասած, առնվազն չպետք է հակասեն միմյանց: Մինչդեռ այստեղ հակասություններն առավել քան ակնհայտ են:

Դիտարկենք դրանցից առավել կարևորները:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն՝ ծառայողական գաղտնիք է այն տեղեկությունը, որի տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

Քաղաքացիական օրենսգրքում այս դրույթը շրջանցված է, բայց այնպես, կարծես ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունը նախ և առաջ կապ ունի ոչ թե հանրապետության անվտանգության, այլ միայն այդ տեղեկության սեփականատիրոջ նյութական շահերի հետ: Քաղաքացիական օրենսգրքի սահմանումն այլ կերպ դժվար է մեկնաբանել, քանի որ, ըստ դրա, ծառայողական գաղտնիքն այն տեղեկությունն է, որը «երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք»: Հարց է առաջանում. ինչու՞ միայն առևտրային:

Ըստ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի սահմանման՝ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները պաշտպանվում են պետության կողմից:

Քաղաքացիական օրենսգրքում ծառայողական գաղտնիք կազմող տեղեկության

պետական պաշտպանության մասին դրույթը փոխարինված է այդպիսի տեղեկություն ունեցողի կողմից դրա գաղտնիության պահպանման համար միջոցներ ձեռնարկելու մասին դրույթով:

Կարծում ենք՝ այստեղ առարկելու մի քանի հիմքեր կան:

Նախ՝ իրավագիտության լեզվով (ինչպես մենք բազմիցս հանդիպում ենք օրենսդրական ակտերում) «պաշտպանելն» ու «պահպանելը» նույնիմաստ բառեր կամ հասկացություններ չեն: Որքանով է ճիշտ մեկ օրենքում խոսել ծառայողական գաղտնիքի պաշտպանության և պահպանության, մեկ այլ օրենքում՝ միայն պահպանության մասին:

Երկրորդ՝ որքանով է ճիշտ, որ մեկ օրենքի սահմանման համաձայն՝ ծառայողական գաղտնիք է այն տեղեկությունը, որը պաշտպանվում է պետության կողմից, իսկ մեկ այլ օրենքի նույն հասկացության սահմանման համաձայն՝ այն տեղեկությունը, որի գաղտնիության պահպանման համար «տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում»: Անշուշտ, «տեղեկատվություն ունեցողը» կարող է լինել նաև պետությունը, բայց ինչու՞ միայն նա: Ամբաստանելիորեն հաշվի չի առնվում այն, որ տվյալ պարագայում (և ընդհանրապես) «տեղեկատվություն ունեցողը» կարող է լինել ոչ միայն պետությունը, այլև քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ:

Երկու տարբեր օրենքներում նույն հասկացության սահմանումների հակասությունն այստեղ ևս ակնհայտ է. ըստ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի՝ ինչպես պետական, այնպես էլ ծառայողական գաղտնիքի սեփականատերը պետությունն է, ըստ քաղաքացիական օրենսգրքի՝ «տեղեկատվություն ունեցողը», որը, սակայն, ինչպես մշեցիմք, կարող է լինել նաև քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտ:

Անշուշտ, ամեն օրենք ունի իրեն հատուկ գործառույթներ, կարգավորման օբյեկտներ, կիրառության ոլորտներ, բովան-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

դակություն, որոնք չի կարելի մեխանիկորեն տարածել մեկ այլ օրենքի վրա և դատողություններ անել այդ հիմքով: Այնուամենայնիվ, չի կարելի անտեսել այն իրողությունը, որ տվյալ երկրի օրենքներն ի վերջո գործում են մեկ իրավական դաշտում և իրենց տրամաբանությամբ, փոխլրացնելով միմյանց, պետք է կազմեն մեկ միասնական, կուռ համակարգ՝ տեղիք չտալով հակասությունների և տարընթերցումների:

Այս տեսանկյունից դիտարկելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում և քաղաքացիական օրենսգրքում ծառայողական գաղտնիքի սահմանումները չի կարելի չնկատել, որ առանձին կողմերով դրանք այնքան են հեռանում իրարից, որ թվում է՝ խոսքը ոչ թե մեկ, այլ երկու առանձին հասկացությունների մասին է: Իրավական բնույթի նման անհամաձայնությունները գործնական կյանքում, մասնավորապես դատաիրավական գործընթացներում, կարող են հանգեցնել խրթին, ուղղակի փակուղային իրավիճակների առաջացման:

Նշենք «ծառայողական գաղտնիք» հասկացության երկու սահմանումների մեկ էական անհամապատասխանություն և: Քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում ոչ մի կերպ չի տեղավորվում «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի այն դրույթը, որ ծառայողական գաղտնիքը պարունակում է պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ և ունի իր տարածման որոշակի ոլորտները: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի շրջանակներում էլ չի տեղավորվում քաղաքացիական օրենսգրքի այն դրույթը, ըստ որի ծառայողական գաղտնիք է այն տեղեկատվությունը, որն ունի «իրական կամ հնարավոր առևտրային արժեք»:

Մեզ տրամաբանական չի թվում այն, որ

մեկ օրենքում օրենսդիրը պետական և ծառայողական գաղտնիքները դիտարկում է մեկ հարթության մեջ (դա երևում է հենց օրենքի անվանումից՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»)՝ սահմանելով պետական և ծառայողական գաղտնիքների պահպանության և պաշտպանության գրեթե նույն վարչաիրավական ռեժիմը, իսկ մեկ այլ օրենքում (քաղաքացիական օրենսգրքում) ծառայողական գաղտնիքը «միացնում է» առևտրային ու բանկային գաղտնիքներին և դրանք դիտարկում նույն հարթության մեջ՝ երեքին էլ տալով նույն «առևտրային արժեք» բնութագրումը: Չէ՞ որ խոսքն այստեղ մեկ՝ «ծառայողական գաղտնիք» հասկացության մասին է:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը, ըստ էության, ծառայողական գաղտնիքը դիտարկում է առավելապես վարչական իրավահարաբերությունների շրջանակներում, որտեղ սուբյեկտի դերում մի կողմից հանդես է գալիս պետական կառավարման մարմինը՝ որպես ծառայողական գաղտնիք սահմանող, դրա պահպանությունն ու պաշտպանությունն իրականացնող, ծառայողական գաղտնիքների առնչությամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանող մարմին:

Քաղաքացիական օրենսդրությունը ծառայողական գաղտնիքը դիտում է որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ: Այս կապակցությամբ պրոֆ. Տ.Բարսեղյանը նշում է. «Տեղեկատվությունը վաղուց վեր է ածվել ապրանքի և հանդիսանում է պայմանագրային հարաբերությունների հատուկ օբյեկտ: ... Սակայն օրենսդրությամբ կարգավորվում են ոչ թե տեղեկատվության, որպես օբյեկտի, իրավահարաբերություններին մասնակցելու կարգավիճակը, այլ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության գաղտնիության պահպանման հիմնահարցերը»:

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ այսօր մենք, ըստ էության, ունենք երկու «տեսակի» ծառայողական գաղտնիք. մեկը, որը պարունակում է պետական գաղտնիքի մաս կազմող տեղեկություններ և կարգավորվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով, մյուսը, որը չի պարունակում և կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ:

Ինչ խոսք, նշված երկու «տեսակի» ծառայողական գաղտնիքներն էլ կարող ենք հանդիպել հասարակական կյանքում: Յետևաբար՝ ծառայողական բնույթի գաղտնի տեղեկությունների նման տարանջատումն իրական կյանքում հնարավոր ենք համարում: Խառնաշփոթը, մեր կարծիքով, առաջանում է դրանց ոչ ճիշտ անվանման և կարգավորման հետևանքով, երբ, օրենսդրորեն հստակ չսահմանազատելով ծառայողական գաղտնիքների «տեսակները», փորձ է կատարվել դրանք կարգավորել տարբեր օրենսդրական ակտերով: Արդյունքում՝ մեկ «ծառայողական գաղտնիք» հասկացությանը տրվել են երկու հակասական սահմանումներ:

Մեր համոզմամբ՝ նման հակասությունները հարթելու համար նախ և առաջ պետք է մտածել «Ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության առանձին օրենք ընդունելու մասին: Այս դեպքում հնարավոր կդառնա նորովի և ամբողջականորեն սահմանել «ծառայողական գաղտնիք» հասկացությունը, որը կընդգրկի ինչպես պետական գաղտնիքի մաս կազմող տեղեկություններ պարունակող, այնպես էլ մյուս՝ առևտրային բնույթի ծառայողական գաղտնիքները: Այդ դեպքում օրենքն ամբողջությամբ համապատասխան իրավական ռեժիմներ կսահմանի նաև դրանց պահպանության և պաշտպանության համար: Մյուս կողմից՝ «Ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի ընդունմամբ, մեր կարծիքով, ավելի կհստակեցվեն պետական գաղտնիքի մասին օրենքի գործողության շրջանակները, ինչը կդառնա պետական գաղտնիք կազմող տե-

ղեկությունների ավելի հուսալի պահպանության և պաշտպանության գրավական:

Մեկ դիտարկում ևս. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում «ծառայողական գաղտնիք» հասկացությունը բառացիորեն սահմանված է այնպես, ինչպես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 139 հոդվածում: Այստեղ ակնհայտորեն հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ մեր օրենսդրական դաշտում կան սկզբունքային տարբերություններ ՌԴ օրենսդրական դաշտի համեմատ: Այսպես՝ ՀՀ-ում պետական և ծառայողական գաղտնիքների մասին գործում է մեկ օրենք, ծառայողական գաղտնիքի «մայր» սահմանումը տրվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում և ոչ թե քաղաքացիական օրենսգրքում, ինչպես ՌԴ-ում: Մեր կարծիքով, օրենսդիրը զանց է առել այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնությունում քննարկվող ոլորտին վերաբերող օրենսդրության փոփոխությամբ նախկինում «գաղտնի» դրոշմագիրը կրող ծառայողական գաղտնիքները դասվել են պետական գաղտնիքների շարքը⁷, իսկ «ծառայողական գաղտնիք» տերմինն օգտագործվում է միայն առևտրային ոլորտին պատկանող գաղտնիքի իմաստով և կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ:

Կարծում ենք, Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերի պատրաստման վրա աշխատող իրավասու առյաններն ու պաշտոնատար անձինք պետք է հաշվի առնեն այս և նման հանգամանքներն ու խուսափեն իրավական դաշտում արհեստական հակասությունների առաջացումից, ոչ հստակ ձևակերպումներից, հնարավոր իրավական կազուսներից: Ինչպե՞ս կարելի է մեկնաբանել, օրինակ, այն հանգամանքը, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը խոսում է ծառայողական գաղտնիքի պահպանման (դրա տարածման հետևանքով հնարավոր վնասների) մասին, իսկ Հայաս-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

տանի Յանրապետության քրեական օրենսգիրքն ու Յայաստանի Յանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքն ընդհանրապես նման հասկացություն չեն «ճանաչում», այնտեղ դրա հիշատակումն անգամ չկա: Դրա հետ մեկտեղ՝ Յայաստանի Յանրապետության քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված առևտրային և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ապօրինի հավաքման և հրապարակման համար: Այդպիսով, ծառայողական գաղտնիքի պահպանման կարգի խախտումները դրանց համեմատ հանրության համար ավելի նվազ վտանգավորություն են ներկայացնում: Սակայն, մեր կարծիքով, անբացատրելի է, թե ինչու չի նախատեսվում պատասխանատվություն ծառայողական գաղտնիքի պահպանման կարգի խախտումների համար ՅՅ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

Գտնում ենք, որ հետևողականություն պետք է ցուցաբերել նաև օրենքների լեզվի հարցում: Դիցուք, որքանով է ճիշտ նույն օրենքում կամ այլ օրենքներում նույն իմաստով օգտագործել և՛ «տեղեկություն», և՛ «տեղեկատվություն» բառերը: Նման զուգահեռականություններն անհարկի են, ինչը, ի դեպ, ինչպես նշեցինք վերևում, ակնհայտ է նաև «պահպանություն» և «պաշտպանություն» տերմիններն օգտագործելիս: Ավելին, դա կարելի որակել նաև որպես օրենքի պահանջի ուղղակի խախտում: «Իրավական ակտերի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը ...»:

Վերոգրյալն մեկ անգամ ևս ապացուցում է հանրահայտ ճշմարտությունը՝ օրենքները պետք է ներդաշնակ լինեն հասարակական հարաբերությունների ու զարգացումների հետ, սակայն դրանք պետք է ներդաշնակ լինեն նաև միմյանց:

¹ Տե՛ս С.А.Комаров, А.В.Малько, Теория государства и права, М. 2000, էջ 328

² Տե՛ս А.А.Фатьянов, Тайна и право, М.1999, էջ 136-137

³ Տե՛ս Государственная тайна и ее защита в Российской Федерации, под общей редакцией М.А.Вуса и А.В.Федорова, Санкт-Петербург 2007, էջ 28-29:

⁴ Տե՛ս А.А.Фатьянов, Тайна и право, М.1999, էջ 137

⁵ Տե՛ս Гегель, Сочинения, т.6, էջ 12

⁶ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ., Յայաստանի Յանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Եր., 2000, էջ 175-176:

⁷ Ի դեպ, Ռուսաստանի Դաշնության նման վրաստանի Յանրապետությունում և Ադրբեջանի Յանրապետությունում «գաղտնի» դրոշմագիրը կրող նախկինում ծառայողական գաղտնիքները դասվել են պետական գաղտնիքի շարքը:

Տե՛ս՝ <http://www.medialaw.ru>